Վ. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԹԻԿԱ.

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Վ. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԹԻԿԱ.

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ հրատարակչություն
2012

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ
Ժուռնալիստիկայի ֆակուլտետի խորհուրդը

Մենագրությունում ներկայացված են ժուռնալիստական էթիկայի ինքնակարգավորմանը, տեղեկատվության աղբյուրների հետ աշխատանքին, մարդու իրավունքների և հասարակական շահերի ոտնահարմանն առնչվող հիմնախնդիրները:

Ժուռնալիստական էթիկան միջազգային ժուռնալիստիկայում առավել հայտնի է *դեոնթոլոգիա* անվամբ և հաճախ ըմբռնվում է որպես չգրված, սակայն համընդհանուր համաձայնության արժանացած կարգ, ավանդույթ, որով սահմանվում են «պատշաճն» ու «անպատշաճը», «ընդունելի» և «անընդունելի» վարքը: Զանգվածային լրատվամիջոցների էթիկան մասնագիտության պահանջներին համապատասխան ձևավորվող սկզբունքների ու կանոնների ամբողջություն է, իսկ նպատակը՝ ԶԼՄ-ների՝ հասարակության տարբեր խավերի ու խմբերի մեծ մասին, եթե ոչ՝ բոլորին լավագույնս ծառայելը:

Մենագրությունը մեզանում ժուռնալիստական էթիկայի մասին առաջին ամբողջական ուսումնասիրությունն է:

Նախատեսված է բուհերի ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողների, ոլորտը հետազոտողների և լրագրողների համար:

Պատասխանատու խմբագիր՝

բան. գիտ. թեկ., դոցենտ Շ. Մ. Դոյդոյան

© ԵՊՀ հրատարակչություն, 2012

© Վ. Պետրոսյան, 2012

ՆԱԽԱԲԱՆ

Ժուռնալիստիկան երիտասարդ մասնագիտություն է: Սակայն որպես հաղորդակցման միջոց՝ նրա արմատները հասնում են դեռևս հնագույն ժամանակները, երբ հռոմեական կայսրերի արձանագրությունները գրվում, ապա ընթերցվում էին հասարակության համար: Ժամանակի ընթացքում, հատկապես Գուտենբերգի կողմից տպագրության գյուտի, ապա 20-21-րդ դդ. նոր տեղեկատվական տեխնոլոգիաների հայտնագործմամբ ու - կիրառմամբ պայմանավորված՝ ժուռնալիստիկայում լուրջ «հեղաշրջում» կատարվեց. ի հայտ եկան էլեկտրոնային լրատվամիջոցները, և այդպիսով փոխվեցին լրատվություն իրականացնողներին և, հատկապես, լրագրողներին ներկայացվող մասնագիտական պահանջները: Վերջիններիս թվում է նաև ժուռնալիստական էթիկայի սկզբունքներին խստագույնս հետևելը: Պատահական չէ, որ ժուռնալիստական էթիկայի շուրջ բանավեճերը մինչև օրս էլ չեն դադարում:

Որպես առանձին սոցիալական ինստիտուտ՝ ժուռնալիստիկան կարեվոր ու վճռորոշ դեր ունի հասարակությանն իրազեկելու և կողմնորոշելու հարցում: Այս տեսակետից լրագրողի աշխատանքն այնքանով է նըման հոգեբանի աշխատանքին, որքանով գործ ունի մարդկանց զգացմունքների, հույզերի, ի վերջո, ճակատագրերի հետ: Ուստի կարևոր է լրագրողների կողմից իրենց իսկ մասնագիտական էթիկայի սկզբունքներին ու նորմերին հետամուտ լինելը: Խոսելով մեր իրականության մեջ լրագրողի դերի, ԶԼՄ-ների հասարակական պատասխանատվության մասին՝ անհրաժեշտ է ուշադրությունը սևեռել հատկապես լրագրողի բարոյական կերպարի կերտման հիմնախնդիրների վրա: Դրանք լըրագրողը ունակ է և միգուցե ստիպված է լուծել ինքնուրույն, հասարակության հանդեպ մեծ պատասխանատվությամբ: Ճշմարտության, արդարության բարձր սկզբունքները և հանրությանը «ծառայելը» երբեմն բախվում են իրականության հետ և ստիպում լրագրողին ընտրություն կատարել: Ցավոք, կենսական իրողությունների և սկզբունքների միջև երկընտրանքը ոչ միշտ է լուծվում հօգուտ էթիկական ժուռնալիստիկայի, չնայած էթիկայի միջազգային օրենքներն ու սկզբունքները պահանջում են հաշվի առնել այն հատուկ պայմանները, որում գործում են լըրագրողները:

Մամուլը չորրորդ իշխանություն է, պատասխանատվություն է կրում հասարակության առաջ, հետևաբար նրա գերագույն խնդիրն է ծառայել հասարակությանը: Իսկ լրագրողը՝ որպես պետության և հասարակության -

կապող հիմնական օղակ, պատասխանատու է մատուցած տեղեկատվության համար: Այս իմաստով որպես բարձրագույն արժեք կարեվորվում է հենց խոսքի ազատությունը: Անառարկելի է այն փաստը, որ ազատ խոսքի իրավունք տրամադրող օրենքներն իսկապես կարևոր նշանակություն ունեն (հենց միայն օրենքի ընդունումն ինքնին փոխում է մարդկանց գործելակերպը): Բայցևայնպես այն, թե ինչպես են տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, կիրառվում նման պաշտոնական օրենքները, մասամբ կախված է տվյալ երկրի ավանդույթներից, մարդկանց ակնկալիքներից ու վարքից: Ինչպես իրավական դաշտը, այնպես էլ սեփականատիրական կառուցվածքը սահմանում են որոշակի իրավունքներ:

Լրագրողները լսարանին մատուցում են տեղեկատվություն, որի կարիքը նա ունի: Սակայն այլ է խնդիրը, թե ինչ ձևով է դա արվում. հասարակությունը զանգվածային լրատվամիջոցներից ստանու՞մ է ճշգրիտ, հավաստի, անկողմնակալ տեղեկատվություն, թե՞ պարզապես կանգնած է ապատեղեկատվություն ստանալու վտանգի առաջ: Սա ժուռնալիստիկայում ամենավիճելի հարցերից է, որը բավական երկար ու ծավալուն քննարկումների պատճառ է դարձել: Արդյունքում ծնունդ առան լրագրողական էթիկայի տարաբնույթ կանոնագրեր (միջազգային, ազգային, խմբագրական, խմբային, գերատեսչական), որոնց նպատակը մեկն է՝ նպաստել որակյալ ժուռնալիստիկայի զարգացմանն ու լրագրողի բարոյական կերպարի ձևավորմանը:

Կանոնագրերի մի մասը կենտրոնանում է լրագրողի հոգեբանության վրա, մյուսները հռչակում են սկզբունքներ, երրորդներն էլ առաջարկում են պատժամիջոցների ցանկ՝ նախատեսված մասնագիտական բարոյականության այս կամ այն խախտման համար:

Որպես ուսումնասիրության նյութ ընտրելով «Ժուռնալիստական էթիկա. հիմնախնդիրները և զարգացման միտումները արդի հայ մամուլում» թեման՝ փորձ է արվել ընդգծել նախ՝ ժուռնալիստական էթիկայի կարևորությունը, ոլորտը կարգավորող էթիկական տարբեր կանոնագրերի անհրաժեշտությունը, ապա անդրադառնալ լրագրողների կողմից էթիկական նորմերի չարաշահումներին ու բացթողումներին, հնարավոր շտկումներին ու լրացումներին:

Թեև էլեկտրոնային լրատվամիջոցներով մատուցվող տեղեկատվությունն այսօր ավելի օպերատիվ և ազդեցիկ է, այնուամենայնիվ, լսարանը չունի հնարավորություն անմիջապես նկատել եթերային թերություններն ու արձագանքել դրանց: Մինչդեռ, տպագիր խոսքն առավել ունակ է մղել խորհրդածության և տրամաբանելու:

Ժուռնալիստիկան պատկանում է այն մասնագիտությունների թվին, որոնց համար կարևոր և պարտադիր է ոչ միայն մասնագիտական էթիկայի սկզբունքների ընդունումը, այլև դրանց խստագույնս հետևելու պատրաստակամությունը: Այսօր արդիական են ոլորտի ինքնակարգավորման մեխանիզմների, վերահսկողության այլընտրանքային տարբերակների ընդունումն ու կիրառումը:

Ժուռնալիստական էթիկան ենթադրում է ոչ միայն տեսական և գործնական ամուր փոխկապակցվածություն, այլև նպաստում է որակյալ, պրոֆեսիոնալ ժուռնալիստիկայի կայացմանը: Հետևաբար էթիկայի կանոնագրերի, համաձայնագրերի, վարքականոնների ընդունման անհրաժեշտությունն անխուսափելի է: Բայց խնդիրը ոչ թե թղթի վրա այդքան կարևոր սկզբունքների ու կանոնների ձևական ամրագրումն է, այլ դրանց խստագույնս հետևելու պատրաստակամությունն ու պարտավորվածությունը: Ժուռնալիստական էթիկայի սկզբունքների պահպանումը անհրաժեշտ է որակյալ տեղեկատվական դաշտի ստեղծման, պահպանման, լրագրողների բարոյական կերպարի կերտման ու հեղինակության բարձրացման համար:

ԳԼՈՒԽ 1
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ ԻԲՐԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1.1. ԺՈՒՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԹԻԿԱ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Մարդիկ քեզանից ճշմարտություն են ակնկալում: Բայց ինչպե՞ս հասնել դրան, եթե վերջինս թաքնված է մարդկային հարաբերությունների խորքում, և դու քո տրամադրության տակ ունես ընդամենը հաշված ժամեր: Ոչ ոք քեզ ուղղություն ցույց չի տա և չի կիսի քեզ վրա դրված պատասխանատվությունը: Յուրաքանչյուր քայլ քո սեփական որոշումն է, ընտրությունը: Եվ դու դա անում ես՝ առաջնորդվելով քո ներքին ձայնով. մի բան, որ դժվար պահին սկսում է ուժգնորեն հնչել քո իսկ հոգում...[1]:

Զանգվածային լրատվամիջոցները մեծ դեր են խաղում ոչ միայն հասարակական կարծիքի, այլև հասարակության աշխարհայացքի ձևավորման ու զարգացման գործում: Այն, որ լրատվամիջոցներից յուրաքանչյուրը, իսկ վերջին շրջանում էլ հասարակության կենսակերպի անբաժան մասը կազմող, տեղեկատվության յուրատեսակ աղբյուր հանդիսացող ինտերնետը յուրովի է իրականացնում այդ գործընթացը, անվիճելի է: Մեր խնդիրը մի կողմից տեղեկատվության մատուցման էթիկական սկզբունքներին, մյուս կողմից՝ դրանց խախտման դեպքերին անդրադառնալն է: Նախ՝ պարզենք, թե ինչ է ժուռնալիստական էթիկա հասկացությունը և ինչով է տարբերվում բարոյականությունից. չէ՞ որ երբեմնը դրանք շփոթում են:

Ժուռնալիստական էթիկան միջազգային ժուռնալիստիկայում առավել հայտնի է *դեոնթոլոգիա* անվամբ և ունի ռոմանական ծագում: Իսկ բուն հասկացությունն ավելի ընդգրկուն է և հաճախ ըմբռնվում է որպես «չգրված, սակայն համընդհանուր համաձայնության արժանացած կարգ, ավանդույթ, որով սահմանվում են «պատշաճն» ու «անպատշաճը», «ընդունելի» և

[1] **Лазутина Г.В.,** Профессиональная этика журналиста, М., 2002 , стр.3.

«անընդունելի» վարքը»[2]: Եթե ժուռնալիստական էթիկան կիրառելի է կոնկրետ մասնագիտության շրջանակներում և գործում է խիստ մշակված կանոններով, ապա բարոյականությունն ավելի բնորոշ է անհատականությանն առհասարակ, քանզի բարոյականություն ասելով՝ հասկանում ենք «անհատի «անձնական էթիկան», պարտքի զգացումը՝ հիմնված աշխարհընկալման ու կենսափորձի վրա»[3]: Ժամանակի ընթացքում և կենսափորձի հիման վրա մարդու մոտ ձևավորվում են սեփական արարքներին հաշվետու լինելու բարոյական սկզբունքները: Բարոյականություն և էթիկա հասկացությունների աղերսները նույնանում են այնքանով, որքանով առնչվում են ներքին զգացողությամբ պայմանավորված ճիշտ ու սխալի մասին ընկալումներին: Այդուամենայնիվ, շատերին բարոյականություն և էթիկա եզրերը ավելորդ են թվում, և այստեղ է, որ վերջիններիս փոխարինելու է գալիս *որակի վերահսկում* հասկացությունը: Անվանումն ինքնին խոսուն է, և ցանկացած բնագավառում կիրառության դեպքում, այդ թվում և ժուռնալիստիկայում, ենթադրում է որակյալ արտադրանքի ստեղծում: Այս հասկացությունը - ներառում է ինչպես «անձի բարոյական չափանիշներն ու արժեքները, այնպես էլ լրատվական էթիկան»[4]:

Ժուռնալիստիկան պատկանում է այն մասնագիտությունների թվին (բժշկություն, իրավաբանություն), որոնց համար առավել կարևոր են մասնագիտական էթիկայի սկզբունքները: «Գիտությունը, որն ուսումնասիրում է մասնագիտական բարոյականության նրբությունները, կոչվում է «մասնագիտական էթիկա»[5]: Բնականաբար, այն ինքնուրույն գործել չի կարող և անպայմանորեն առնչվում է ընդհանուր բարոյականության սկզբունքներին:

Մասնագիտական բարոյականությունը կարող է հասկացվել որպես շոշափելի ու ամբողջական միայն իր բառապատյանում: Լրագրողի պահվածքում այն դրսևորվում է ամենատարբեր գործողություններով, որոնք ենթակա են քննության սոսկ մասնագիտական էթիկայի տեսանկյունից: Ուստի, *զանգվածային լրատվամիջոցների էթիկան մասնագիտության պահանջներին համապատասխան ձևավորվող սկզբունքների ու կանոնների ամբողջություն է, իսկ նպատակը՝ ՁԼՄ-ների՝ հասարակության տարբեր*

---

[2]**Կլոդ-Ժան Բերտրան**, Մամուլի ազատության և պաշտպանության երաշխիքներ, Լրատվական էթիկայի և պատասխանատվության համակարգեր, Երևան, 2000, էջ 31:

[3] Նույն տեղում, էջ 31:

[4]**Свитич Л. Г.**, Профессия журналист, М., 1996, стр. 45.

[5]**Авраамов Д. С.**, Профессиональная этика журналиста, М., 1999, стр. 3.

խավերի ու խմբերի մեծ մասին, եթե ոչ՝ բոլորին լավագույնս ծառայելը: Ավելին, հասարակության պահանջները լրատվամիջոցների աշխատակիցներին ամրագրվում են համապատասխան կանոնագրերում, որոնց ի վերջո վերագրվում է ողջ մասնագիտական բարոյականությունը:

Եթե հույն փիլիսոփա Սոկրատեսը բարոյականության մասին իր դատողությունները կառուցում էր՝ խոսելով «ներքին ձայն» կոչվածի մասին, այն համարելով «մարդու բարոյական հեղինակության ամենաբարձր հատկանիշը»[6], ապա Արիստոտելն առաջինն էր, ով ստեղծեց «հասարակության մեջ բարոյական հարաբերությունների համակողմանի մի կոնցեպցիա»[7]՝ այդպիսով համակարգելով էթիկայի մասին իր դատողությունները:

Ժուռնալիստիկան ունի իր հիմնավոր պատկերացումները բարոյականության մասին, որոնք ամրագրված են լրագրողական դաշտը կարգավորող միջազգային տարբեր փաստաթղթերում ու կանոնագրերում: Օրինակ՝ ռուս տեսաբան Ավրաամովը, մասնագիտական բարոյականությունը դիտարկելով երկու տեսանկյուններից, առանձնացնում է *«լրագրողի էթիկա»* և *«մասնագիտական էթիկա»* հասկացությունները: Եթե առաջինի դեպքում տեսաբանը դիտարկում է «գիտությունը լրագրողի բարոյականության, մասնագիտական առանձնահատկությունների, իր աշխատանքի բարոյական հատկանիշների մասին»[8], ապա «մասնագիտական էթիկան» նա նույնացնում է մասնագիտական բարոյականության կանոնների ու նորմերի հետ, այլ կերպ ասած՝ լրագրողական կանոնագրերի: Մեր կարծիքով՝ *ժուռնալիստական էթիկան լրագրողի՝ որպես անհատի, բարոյական հատկանիշների և մասնագիտական պահանջների ամբողջական մի համակարգ է: Ասել է, թե՝ կարևորելով ժուռնալիստական էթիկայի էությունը, չպետք է անտեսվեն համամարդկային բարոյական արժեքները, որոնց էլ վերագրվում է ողջ մասնագիտական բարոյականությունը:* Եթե որպես այդպիսի արժեք ընդունենք պատվի, խղճի և պատասխանատվության գիտակցումը, արդարացի կլինենք այնքանով, որքանով վերջիններս մարդկության գոյատևման հիմնական ուղենիշերն են:

---

[6]**Лазутина Г.В.,** Профессиональная этика журналиста, М., 2002, стр. 6.

[7]**Хоружий С.С.,** Этика науки, М., ИФРАН, 2007, с. 85.

[8]**Авраамов Д. С.,** Профессиональная этика журналиста, М., 1999, стр. 6.

Որպես առանձին սոցիալական ինստիտուտ՝ ժողովրդավարական մյուս ինստիտուտներից ժուռնալիստիկան տարբերվում է նրանով, որ վերջինի կարգավիճակը խարսխված չէ հանրային այնպիսի պայմանագրի վրա, որով մարդիկ իրենց պատկանող իշխանությունը փոխանցում են այդ ինստիտուտներին՝ նշանակման, ընտրությունների կամ էլ գործունեությունը կանոնակարգող այլ օրենքների միջոցով: Ավելին, ժուռնալիստական գործունեությունն ինքնին ենթադրում է շոշափել, գործ ունենալ շատերի հետաքրքրությունների հետ, ասել է, թե՝ ընդարձակ լսարանին ներկայացնել կյանքի ամենատարբեր ոլորտներին առնչվող դեպքերն ու իրադարձությունները: Թեմայի ընտրության, աղբյուրների որոնման, փաստերի հավաքման, հրատարակության նպատակի կոնկրետացման, հերոսին կամ իրավիճակը բնութագրելու գործում որոշակիորեն արտահայտվում է լրագրողի վերաբերմունքը: Նման սուբյեկտիվ վերաբերմունքը ոչ միայն չպետք է շեղի, այլև պետք է օգնի լսարանին ճիշտ ընկալել իրավիճակը: Հետևաբար սեփական վարկանիշն ու անկախությունը պահպանելու համար լրատվամիջոցները պետք է լրջորեն գիտակցեն, որ իրենց առաջնահերթ խնդիրը հասարակության հա- մար որակյալ ու ճշգրիտ տեղեկատվական դաշտ ապահովելն է: Եվ խոսել մարդու ունակությունների մասին լրագրողի մասնագիտության տեսանկյունից անթույլատրելի է՝ առանց հաշվի առնելու նրա բարոյական որակները, որոնք այս մասնագիտության համար պակաս կարևոր չեն, քան մասնագիտական որակավորումն ու համապատասխան գիտելիքները:

Փաստորեն, այստեղ մասնագիտական պատրաստվածությունը միշտ հանդես է գալիս իբրև բարոյական դրսևորում և հակառակը: Չէ՞ որ հենց ԶԼՄ-ները, հենվելով ճշմարտացիության վրա, օգնում են լսարանին կողմնորոշվել շրջապատող, քիչ թե շատ ծանոթ, անընդհատ փոփոխվող, նոր պայմաններ թելադրող աշխարհում: Մամուլի գործունեությունը պետք է կանոնակարգվի, որպեսզի վերջինս կարողանա իրագործել իր կոչումը և լիարժեք դրսևորել սեփական գործառույթները: Այդ կերպ չեն վնասվի նաև այն անձանց օրինական շահերը, ում հետ գործ ունի լրագրողը: Այստեղ էլ հենց հարց է ծագում, թե որտե՞ղ է այդ կանոնակարգման սահմանը, և ի՞նչ կլինի ժուռնալիստական գործունեության ազատության հետ: Լրագրողի ազատությանն առնչվող խնդիրներն ի հայտ են գալիս թե՛ զանգվածային լրատվամիջոցների զարգացման և թե՛ քաղաքական կյանքին վերջիններիս ակտիվ մասնակցության պարագայում: Ժամանակին Հեգելը «ազատությունը» բնութագրել է հետևյալ կերպ. «Ազատություն կոչվածը, ասել է, թե՝ ցանկացած երևույթի մասին անսահմանափակ գրելու և խոսելու հնարա-

վորությունը, բնորոշ է անգրագետ, պարզունակ ու պրիմիտիվ պատկերացմանը»[9]: Այսօր, կապված որոշակի սահմանափակումների (այդ թվում՝ գրաքննության) վերացման հետ, ազատ ընտրելու լրագրողի հնարավորություններն ընդլայնվել են: Այդպիսով, ազատությունը լրագրողին տրվում է ոչ միայն որպես ընտրելու օբյեկտիվ հնարավորություն, այլև որպես վերջինիս ճիշտ դրսևորման սուբյեկտիվ կարողություն:

Անհատական գիտակցությունը մասնագիտական բարոյականությունն ընկալում է ոչ թե ինչ-որ մի բացարձակ եզրույթ, այլ ընդհակառակը, նրա չափանիշները համադրում է բարոյականության ընդհանուր պահանջներին, որոնք անհատը յուրացնում է՝ նախքան լրագրողի մասնագիտությանն առնչվելը: Իսկ ահա մասնագիտական բարոյական նորմերի ու արժեքների ընկալումը տեղի է ունենում միայն սեփական փորձի հիման վրա: Ի վերջո, ԶԼՄ-ների նպատակը չի սահմանափակվում զուտ այդ խնդրի լուծմամբ:

Տեղեկատվություն ընտրելիս և այն հանրությանը ներկայացնելիս զանգվածային հաղորդակցության միջոցները ձգտում են դիտողի, լսողի, ընթերցողի գիտակցության մեջ ձևավորել իրենց համար ցանկալի գաղափարներ, հասարակական երևույթների ու գործընթացների վերաբերյալ գնահատականներ, դրդել նրանց գործողությունների կամ հորդորել ձեռնպահ մնալ որոշակի գործելակերպից: Բայց ամբողջ խնդիրն այն է, թե ինչ ձևով են դա անում: Արդյո՞ք այն չի վնասում որևէ մեկի շահերին, պահպանվու՞մ են մասնագիտական էթիկայի կանոնները, չի՞ ոտնահարվում խոսքի, մամուլի ազատությունը, որը սահմանափակելն ինքնին կնշանակի խոչընդոտել ճշմարտության բացահայտմանը, ժողովրդավարական որոշումների ընդունմանը և նպաստել բըռնությանը: «Ինչպես խոսքի ազատության իրավունքը, այնպես էլ դրա սահմանափակումները պետք է սահմանվեն օրենքով՝ կամայական գործողությունները բացառելու համար: Դրանք միաժամանակ պետք է պաշտպանեն և քաջալերեն քաղաքացիների և լրատվամիջոցների անարգել, առողջ ու բացահայտ երկխոսության իրավունքը: 20-րդ դարավերջին ժողովրդավար հասարակություններում զարգացավ մի հիմնական գաղափար՝ ազատ միտքը պետք է առավելագույնս պաշտպանված լինի պետության կողմից»[10]:

---

[9]Этика СМИ, М., 2003, стр. 88.

[10]Նույն տեղում, էջ 14:

Կարևորելով ժուռնալիստական էթիկայի կանոնագրերի դերը՝ թերևս հնարավոր չէ անտեսել դրանց առաջացման նախադրյալները: Ինչու՞ 19-րդ և 20-րդ դարերում Արևմուտքում առաջին պլան մղվեց լրագրողների վարքագծի վերահսկումը: Բանն այն է, որ այս ժամանակաշրջանում Եվրոպայում և Միացյալ Նահանգներում առաջացան տպագիր մամուլի խոշոր մոնոպոլիաներ, որոնք պարբերականներն օգտագործում էին՝ ազդելու հասարակական գիտակցության վրա: Խոսքի մոնոպոլիան ինչ-որ ձևով կանխելու և ընթերցողներին դրանից հետ պահելու լրագրողների ջանքերն արդարացան մասնավորապես մասնագիտական էթիկայի կանոնագրերի մշակմամբ: Այդպիսի կանոնագրեր 1920-ականներին արդեն ընդունվել էին շատ երկրների լրագրողական կազմակերպությունների կողմից:

Թեև «1896 թ. Գալիցիայում լեհ լրագրողներն ստեղծեցին մասնագիտական պարտականությունների հատուկ ցանկ և հռչակեցին պատվո դատարանի գոյությունը»[11], այնուամենայնիվ, պայմանականորեն էթիկայի «գրավոր առաջին կանոնագիրը համարվում է *«Վարքագծի խարտիան»*՝ ընդունված 1918 թ. Ֆրանսիայում լրագրողների ազգային սինդիկատի կողմից: Ֆինն հետազոտող Լուրե Բրունի համոզմամբ՝ իրականում էթիկայի կանոնագիրը վավերացվել է Շվեյցարիայում 1900 թ., թեև վերջինս այնքան էլ լայն տարածում չի գտել: Նույն թվականին տարբեր հրատարակիչների ու լրագրողական կազմակերպությունների նախաձեռնությամբ կազմակերպվեցին լրագրողների հանդիպումներ միջազգային մասշտաբով: Հանդիպումներից մեկի ժամանակ, որ տեղի ունեցավ 1921 թ. Հոնոնուլում, ամերիկացի Ջեյմս Բրոունն առաջարկեց ընդունել լրագրողի վարքագծի միջազգային կանոններ, որոնք կազմել էր անձամբ և կոչել *«Ժուռնալիստական պրակտիկայի էթիկայի կոդեքսը և չափանիշները»*[12]: Թեև առաջարկը չընդունվեց, այնուամենայնիվ, կոնֆերանսի ժամանակ հնչած տարբեր առաջարկների հետ այն հիմք հանդիսացավ, որպեսզի շատ երկրներ ընդունեին լրագրողական էթիկայի իրենց սկզբունքները:

Նմանատիպ կանոնագիր՝ *«Ժուռնալիստիկայի կանոններ»* անվամբ, ստեղծվեց 1923 թ. ԱՄՆ-ում տպագիր օրգանների խմբագիրների ամերիկյան

---

[11] **Կլոդ-Ժան Բերտրան**, Մամուլի ազատության և պաշտպանության երաշխիքներ, Լրատվական էթիկայի և պատասխանատվության համակարգեր, Երևան, 2000, էջ 52:

[12] **Авраамов Д. С.,** Профессиональная этика журналиста, М., 1999, стр. 49.

ընկերության կողմից: Այն գործում է առայսօր: Ընկերությունը պարբերաբար հրատարակում է բյուլետեն, ուր հատուկ ուշադրություն է դարձվում էթիկական չարաշահումների քննարկմանը: Եթե առաջին համազգային կանոնագիրն ընդունվեց «Ֆրանսիայում 1918 թ. լրագրողների ազգային միության կողմից», ապա «առաջին միջազգային կանոնագիրը երևան է եկել 1926թ.՝ «Ինտեր Ամերիքն Փրես Ասոսիեյշընն» կազմակերպության նախաձեռնությամբ»[13]:

Ժուռնալիստական էթիկայի հանդեպ հետաքրքրությունը մեծացավ հատկապես 1970-ական թվականների վերջերին, և դրանում շահագրգիռ էին ՅՈՒՆԵՍԿՕ-ն, Եվրոպայի Խորհուրդը, Լրագրողների միջազգային դաշնությունը, Մամուլի միջազգային ինստիտուտը:

Թեև կար ժամանակ, երբ «խոսվում էր լրատվամիջոցների էթիկայի մասին, ԶԼՄ-ների ներկայացուցիչներն արձագանքում էին արհամարհական լռությամբ կամ որևէ ցասկոտ դիտողությամբ, այսօր գնալով շատերն են հետաքրքրվում լրագրողական էթիկայի խնդրով: Այդ են վկայում ոլորտն ուսումնասիրող գրքերի»[14], առանձին հոդվածների լույս ընծայումը, միջազգային մասշտաբներով անցկացվող գիտաժողովներն ու տարբեր սեմինար-հանդիպումները: Եվ պատահական չէ, որ տեսաբան-ժուռնալիստներից շատերը խնդրի կարևորությունը պայմանավորում են մի կողմից՝ որոշ լրագրողների մասնագիտական պարտականությունների կոպիտ խախտումներով (անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոտնահարում), մյուս կողմից՝ տարբեր երկրներում առկա քաղաքական կյանքի ճգնաժամային իրավիճակներում լրատվամիջոցների և կառավարության միջև անցանկալի հարաբերությամբ, խոսքի ազատությանը սպառնացող օրենսդրական սահմանափակումներով, էլեկտրոնային լրատվամիջոցներով չքողարկված բռնության և իրական դեպքերի հեռարձակմամբ և այլն:

Չնայած մեզանում ժուռնալիստական էթիկայի հանդեպ հետաքրքրությունը բավականին ուշ ի հայտ եկավ (հետխորհրդային շրջանում), այնուամենայնիվ, ոլորտին առնչվող բազմաբնույթ միջոցառումների կազմակերպման ու անմիջական մասնակցության պատրաստակամություն են ցուցաբերում նաև հայաստանյան լրագրողական տարբեր կառույցներն ու

---

[13] **Засурский Я. Н., Вартанова Е. Л., Засурский И. И., Рихтер А. Г.,** Средства массовой информации постсоветской России, М., 2002, стр. 25.

[14] Նույն տեղում, էջ 30:

հասարակական կազմակերպությունները, լրատվամիջոցների և բուհական հաստատությունների ներկայացուցիչները:

ԽՍՀՄ փլուզումից հետո հասարակական-քաղաքական, տնտեսական, գիտակրթական կյանքում արձանագրվեցին բեկումնային տեղաշարժեր. ժուռնալիստիկան, «անկախանալով» պետական կառույցներից, նոր ձևաչափ ստացավ: Անհամեմատ լայնացավ տեղեկատվական դաշտը, նախկին պետական գրաքննությանը փոխարինեցին խմբագիրների ուղղորդված հսկողությունն ու ստվերային գրաքննությունը, լրագրողներն սկսեցին ձեռք զարնել այնպիսի թեմաների, որոնք նախկինում տաբու էին կրում իրենց վրա: Տեղին կլինի նշել տեսաբան Մաքքյուելի այն միտքը, թե՝ «Լրատվամիջոցներին վերապահված է զարգացման երկու հիմնական ուժ. մի կողմից ձգտում են շահույթ ստանալ, իսկ մյուս կողմից՝ իշխանության հասնել հասարակության մեջ, որի հետ կապված են անքակտելիորեն»[15]:

Մեր հանրապետության անկախացման ամբողջ շրջանն ազատ մամուլի սկզբնավորման և կայացման շրջան է, չնայած անցած 17 տարիների ընթացքում ձեռքբերումներն ու ձախողումները քիչ չեն: Ասենք, եթե 1990-91 թթ. նոր պարբերականների ծնունդի, հների վերակառուցման տարիներ են, ապա 1991-1992 թթ. ընթացքում հրատարակվել են մոտ 96 անուն թերթ ու ամսագիր (ներառյալ այլալեզու պարբերականները): Եվ պատահական չէ, որ անկախության հաստատմանը հաջորդած ամիսներն ու հենց 1992 թ. կարելի դիտել իբրև Երրորդ հանրապետության մամուլի սկզբնավորման տարիներ: «Թվում էր՝ ձեռքբերումների վերընթացը կշարունակվի հաջորդ տարիներին ևս, բայց էներգետիկ արհեստական ճգնաժամը, Ղարաբաղյան պատերազմը, տպագրական թղթի պակասն ու թանկացումը, ՀՀ առաջին նախագահի 1994 թ. դեկտեմբերի չարագուշակ ելույթը՝ անկախությանն անհարիր բռնության աննախադեպ գործողություններով, կասեցրին զարգացման դինամիկան՝ այն պահելով մոտավորապես 1992 թ. մակարդակին: Սրանք նորացված մամուլի «լճացման» տարիներն են: Նոր «բումը» կապվում է պատերազմի դադարի, էներգետիկ ճգնաժամի «հաղթահարման» հետ. 1996 թ. հրատարակությունների թիվը միանգամից կրկնապատկվեց՝ հասնելով 106-ի: Ձևավորվում են մասնավոր հեռուստառադիոընկերությունները, որոնց գոյությունը, անկախ այս կամ այն հատվածում կը-

[15] **McQuail D.**, McQuail`s Mass Communication Theory/4th Edition, London, Sage, 2000, p. 192.

ռած «մետամորֆոզներից», արգասաբեր եղան ինֆորմացիոն դաշտի ձևավորման ու կայացման համար»[16]:

Ծնունդ առան տասնյակ լրատվամիջոցներ, որոնք փորձեցին յուրովի լուսաբանել տեղի ունեցող իրադարձությունները: Անցումային շրջանում ղարաբաղյան հակամարտության և երկրում ստեղծված քաղաքական իրավիճակի լուսաբանումն անհրաժեշտություն էր, քանզի հասարակությունը կարիք ուներ կատարվող դեպքերի մասին լիարժեք տեղեկատվության: Անկախացած Հայաստանում նոր մամուլի կայացման գործընթացն, այսպիսով, կարելի է բնութագրել հետևյալ կերպ. գոյատևման պայմաններն էին որոշում գիտակցությունը, աշխարհընկալումը, քանզի եղած և նոր լրատվամիջոցները կանգնել էին լինել-չլինելու իրավիճակի առաջ:

Այս բախտորոշ ժամանակաշրջանում մամուլի նոր դերն ու խնդիրները, պատասխանատվությունը սահմանվում են երկրի օրենսդրությամբ: Բազմաթիվ օրենքների հետ 1991 թ. կյանքի կոչվեց նաև «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքը, որը որոշակիություն մտցրեց լրատվամիջոցների գործունեության մեջ:

90-ականների վերջերին, սակայն, պատկերը կտրուկ փոխվեց («պայմանականորեն հենց 1998 թ. են համարում նոր մամուլի կայացման ժամանակաշրջան »[17]):

---

[16] **Անանյան Գ.,** Արդի հայ մամուլի լույսն ու ստվերը, Երևան, 2001, էջ 8:

[17] Ժուռնալիստիկա, Տեսության և պատմության հարցեր, Պրակ Ա, Երևան, 2000, էջ 26:

1.2. ԶԼՄ-ՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Միշտ ափսոսել եմ, որ գոյություն չունի լրագրողների յուրատեսակ գիլդիա, որի խնդիրը կլիներ մասնագիտության պահանջների պաշտպանությունը և այդ ազատությունից անհրաժեշտաբար բխող պարտականությունների վերահսկումը[18]:

Ալբեր Քամյու

Լրագրողների պատասխանատվությունը ընթերցողների, ունկնդիրների և, առհասարակ, հասարակության մեջ ոչ միայն ԶԼՄ-ների նկատմամբ վստահության հաստատման գրավականն է, այլև երաշխիքը: Բայց այդ պատասխանատվության գիտակցումն ու ընդունումը շատ դեպքերում անտեսվում է: Առանց այդ վարկի՝ լրագրողներին չեն վստահի, իսկ վերջիններս էլ չեն կարողանա իրագործել հասարակության արթուն պահապանի իրենց դերը: *Գործում էթիկական սկզբունքներն ու ծեվանմուշները, հարաճուն գիտակցությունն ու համապատասխան կրթությունը, խմբագրական անկախությունն* այն հիմնական լծակներն են, որոնցով լրատվամիջոցները կարող են ազատ, անկախ ու վստահելի դառնալ: Նշվածներն ավելի կարևոր են, քան այն օրենքները, որ նախատեսված են սահմանելու լրագրողների պատասխանատու վարքն ու կանոնները:

Էթիկական ժուռնալիստիկայի հաստատման համար խիստ կարևոր են ինքնակարգավորման մեխանիզմները: Հաշվի առնելով հասարակության վրա լրատվամիջոցների օրեցօր մեծացող դերը՝ խիստ կարևորվում է լրատվական միջավայրի էթիկական ինքնակարգավորման խնդիրը: Լրագրողը միշտ կողմնակի հայացքների կիզակետում է. չէ՞ որ նրա աշխատանքի արդյունքը քննում են թե՛ հասարակության անդամները, թե՛ իր գործընկերները: Քիչ չեն այն դեպքերը, երբ ցանկությունները չեն համապատասխանում պարտադրված ընդհանուր պահանջներին ու նորմերին, միջոցներն էլ հակազդում են նպատակներին: Հետևաբար հակասական այս իրավիճակում դժվար է կանխատեսել, թե վարքի որ կարծրատիպն է ընդունելի անհատի համար: Ոչ ոք ի վիճակի չէ գործել խելամիտ, քանի դեռ չի բացահայտել սեփական «ես»-ի պահանջները: Իսկ անհատի կենսագործունեության կարևոր նախապայմանը հենց ինքնաճանաչումն է,

[18] **Կլոդ-Ժան Բերտրան**, Մամուլի ազատության և պաշտպանության երաշխիքներ, Լրատվական էթիկայի և պատասխանատվության համակարգեր, Երևան, 2000, էջ 30:

այլ կերպ ասած՝ անձի կողմից սեփական գործողությունների, ապա դրանց հետևանքների, բարոյական կերպարի ու հետաքրքրությունների, կյանքում իր սեփական տեղի ու դերի ճանաչումն ու գնահատումը: Եթե սովորական անհատի համար ինքնաճանաչման մակարդակը կախված է նրանից, թե իր գործունեության մեջ ինչ տեղ է զբաղեցնում հասարակական պարտք հասկացությունը, ապա լրագրողի պարագայում այդ փոխհարաբերությունն էականորեն բարդանում է:

Ժուռնալիստական գործունեության երկակիությունը, ներքին տարաձայնությունները լրագրողին կանգնեցնում են երկընտրանքի առաջ, որն ամենևին այդ ճանապարհով լուծելի չէ: Ինչու՞: Իրականում լրագրողի հասարակական պարտքը ներկայանում է տարբեր դրսևորումներով՝ որպես մասնագիտական և ծառայողական պարտք: Սակայն այս երկուսը միշտ չէ, որ փոխհամաձայնեցված են: Ասենք, եթե լրագրողն իր հրապարակմամբ նպաստում է հասարակության մեջ կառուցողական հարաբերություններ ձևավորելուն՝ բավարարելով և՛ ընթերցողի պահանջները՝ ճշգրիտ տեղեկատվություն ստանալու առումով, և՛ խմբագրի ցանկությունները, ապա այս պարագայում խոսել հասարակական պարտքի վերոնշյալ երկու ձևերի միջև տարաձայնության մասին անիմաստ է: Սակայն կոնֆլիկտն անխուսափելի է այն դեպքում, եթե խմբագրի կարծիքը քննարկվող հիմնախնդրի մասին համահունչ չէ զանգվածային լսարանի հետաքրքրություններին: Այս հանգամանքը բավականին լուրջ է, և ցանկացած նման իրավիճակում լրագրողն ստիպված է ինքնուրույն որոշում կայացնելու: Ուստի հաշվի առնելով ինքնակարգավորման անհրաժեշտությունը՝ լրագրողները կանգնում են իրական արժեքների ինքնուրույն ընտրության առաջ, ասել է, թե՝ հասարակական պարտքի որ տեսակն է համապատասխանում բարոյական ընդհանուր չափանիշներին՝ մասնագիտակա՞ն, թե՞ ծառայողական պարտքը:

Գործնականում լրագրողի ինքնակարգավորման գործընթացը ենթադրում է «**ինքնակազմակերպում, ինքնատիրապետում և ինքնաղեկավարում**: Եթե ինքնակազմակերպման շնորհիվ որոշակի ռազմավարություն է մշակվում ժուռնալիստական նյութի պատրաստման համար, ապա ինքնատիրապետման ֆունկցիան այս կամ այն խնդրի լուծման որակական ստուգումն է, հնարավոր տարաձայնություններից խուսափելու ձգտումը: Տարաձայնությունների բացառումն էլ հնարավոր է դառնում շնորհիվ

ինքնաղեկավարման»[19]: Ինքնակարգավորումը մի կողմից ենթադրում է լրագրողների գործունեության անկախություն, հատկապես երկրում ի հայտ եկած քաղաքական ճգնաժամի պայմաններում, իսկ մյուս կողմից այդ անկախության հետևանքով առաջ է գալիս լրագրողի պաշտպանվածության հարցը: Սա ամենակարևոր պահանջն է, որը կարծես շատ դեպքերում մոռացվում է կամ, առհասարակ, անտեսվում:

Լրագրողի գործունեության ինքնաղեկավարումը ենթադրում է ոչ միայն սեփական վարքը կարգավորող բարոյական սկզբունքների ու նորմերի գիտակցում, այլև հասարակության տարբեր շերտերի հանդեպ հարգանք, միջանձնային բարոյական վերաբերմունքի դրսևորում: Եթե այսօր այդքան շատ է կարևորվում լրագրողի ինքնաղեկավարումը, ապա նույնը չի կարելի ասել խորհրդային ժամանակաշրջանի մասին, երբ միակուսակցության գաղափարախոսության պայմաններում չէր կարող խոսք լինել ազատ մամուլի, ազատ մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու մասին: Կոմունիստներն այն կարծիքին էին, որ ԶԼՄ-ների վրա հսկողություն պետք է սահմանի միայն պետությունը: Այս պարագայում ազատ մամուլի մասին երազելն անգամ անհնար էր: Չէ՞ որ լրատվամիջոցների ֆինանսավորումն ամբողջությամբ պետությունն էր իրականացնում: Թեև ժամանակները փոխվեցին, և ծայրահեղ ազատականները կարծում էին, որ շուկան է պայմանավորում լրատվամիջոցների լավ աշխատանքը, մրցակցությունը, այնուամենայնիվ, ակընհայտ է պետության դերակատարությունը տարբեր գործընթացների իրականացման ու վերահսկման հարցում:

Բազմաթիվ օրենքների միջոցով ապահովվում են տնտեսական մրցակցությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը (չնայած օրենսդրական շատ դրույթներ ոչ միշտ են լիարժեք ու կատարյալ): «Իսկ զանգվածային լրատվամիջոցների առումով արտաքուստ թվացյալ «անկախության» իրավիճակում պետությունն ստեղծում է այնպիսի պայմաններ, որ լրագրողները և լրատվամիջոցների սեփականատերերը իրենց վրա կրեն «սոցիալական պատասխանատվություն». ժուռնալիստներն իրենք պետք է շահագրգիռ լինեն մամուլի գծով խորհուրդների ստեղծմանը, հակառակ դեպքում նման կառույցներ կարող է ստեղծել հենց

[19]Самоуправления журналиста, М., 2001, стр. 14.

պետությունը»[20]: Ինքնակարգավորման համակարգում կարևոր դերակատարություն պետք է ունենա հենց դեոնթոլոգիան՝ ժուռնալիստական էթիկան, որը, հանդիսանալով «որակի վերահսկիչ», լրագրողների և լրատվություն իրականացնողների՝ հասարակությանը ծառայելու լավագույն երաշխավորն է:

Սակայն ժուռնալիստական էթիկայի հաստատման և ինքնակարգավորման գործընթացում մեծ դեր են խաղում հենց ժուռնալիստական կազմակերպությունները, որոնք իրենց գործունեության ընթացքում բացարձակ ազատ պետք է լինեն պետության, չինովնիկների ու երրորդ անձանց միջամտությունից: Կարծում ենք՝ նմանատիպ կազմակերպությունների գործունեության համար նպաստավոր պայմանների ապահովումը կկրճատի լրագրողների կողմից էթիկական տարբեր սկզբունքների խախտումների և արդեն իրավական հարթությունում դրանց հետեվանքով առաջացած տարաձայնությունները հարթելու դրսևորումները: Եվ, որ ամենակարևորն է, վստահությունն այդպիսի կազմակերպությունների նկատմամբ պետք է լինի այն մակարդակի վրա, որ լրագրողներին տրված ազատությունը չվերածվի սանձարձակության:

Մեկ նկատառում. մի կողմից գործունեություն իրականացնելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը, մյուս կողմից ինքնակարգավորող կառույցների հանդեպ վստահության ձեռքբերումը ցանկալի արդյունք չեն ունենա, եթե նման մարմինները չհամագործակցեն ոլորտին քաջատեղյակ անձանց հետ: Այսինքն՝ գործող լրագրողների, իրավաբանների հետ համատեղ պետք է մշակվեն ժուռնալիստական էթիկայի համապատասխան դրույթները և նախատեսվեն դրանց սահմանափակումները: Սա կնպաստի լրագրողական միջավայրում հասարակական պատասխանատվության բարձրացմանը: Իզուր չէ, որ ժողովրդավարական հասարակարգում ոչ մի սոցիալական ինստիտուտ, այդ թվում՝ ժուռնալիստիկան չի կարող գոյատևել ու զարգանալ, եթե չկա կայուն իրավական բազա: Լրագրողը կշահի, եթե գործի օրենսդրական և իրավական նորմերին համապատասխան: Հակառակ պարագայում նա կարող է հայտնվել այնպիսի ոչ ցանկալի իրավիճակում, երբ հասարակությանը ստույգ, հավաստի տեղեկատվություն տրամադրելու փոխարեն կիրականացնի այդ

[20]**Монро Прайс, Питер Круг**, Благоприятная среда для свободных и независимых средств массовой информации, М., 2001, стр. 43.

նույն հասարակության համար անընդունելի տեղեկատվական «արարքներ»:

Լրագրողական միջավայրում ինքնակարգավորումը բավական լուրջ, կարևոր ու անհրաժեշտ գործընթաց է: Այն պնդումը, որ լրագրողների գործունեությունը պետք է կարգավորվի հենց պետության կողմից, պայմանավորված է լրագրողների ոչ ճշգրիտ, մտացածին, պատվիրված հրապարակումների առկայությամբ: Սա մի կողմից հասկանալի է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այսօր, ցավոք, կան լրագրողներ, ովքեր «հակում» ունեն նմանատիպ հրապարակումներ հեղինակելու: Միևնույն ժամանակ խոսքի և մամուլի ազատությունը բացարձակ չէ, և բոլոր իրավական համակարգերում, ելնելով պետական, կոլեկտիվ և մասնավոր շահերից, թույլատրելի է լրատվամիջոցների հաղորդագրությունների, գործունեության նկատմամբ որոշակի հսկողությունը:

1.3. ԶԼՄ-ՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ, ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Լրագրողի գործունեությունը կարգավորելիս անհրաժեշտ է որոշակի հսկողություն: Այն իրականացվում է ինչպես ուղղակի կարգավորմամբ (սահմանադրական, օրենսդրական տարբեր դրույթներով, դատական իշխանությունների կողմից), այնպես էլ լրագրողական կառույցների անմիջական նախաձեռնությամբ: Վերջինի դեպքում կարևորվում են ինչպես ժուռնալիստական վարքականոնների կամավոր ընդունումը, այնպես էլ ինքնակարգավորման հատուկ մեխանիզմների ձևավորումը, դրանք են՝ ***մամուլի խորհուրդները, մամուլի օմբուդսմենը, լրագրողական կազմակերպություններն ու լրագրողական միությունները, խմբագրական կոլեգիան, էթիկայի կանոնագրերը:***

Այս մեխանիզմներից յուրաքանչյուրի նպատակն է՝ խթանել լսարանին որակյալ, ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու լրատվամիջոցների և լրագրողների շահագրգռվածությունը: Նշվածներից առավել տարածված և գործող մեխանիզմներն են՝

ՄԱՄՈՒԼԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Նմանատիպ խորհուրդներ գործում են աշխարհի ոչ բոլոր երկրներում: Զբաղվում են հասարակության ներկայացրած բողոքների քննմամբ՝ կապված այս կամ այն հրապարակման հետ, և անհրաժեշտության դեպքում համապատասխան որոշում են ընդունում: «Բոլոր լրագրողների նկատմամբ, ովքեր խախտել են մասնագիտական էթիկայի այս կամ այն սկզբունքը, մամուլի խորհուրդը կարող է տարբեր պատժամիջոցներ կիրառել՝ հրապարակայնորեն պարսավել և հերքման պահանջ ներկայացնել»[21]: Օրինակ՝ օրենքի երկիր համարվող Շվեդիայում մամուլի ինքնակարգավորման ավանդույթը բավական հին է: Այստեղ 1916 թ. հիմնվել է Եվրոպայում առաջին Մամուլի գործերի խորհուրդը, որը գործում է «կամավոր հիմունքներով և ֆինանսավորվում է Լրագրողների միության և

[21] www.poynter.org

թերթարդյունաբերության կողմից»[22]: Խորհրդի անդամների կազմում առավել կարևոր պաշտոն է զբաղեցնում մամուլի օմբուդսմենը, որի խնդիրն է՝ «կոնֆլիկտային իրավիճակներում միջնորդ լինել հասարակության ու մամուլի միջև և առանձին մարդկանց օգնել պաշտպանելու սեփական վարկն ու մասնավոր կյանքը՝ պահանջելով հրապարակման ուղղում կամ հերքում»[23]: Խորհուրդը մեծ վստահություն է վայելում մամուլի և հասարակության շրջանում: Այն նպաստում է ինչպես լրագրողական էթիկայի հարցերի քննարկմանը, այնպես էլ էթիկայի չափորոշիչների հաստատմանն ու ամրագրմանը: Ի տարբերություն Շվեդիայի՝ Նորվեգիայում գործող Մամուլի խորհրդի լիազորությունները թեև հիմնականում նույնն են, այնուամենայնիվ, խորհուրդը հստակ դիրքորոշում ունի բողոքների ընդունման հարցում: Ասենք՝ բողոքը չի ընդունվում, եթե «գործն արդեն գտնվում է դատարանի վարույթում կամ եթե տուժողը մտադիր է դիմել դատարան»[24]:

Սա կարելի է բացատրել նրանով, որ այս պարագայում կասկածի տակ կդրվի խորհրդի գործունեությունը, և բողոքը քննելն անիմաստ կդառնա: Ավելին, մամուլը հակված կլինի հաշվի չառնել խորհրդի որոշումը: Սակայն սա չի նշանակում, թե հայցվորը կարող է բավարարվել միայն խորհրդի որոշմամբ: Նա կարող է դիմել դատարան, եթե դժգոհ է խորհրդի որոշումից:

Առհասարակ, շվեդական, նորվեգական, հոլանդական խորհուրդները համարվում են առավել ազդեցիկները, քանզի համալրված են մամուլի հետ կապ չունեցող անձանցով: Դրանց նախագահները հիմնականում իրավաբաններ են: Իր գործունեությամբ աչքի է ընկնում նաև ավստրալիական մամուլի խորհուրդը: Մյուսներից տարբերվում է նրանով, որ բողոքներ է ընդունում այն մարդկանցից, որոնց ուղղակիորեն չի վերաբերում հրապարակված տվյալ հոդվածը, ասել է, թե՝ մեկ ուրիշը, ով ճանաչում է հոդվածի հերոսին և տեսնում է, որ վիրավորվում է վերջինիս պատիվը, անունը, կարող է բողոք ներկայացնել: «Ի տարբերություն Մեծ Բրիտանիայի խորհրդի, չի սահմանափակում իր գործունեության շրջանակները միայն բողոքների վերաբերյալ որոշումներ կայացնելով: Խորհուրդը զբաղվում է նաև մամուլի ազատության հետ կապված խնդիրներով, հանդես է գալիս որպես ներկայացուցիչ այն հարցերի կապակցությամբ, որոնք առնչվում են

[22] «Արտիկլ 19», Ազգվածային լրատվության միջոցներ, Օրենքներ և պրակտիկա, Երևան, 1999, էջ 119:
[23] Նույն տեղում, էջ 120:
[24] www.evartist.narod.ru

զրպարտությանը, տեղեկատվության ազատությանը, մասնավոր կյանքի իրավունքին, դատարանի նկատմամբ վիրավորանքին և այլ հարցերի»[25]: Վերջին դրույթը, կարծում ենք, խորհրդի հանդեպ առանձնակի վստահության դրսևորման միտում է:

«Պետական միջամտությունից մամուլի անկախ լինելու առաջին ուղղման երաշխիքին համապատասխան՝ ԱՄՆ-ում չկա մամուլի ներկայացուցիչների մասնակցությամբ վեճերում արբիտրի դեր կատարող կամ վերջիններիս համար կանոններ սահմանող, պետության կողմից լիազորված մամուլի գործերի հանձնաժողով»[26]: Չնայած ինքնակարգավորման մարմինների ստեղծումը չի հակասում Առաջին ուղղմանը, այնուամենայնիվ, այսօր Միացյալ Նահանգներում քիչ թե շատ ազդեցիկ ինքնակարգավորման մեխանիզմ գոյություն չունի: Խոշոր թերթերի ու էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից ընդունված էթիկայի կանոնագրերն ընդամենը ոլորտը կարգավորելու առանձին տարբերակներ են: Սակայն դրանք ևս օրենքի ուժ չունեն:

Հայաստանում իրավիճակն այլ է: Մինչև 2007 թ. մեզանում չկային մամուլի հատուկ ինքնակարգավորման մարմիններ: Երևանի մամուլի ակումբի կողմից նույն թվականի հունվարի 9-ին տարածվեց Հայաստանի լրագրողական համայնքին ուղղված դիմում, որում առաջարկ էր արվում համատեղ մշակել մասնագիտական էթիկայի հիմնական նորմերը:

Ակումբի նախաձեռնությամբ 2007թ. մարտին ստեղծվեց ինքնակարգավորման մարմին՝ Դիտորդ մարմին անվամբ, որը փորձնական բնույթ էր կրում և զբաղվում էր այնպիսի բողոքների քննմամբ, ինչպիսիք են մասնավոր կյանքի, հատկապես երեխաների մասին տվյալների հրապարակումը, խեղաթյուրված փաստերի առկայությունը և լրատվամիջոցի բողոքը լրատվամիջոցի դեմ: Դիտորդ մարմին բողոքներ ընդունվում են էլեկտրոնային հասցեով: Ձևավորման պահին Մարմնի անդամների թիվը յոթն էր: Սակայն «2011 թ. դեկտեմբերի 24-ին ԶԼՄ-ների և լրագրողական միավորումների ներկայացուցիչների ժողովում որոշում կայացվեց ընդլայնել ԴՄ կազմը մինչև 14 անդամ (ընդ որում ԴՄ-ի յուրաքանչյուր նիստին ռոտացիոն սկզբունքով մասնակցում է յոթ անդամ)»[27], որոնք

---

[25] Իրավունք, էթիկա և մասնագիտական հմտություններ հետաքննող լրագրողների համար, Երևան, 2008, էջ 199:

[26] **Брайант Дженингз, Томпсон Сузан**, Основы воздействия СМИ, Москва-Санкт-Петербург-Киев, 2004, стр. 86.

[27] www.ypc.am

լրատվամիջոցների և լրագրողական կազմակերպությունների ներկայացուցիչներ են, իրավաբաններ: Դիտորդ մարմնի կազմում են՝

1. **Արամ Աբրահամյան** («Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր),
2. **Գեղամ Բաղդասարյան** («Անալիտիկոն» հանդեսի գլխավոր խմբագիր),
3. **Լևոն Բարսեղյան** (Գյումրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ),
4. **Մեսրոպ Հարությունյան** (մամուլի փորձագետ),
5. **Արա Ղազարյան** (իրավաբան),
6. **Գեղամ Մանուկյան** («Երկիր մեդիա» հեռուստաընկերության տեղեկատվական և հասարակական-քաղաքական հաղորդումների տնօրեն),
7. **Աշոտ Մելիքյան** (Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ),
8. **Էմանուիլ Մկրտչյան** («Արմինֆո» լրատվական գործակալության գլխավոր տնօրեն),
9. **Մեսրոպ Մովսեսյան** («Մելտեքս» ՍՊԸ նախագահ),
10. **Գնել Նալբանդյան** («Արմնյուս» հեռուստաընկերության գլխավոր խմբագիր),
11. **Բորիս Նավասարդյան** (Երևանի մամուլի ակումբի նախագահ),
12. **Նունե Սարգսյան** (Մամուլի աջակցության «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն),
13. **Օլգա Սաֆարյան** (իրավաբան),
14. **Գեղամ Վարդանյան** (www.media.am-ի պրոդյուսեր)[28]:

Դիտորդ մարմինն առաջնորդվում է հատուկ վարքականոնով և դրան կից՝ ընտրությունների և հանրաքվեների լուսաբանման սկզբունքների վերաբերյալ Հռչակագրով: Այն ստորագրել է 45 սուբյեկտ, որոնք ներկայացնում են Հայաստանի 48 լրատվամիջոց, իսկ նախաձեռնությանը սատարել է 9 լրագրողական միություն (2012 թ. տվյալներով): Մարմնի անդամները, «արձանագրելով, որ հնարաíáñ ã¿ µáÉáñ ¹»åù»ñÇ Ñ³Ù³ñ ë³Ñ-Ù³Ý»É ÙÇ³ëÝ³ï³Ý Ï³ÝáÝÝ»ñ, ·Ç³ï³ÏóáõÙ »Ý, áñ Ï³ñ»ÉÇ ¿ ¨ ÑÝ³ñ³íáñ ¿ å³ÑÅ³Ý»É åñáý»ëÇáÝ³É Éñ³·ñáõÃÛ³Ý Ñ³ÙÁÝ¹Ñ³Ýáõñ ã³÷³ÝÇßÝ»ñÁ¦[29], ÁÝ¹áõÝ»É »Ý Ñ»ï¨Û³É ëÏ½µáõÝùÝ»ñÝ áõ ¹ñ³ÝóÇó µÁËáÕ å³ñï³íáñáõÃÛáõÝÝ»ñÁª

1. ×ß·ñïáõÃÛáõÝ áõ ³ÝÏáÕÙÝ³ï³ÉáõÃÛáõÝ,

---

[28] Նույն տեղում:

[29] Դիտորդ մարմնի վարքականոն, Երևան, 2007, 10 մարտի:

2. ³½ÝíáõÃÛáõÝ ï»Õ»ÏáõÃÛáõÝÝ»ñÇ ³ÕµÛáõñÝ»ñÇ Ñ»ï Ñ³ñ³µ»ñáõÃÛáõÝÝ»ñáõÙ,
3. խմբագրական անկախություն,
4. հարգանք մարդկանց անձնական կյանքի և այլ իրավունքների նկատմամբ,
5. հարգանք զանազան խմբերի ներկայացուցիչների և համամարդկային արժեքների նկատմամբ:

Առավել ուշագրավ է վարքականոնի հետևյալ լրացումը.«Մենք՝ սույն Վարքականոնը ստորագրած լրատվամիջոցների ներկայացուցիչներս, ընդունում ենք մեր իսկ կողմից ընտրված Դիտորդ մարմնի իրավասությունը՝ քննելու մեր գործողությունների ու հրապարակումների համապատասխանությունը սույն Վարքականոնի դրույթներին և պատրաստակամություն ենք հայտնում Դիտորդ մարմնի որոշումը հրապարակելու մեր լրատվամիջոցներում»[30]:

Դիտորդ մարմինը կենտրոնացած է նաև լրատվամիջոցների անաչառ գործունեության վրա հատկապես ընտրությունների ու հանրահավաքների լուսաբանման առումով: Ասվածի վկայությունը Մարմնի վարքականոնին կից ընդունված հռչակագիրն է՝ ընտրությունների և հանրաքվեների լուսաբանման սկզբունքների վերաբերյալ: Նրանում շարադրված են այն սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվեն լրագրողներն ու լրատվամիջոցների ներկայացուցիչները ընտրությունները, հանրահավաքները լուսաբանելիս:

Ձևավորման սկզբնական շրջանում շատ լրագրողներ ոչ միայն տեղյակ չէին Դիտորդ մարմնի գործունեության մասին, այլև մեր հարցման արդյունքում (անցկացված՝ 2007 թ. հանրապետական և մարզային տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ) գտնվեցին նըրանք, ովքեր չնայած կողմ էին ոլորտի ինքնակարգավորման տարբերակին, այնուամենայնիվ, Մարմնի գործունեության հետ կապված ունեին իրենց տեսակետը: Իսկ ահա «Առավոտ» օրաթերթի լրագրող Ռուզաննա Մինասյանն այնքան էլ գոհ չէր խորհրդի գործունեությունից: Պատճառը խորհրդի կողմից Քնարիկ Մեհրաբյանից (հիշեցնենք՝ նա Արարատ Մորախանյանի քույրն է, որին ցմահ դատապարտել էին մի ընտանիքի չորս անդամների սպանության համար, իսկ դատական գործընթացը լուսաբանում էր հենց լրագրողը) ստացված նամակին ընթացք տալն էր: Տուժող կողմը 2007 թ. հոկտեմբերի 11-ին խուլիգանական հարձակում էր գործել «Առավոտ»-ի

[30] Նույն տեղում:

խմբագրությունում գտնվող լրագրողի վրա, որից հետո Ռուզաննա Մինասյանը բողոք էր ներկայացրել ոստիկանության Կենտրոնի բաժին: Լրագրողի խոսքերով՝ «խորհրդի կողմից շահարկման առարկա էր դարձել թերթում հայտնված ամբաստանյալի այն դիմանկարը, որտեղ նա փողկապով է և գլուխը կախ՝ կարծես զղջում է: Նախ՝ նշեմ, որ այդ նկարը խմբագրությունն է տրամադրել ինձ և լուսանկարում վիրավորանք պարունակող ոչինչ չկա: Խորհրդի այս մոտեցումը կարող եմ բացատրել նրանով, որ տեսաբան լրագրողները հեռու են լրագրողական միջավայրից, երբ այսօր ամբողջ աշխարհում դատարանի դահլիճում ամբաստանյալը կարող է հայտնվել նույնիսկ նոթբուքով: Հաջորդ դժգոհությունս վերաբերում է նրան, որ խորհուրդը իրավունք չուներ նամակին ընթացք տալ՝ առանց ինձ տեղյակ պահելու, մանավանդ, եթե արդեն քրեական գործ էր հարուցվել, և խորհրդի գործունեությունը կխանգարեր գործի ընթացքին: Բարեբախտաբար, կար գործող լրագրող (անունը չնշեմ), որն առաջարկել է լսել նաև իմ տեսակետը: Բացատրություններիս արդյունքում իմ խնդրանքով գործը կասեցվեց, որի որոշումը մինչև օրս չեմ ստացել, իսկ Քնարիկ Մեհրաբյանի նամակը Դիտորդ մարմինը հետ վերադարձրեց»[31]:

Մեկ այլ դեպքում՝ «Հրապարակ» օրաթերթի նախկին թղթակցի հայցն ընդդեմ նույն օրաթերթի («Հրապարակ»-ի օնլայն տարբերակում շարունակվում են տպագրվել հոդվածներ նրա ստորագրությամբ, այնինչ, վերջինս այլևս թերթի թղթակիցը չէ), Դիտորդ մարմինը սահմանափակվեց՝ միջնորդող նամակ ուղարկելով: Խմբագրությունը, չընդունելով Մարմնի միջնորդությունը, այդ փաստը մեկնաբանեց տեխնիկական սխալով: Դիտորդ մարմնի կողմից ամենաթարմ գործը «Ընդդեմ Գագիկ Շամշյանի՝ «Առավոտ» օրաթերթի կայքում տեղադրված հոդվածի և տեսաշարի՝ Աննա Սիմոնյանի բողքն է»[32]: Քննարկելով www.aravot.am կայքում 2012 թվականի փետրվարի 7-ին տեղադրված «38-ամյա երիտասարդը, ըստ նախնական տեղեկությունների, կրակել է իր վրա» հոդվածի և տեսաշարի՝ Աննա Սիմոնյանի 2012 թ. փետրվարի 8-ին բերված բողոքը, ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը նշում է. «Վեճի առարկա հանդիսացող հոդվածում ինքնասպանություն գործած անձի անվան և ազգանվան նշումն ընդունելի չէ և չի համապատասխանում Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների վարքականոնի պահանջներին... «Առավոտ» օրաթերթի խմբագրությանը Դիտորդ մարմինը խորհուրդ է տալիս առավել զգույշ լինել

[31]Հարցազրույց «Առավոտ» օրաթերթի լրագրող Ռուզաննա Մինասյանի հետ ըստ Վարդուհի Պետրոսյանի, Երևան, 2008, 21 օգոստոսի:

[32]www.ypc.am

նման ողբերգական դեպքերի մասին լուսաբանման, նյութերի եւ լուսանկարների ընտրության հարցում»[33]: Մեզանում ինքնակարգավորման համակարգի արդյունավետ գործունեության հանդեպ ոգևորությունն այնքան է մեծացել, որ վերջին երկու տարիների ընթացքում ստեղծվեցին ինքնակարգավորող նոր կառույցներ՝ **տեղեկատվական վեճերի խորհուրդը** և **լրատվամիջոցների շահերի պաշտպանության խումբը:**

Տեղեկատվական վեճերի խորհուրդը[34] ստեղծվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ 2011 թ.: Եթե խորհրդի նպատակը խոսքի ազատության, տեղեկատվության մատչելիության, մարդու արժանապատվության և մասնավոր կյանքի իրավունքի պաշտպանությունն է, ապա գործառույթը՝ զրպարտությանը, վիրավորանքին, մասնավոր կյանքի պաշտպանությանը և տեղեկատվության ազատությանը վերաբերող դատական գործերի կապակցությամբ խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացություններ տալը:

Լրատվամիջոցների շահերի պաշտպանության խումբը գործում է 2010 թ. նոյեմբերի 29-ից, որը նախատեսում է քննարկել լրատվության ոլորտի հրատապ խնդիրները, դրանք ներկայացնել պետական մարմինների ներկայացուցիչների ուշադրությանը, հանդես գալ առաջարկություններով: Խմբի կազմում ընդգրկված են Հայաստանի լրագրողական կազմակերպությունների, տարբեր լրատվամիջոցների, հասարա-կական կազմակերպությունների, պետական կառույցների թվով 20 անդամներ:

[33] Նույն տեղում:
[34] Խորհրդի կայացրած որոշումներին կարելի է ծանոթանալ www.ypc.am կայքում:

Այսօր Ամերիկայում և եվրոպական շատ երկրներում մամուլի գծով խորհուրդների կողքին կարևորվում է նաև մամուլի իրավարարի՝ օմբուդսմենի դերակատարությունը: Պաշտոնը կյանքի է կոչվել 20-րդ դարասկզբին: «Այսօր աշխարհի շատ լրատվամիջոցներ առանձին հաստիք են հատկացրել մամուլի օմբուդսմենին, որն զբաղվում է այն հարցերով, թե ինչպես կարելի է բավարարել լսարանի պահանջները՝ լսելով նրանց բողոքները»[35]: Այլ խոսքով՝ օմբուդսմենը կապող օղակ է լրատվամիջոցի և հասարակության միջև, որը մի կողմից արբիտրի դեր է ստանձնում, ընդունում է քննադատությունները, փորձում հարթել տարաձայնությունները և մյուս կողմից, որ ամենակարևորն է, կարգավորում է էթիկական խնդիրները: Սակայն միշտ չէ, որ այս նախաձեռնությունը հաջող ավարտ է ունենում և կանխում հայցվորի դժգոհությունը իրավական հարթություն տեղափոխելու մտադրությունը: Այստեղ ճիշտ կլինի նշել այն տարբերությունը, որ կա մամուլի խորհրդի և օմբուդսմենի գործունեության միջև: Մամուլի խորհուրդը չի քննում այնպիսի հայցեր (տարբեր երկրների օրինակից ելնելով), որոնք խորհրդի կողմից չբավարարվելու դեպքում կհայտնվեն իրավական ոլորտում: Դրա համար նախապես ձեռք է բերվում գրավոր համաձայնություն: Իսկ օմբուդսմենի դեպքում նման դեպքեր լինում են: Պարտադիր չէ, որ օմբուդսմենը իրավաբան լինի:

Ֆրանսիայում առաջինը օմբուդսմենի հաստիք ստեղծեց «Լը Մոնդ» օրաթերթը, ապա նրա օրինակին հետևեցին «Ֆրանս-2» հեռուստաընկերությունը, «Ֆրանս Ինտեր» ռադիոն: Մեզ հետ հարցազրույցում «Ֆրանս-2» հեռուստատեսության նախկին օմբուդսմեն Ժան Կլոդ Ալանիկը (նա 32 տարի աշխատել է այստեղ), որն, ի դեպ, իր պաշտոնավարման հինգ տարիների ընթացքում քննել է ավելի քան 800 բողոք, նշեց, որ «Օմբուդսմենին նշանակում է տվյալ լրատվամիջոցի գլխավոր տնօրենը: Նրա անկախությունն այն է, որ իր ունեցած մանդատով չի կարող ազատվել աշխատանքից: Ավելին, որպեսզի ընդգծվի այդ անկախությունը, վերջինիս աշխատավարձը նշանակվում է ոչ թե, իմ դեպքում, «Ֆրանս-2»-ի, այլ ընդհանուր «Ֆրանս Թիվի»-ի կողմից: Պաշտոնավարման ժամկետը ևս որոշում է խմբագրությունը»[36]: Ժան Կլոդ Ալանիկի հավաստմամբ՝ ժուռնալիստական էթիկայի խախտումներից հատկապես անձնական կյանքին

[35] www.newsombudsman.org

[36] Հարցազրույց «Ֆրանս-2» հեռուստատեսության նախկին օմբուդսմեն Ժան Կլոդ Ալանիկի հետ ըստ Վարդուհի Պետրոսյանի, Փարիզ, 2007, 21 օգոստոսի:

միջամըտության դեպքերի քննությունն ու դրանց պաշտպանությունը ստանձնում է հենց մամուլի օմբուդսմենը: Նրա բերած մի քանի օրինակները վկայում են, որ Ֆրանսիայում մամուլի օմբուդսմենի ազդեցությունը սահմանափակ է, ինչպես Անգլիայում: Պատճառն այն է, որ վերջիններս ավելի շատ զբաղվում են ընթերցողներից, հեռուստառադիոլսարանից ստացվող բողոքներով:

Հայաստանում մամուլի համար նախատեսված նման առանձին ինստիտուտ դեռևս չկա, թեև 2009 թ. հունվարի 13-ին Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերությունն առաջինն էր, ով տեղեկացրեց, որ այսուհետ հեռուստաընկերությունը լսարանի հետ հարաբերությունները կարգավորելու է սեփական օմբուդսմենի օգնությամբ: Այդ պաշտոնին առաջադրվել էր «Շիրակ» քաղաքական կուլտուրայի զարգացման կենտրոնի ղեկավար Վահան Թումասյանը: Հաջորդ լրատվամիջոցը, որ պատրաստակամություն հայտնեց ունենալ մամուլի օմբուդսմեն, «Առավոտ» օրաթերթն էր (2009 թ., 13 փետրվարի): Լսարանի հետ հարաբերությունները կարգավորելու լուրջ ու պատասխանատու այս գործը վստահվեց մամուլի փորձագետ Մեսրոպ Հարությունյանին: «Այս պաշտոնն այլևս չի գործում. ես չեմ կարող նրան վճարել, քանզի նա անկախ չի լինի, իսկ դրամաշնորհ գտնել չհաջողվեց»,- ասում է «Առավոտ»-ի խմբագիր Արամ Աբրահամյանը:

Այսպիսով, հարկ է նշել, որ ի տարբերություն մամուլի խորհրդի, որտեղ վերջնական որոշումը կայացվում է խորհրդի անդամների կողմից, մամուլի օմբուդսմենը որոշում է կայացնում ինքնուրույն:

ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սրանք այն կառույցներն են, որոնց շահագրգռվածությունը ոլորտը կարգավորելու հարցում մեծ է: Օրինակ՝ Հայաստանի ժուռնալիստների միությունը և Երևանի մամուլի ակումբը չսահմանափակվեցին միայն ոլորտը կարգավորող էթիկայի կանոնագրերի ընդունմամբ. պարբերաբար անցկացվող մրցանակաբաշխությունները և տարբեր լրատվամիջոցներին ու նրանց ներկայացուցիչներին շնորհվող մրցանակները խոսում են լրագրողական արտադրանքի որակի վերահսկողության հանդեպ ունեցած մեծ պատասխանատվության մասին: Ավելին, նման միությունները կապող օղակ են հանդիսանում ողջ երկրի տարածքում գործող լրատվամիջոցների միջև: Իսկ ամեն տարի կազմակերպվող հանդիպում-քննարկումները ոլորտի ներկայացուցիչների հետ հետապնդում են մի նպատակ՝ լրատվամիջոցների միջև բարձրացնել առողջ մրցակցությունը հասարակությանը որակյալ արտադրանք տրամադրելու համար (հայաստանյան տարբեր լրատվամիջոցների հաղորդագրությունների համաձայն):

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Որպես ինքնակարգավորման մեխանիզմ՝ մամուլի խորհուրդների, օմբուդսմենի կողքին գործում է խմբագրական կոլեգիան՝ մի մարմին, որը քննում է խմբագրության ստացած բողոքներն ու որոշումներ կայացնում: Մամուլի խորհրդի նման այստեղ որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների կողմից՝ քվեարկության միջոցով: Բայց եթե խորհրդի դեպքում գործունեության ժամանակն ու հնարավորությունները լայն են, ապա խմբագրական կոլեգիայի դեպքում՝ սահմանափակ: Առաջին հայացքից կարող է թվալ, որ ինքնակարգավորման մեխանիզմ հանդիսացող խմբագրական կոլեգիան անխուսափելի խնդրի լուծման լավագույն տարբերակն է, բայց իրականում զբաղվածության պատճառով շատ հարցեր կարող են լուծում չստանալ: Չնայած սրան՝ մեր լրատվամիջոցներում մեծ մասամբ կիրառելի է ինքնակարգավորման մեխանիզմներից հենց այս տարբերակը: Ինչու՞: Գուցե ավելի հեշտ է դժգոհ կողմի հետ տարաձայնությունները «լուծել» սեփական ձևով, սեփական հարկի տակ: Բայց կարծում ենք՝ սա էլ ունի իր թերությունը՝ կապված մի կողմից ոչ լիարժեք օբյեկտիվության, մյուս կողմից՝ գործընկերների հավանական

տարածայնությունների հետ: Այդ իսկ պատճառով ճիշտ կլինի հետևել Նորվեգիայի օրինակին, որտեղ ինքնակարգավորման հարցում կարևորվում է նաև «ռեդակտորպլակատենը կամ խմբագրական կանոնագիրքը, որով սահմանվում են խմբագիրների իրավունքներն ու պարտականությունները: Նորվեգական դատարանների մեծ մասն այն ընդունում է իբրև համիրավական սովորույթ»[37]:

Այսպիսով, լրագրողի վարքի բարոյական սկզբունքների պահպանմանը հետևում են ինչպես լրատվամիջոցներն ու լրագրողական կազմակերպությունները, ոչ բոլոր երկրներում գործող մամուլի հարցերով զբաղվող խորհուրդները, այնպես էլ տվյալ լրատվամիջոցի խմբագրական կոլեգիան (անկախ այն հանգամանքից՝ տվյալ լրատվամիջոցն ունի սեփական էթիկայի կանոնագիր, թե առաջնորդվում է լրագրողական միությունների ընդունած կանոնագրով), ինչը վկայությունն է այն բանի, որ ամեն դեպքում լրագրողի որակյալ աշխատանքը ճիշտ կազմակերպված վերահսկողության արդյունք է:

[37] «Արտիկլ 19» միջազգային ոչ կառավարական կազմակերպություն, Ազանգվածային լրատվության միջոցներ, Օրենքներ և պրակտիկա, Երևան, 1999, էջ 120:

1.4. ԷԹԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԵՐՆ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

«Ժուռնալիստական էթիկա» առարկան առաջին հերթին ենթադրում է պարտականությունների ու վարքագծի չափանիշների մի համակարգ, որն արտահայտում է լրագրողի վերաբերմունքն իր իսկ աշխատանքի հանդեպ: Մյուս դեպքում այն ներառում է կանոններ, որոնք կարգավորում են նրա՝ հասարակության հետ ունեցած հարաբերությունները: Հենց այս փոխկապակցված համակարգում է, որ լրագրողը դրսևորում է իր մասնագիտական պարտքը: Լրագրողների վարքն ու մասնագիտական պարտականությունները, լրատվամիջոցների գործունեության էթիկական բազան կազմող սկզբունքները, նորմերը և վարքականոնները սահմանված են հատուկ փաստաթղթերում, որոնք առավել հայտնի են **էթիկայի կանոնագիր** անվամբ: Թեև տարբեր բառարաններում կանոնագիր (կոդեքս) բառը մեկնաբանվում է յուրովի, այնուամենայնիվ, իմաստը մեկն է՝ «սովորությունների, համոզմունքների, վարվելու և այլ կանոնների ամբողջություն»[38]:

Լրագրողի բարոյական չափանիշներն աչքի են ընկնում իրենց ընդհանրության տարբեր մակարդակներով: Դրանց մի մասը լրագրողին տալիս է նվազագույն կողմնորոշվածություն միայն մասնակի իրավիճակների սահմաններում: Ավելին, լրագրողի բարոյաէթիկական պատասխանատվության կառույցում առանձնանում է պահանջների երկու մեծ խումբ, որոնցից մեկն ամփոփում է նրա մասնագիտական էթիկայի նորմերը, մյուսը՝ ծառայողական: Իսկ ահա լրագրողի մասնագիտական էթիկան բովանդակությամբ ավելի տարողունակ է: Նրա գործունեության բարոյական ասպեկտները չափորոշողն ու սահմանողը սկզբունքների և նորմերի ամբողջությունն է:

Օրինակ՝ հետևյալ պահանջը.«Հետևի՛ր, որ քո նյութով ակամայից չշոշափես երրորդ անձանց հետաքրքրությունները»: Այստեղ նյութի հեղինակն

---

[38] **Апресян Р. Г., Гусейнов А.А.,** Этика: Энциклопедический словарь, М., Гардарики, 2001, стр. 308.

ինքն է որոշողը՝ ինչպես վարվել: Սակայն մասնակի իրավիճակներից դուրս այս չափանիշները լրագրողների շրջանում հայտնի են որպես մասնագիտական բարոյականության սկզբունքներ, թեև շատ տեսաբաններ գտնում են, որ ժուռնալիստիկայում առանձին մասնագիտական բարոյական սկզբունքներ չկան, և որ դրանք փոխառված են հասարակական բարոյական նորմերից: Խնդիրը «սկզբունք» կոչվող բնութագրման մեջ է: Եթե այն դիտարկենք որպես բացարձակ պահանջ, ապա իրականում այդպիսիք են *ճշգրտությունը, օբյեկտիվությունը, ազատ խոսքի* առկայությունը՝ պահանջներ, որոնք մասնագիտական կանոնագրերում միայն կոնկրետացվում են: Լրագրողի բարոյական սկըզբունք ասելով՝ հասկանում ենք ոչ միայն վերոնշյալ բացարձակ պահանջը, այլև լրագրողի վարքականոնները:

Եթե *էթիկայի կանոնագիրը իրավունքի որևէ բնագավառին վերաբերող օրենքների համակարգված ժողովածու է, ընդունելի սկզբունքների ամբողջական համակարգ, ապա լրագրողի վարքականոններն ավելի շատ վերաբերում են լրագրողի պահվածքին:* Վերջինս կարգավորման ավելի «մեղմ» տարբերակ է: Պատահական չէ, որ շատ լրատվամիջոցներ հակված են ընդունել էթիկայի վարքականոններ, քան կանոնագրեր: Սակայն միանշանակ կարելի է պնդել, որ անկախ նրանից, թե ինչ անվանում կունենա լրագրողական էթիկայի համակարգված սկզբունքների ամբողջությունը՝ կանոնագիր, վարքականոն, պատվի և արժանապատվության կանոնագիր, լրագրողների խարտիա, սկզբունքների հայտարարագիր, լրագրողների պարտականությունների և իրավունքների հռչակագիր, թե պարզապես մասնագիտական կանոնադրություն, նպատակը մեկն է՝ նպաստել որակյալ ժուռնալիստիկայի կայացմանը և այդ կանոնների կիրառմամբ էլ խուսափել անցանկալի բարդություններից ու տարաձայնություններից:

Ընդհանուր առմամբ, էթիկայի կանոնագրերը միմյանցից տարբերվում են լրագրողներին ներկայացվող ընդհանուր պահանջների աստիճանով: Դրանց մի մասը ներառում է ընդհանուր սկզբունքներ, մյուսները կոնկրետացնում են լրագրողի պահվածքն իրավիճակին համապատասխան, երրորդները՝ լրագրողի վարքագիծը կոնկրետացնող պահանջներ, չորրորդներն էլ երբեմն համալրվում են որոշակի հավելվածներով: Կանոնագրեր կազմողները թեև շատ անգամ ձգտում են հեռանալ ընդհանուր կարծրատիպերից, այնուամենայնիվ, դրանց ձևերի մեջ կան որոշակի տարբերություններ:

Կանոնագրերի որոշ դրույթներ առնչվում են լրագրողի հոգեբանությանը և գրված են որպես կրեդո, ինչպես օրինակ՝ «Ես հավատում եմ...», մյուսներն առաջարկում են ընդհանուր սկզբունքներ, երրորդներն էլ ավելի են կոնկրետացնում այդ սկզբունքները:

Ուսումնասիրելով ժուռնալիստական էթիկայի առաջին կանոնագրերը՝ պարզ է դառնում, որ դրանց հեղինակներն առաջնորդվել են դարասկզբին ձևավորված ազատ մամուլի հղացքի (կոնցեպցիայի) ազդեցությամբ: Վերջինիս համար հիմք են հանդիսացել Ջ. Միլթոնի, Թ. Ջեֆերսոնի գաղափարները: Դրանց մի շարք դրույթներ ուղղակի ընկած են հենց այս հղացքի հիմքում: Ասվածը փաստենք հետևյալ մեջբերմամբ.

1. «Մամուլը հասարակական կամ կիսահասարակական ինստիտուտ է, որի գլխավոր նպատակն է տեղեկացնել ընթերցողին, գրավել նրա ուշադրությունը և օգնել նրան վերահսկելու կառավարության գործունեությունը:
2. Մամուլը հասանելի է բոլորին և ցանկացած մեկը, ով ունի բավարար միջոցներ, կարող է թերթ հրատարակել:
3. Մամուլը ղեկավարվում է «գաղափարների ազատ շուկայում» ճշմարտացիության հաստատման գործընթացով:
4. Արգելվում են զրպարտությունը և անպարկեշտությունը:
5. Մամուլը պետության չորրորդ իշխանությունն է, որը պատասխանատու է հասարակության առաջ, հետևաբար հասարակությունը պետք է ներկայացնի ամբողջությամբ»[39]:

Ինչպես կարելի է նկատել, մեջբերման հիմքում ևս խոսքի ազատությունն է և մարդկանց՝ ճշգրիտ տեղեկատվություն իմանալու իրավունքը:

Էթիկայի մասին առաջին կանոնագրերում տեղ գտած պահանջները սովորաբար չեն հեռանում համամարդկային բարոյականության չափանիշներից (անգամ չկա մասնագիտական էթիկայի մի չափանիշ, որն իր նմանը չունենա ընդհանուր բարոյականության կոնտեքստում), ասել է, թե՝ գրիր ճշմարտությունը, հավատարիմ մնա փաստերին, անգամ եթե դրանք քեզ դուր չեն գալիս, հարգի՛ր յուրաքանչյուրի պատիվն ու արժանապատվությունը, անձնական կյանքն ու նրա իրավունքները, մի՛ գրիր խղճիդ հակառակ, կաշառք մի՛ վերցրու, ուղղի՛ր արված սխալները, արդա՛ր եղիր տեղեկատվության հավաքման և տարածման հարցում, հարգի՛ր ժողովրդավարական ինստիտուտները և բարոյականության համընդհանուր

[39]ИТД КноРус, Этика СМИ, М., 2003, стр. 171.

նորմերը: Սրանք են այն հիմնական չափորոշիչները, որոնք կազմում են ժուռնալիստական էթիկայի կանոնագրերի հիմքը:

Վերջին շրջանում ուսումնասիրելով աշխարհի ավելի քան հիսուն երկրների զանգվածային լրատվամիջոցների՝ էթիկայի մասին ընդունած տարբեր կանոնագրերը հետազոտող Թոմ Կուները տարբերակում է 3 մակարդակ, ուր լրագրողների առջև ծառանում են էթիկական հիմնական պրոբլեմները: Դրանք են՝

1. «Ճշմարտության որոնումը,
2. պատասխանատվության ձգտումը,
3. խոսքի ազատության անհաղթահարելի ձգողականությունը»[40]:

Այստեղ կարելի է նկատել. եթե առաջինը ենթադրում է ճշգրիտ, օբյեկտիվ և հավաստի տեղեկատվության տարածում, երկրորդը լրատվամիջոցների աշխատակիցներից պահանջում է ծառայել լսարանին, այլ ոչ թե իշխանություններին կամ գովազդատուներին, ապա երրորդն այն հիմնական բանալին է, որ ընկած է էթիկայի մասին բոլոր կանոնագրերի հիմքում, այն է՝ խոսքի ազատություն, որն իր հերթին պարտադրում է ծառայել ճշմարտությանն ուօբյեկտիվությանը: Եվ չնայած տարբեր երկրների տարբեր լրատվամիջոցներ ունեն իրենց էթիկական նորմերն ու կանոնագրերը, հետազոտությունները ցույց են տալիս, որ գրեթե բոլորն էլ առաջնորդվում են խոսքի ազատության, ճշգրտության, օբյեկտիվության, անաչառության սկզբունքներով:

Ժուռնալիստական էթիկայի միջազգային սկզբունքների (որոնք անվանում են արդի ժուռնալիստիկայի «ժողովրդավարական մինիմում»)[41] մշակումն ու համաձայնեցումը նախնական, երկարատև աշխատանքի արդյունք է, որի համար հիմք հանդիսացավ խաղաղության ամրապընդման հարցում տեղեկատվական մարմինների ստեղծման ընդհանուր սկզբունքների մասին ՅՈՒՆԵՍԿՕ-յի հռչակագիրը:

Էթիկական ժուռնալիստիկայի ձևավորման հարցում այլ փաստաթղթեր ու իրավական ակտեր էլ են գործում: Դրանք են լրագրողի վարքագծին, սկզբունքներին վերաբերող միջազգային տարբեր հռչակագրերը, խարտիաները: Սակայն որպես կանոն՝ տարբերում են էթիկական կանոնագրերի հետևյալ տեսակները՝

---

[40]Նույն տեղում, էջ 198:
[41]www.medialaw.ru

1. **Ճյուղային** (կապված ժուռնալիստիկայի կոնկրետ բնագավառի հետ, ինչպես օրինակ՝ մեզանում հետաքննող ընկերակցության կողմից ընդունված կանոնագիրը),
2. **Խմբակային** (մի խումբ լրատվական կազմակերպություններ միավորվելով՝ ընդունում են կանոնագիր),
3. **Խմբագրական** (կանոնագրի ընդունումը տվյալ լրատվամիջոցի նախաձեռնությունն է. մեզանում այդպիսին է «Առավոտ» օրաթերթի էթիկայի կանոնագիրը),
4. **ազգային** (ոլորտը կարգավորող կանոնագրերի ընդունմանը ձեռնամուխ են լինում տվյալ երկրի տարածքում գործող լրատվական կազմակերպություններն ու լրատվամիջոցները),
5. **միջազգային** (նախաձեռնությունը պատկանում է միջազգային հեղինակավոր կառույցներին),
6. **գերատեսչական** (հեղինակները տարբեր գերատեսչություններն են):

Կան կանոնագրեր էլ, որոնք այս դասակարգումից դուրս են, քանզի կարող են կյանքի կոչվել, ասենք, «ՁԼՄ-ների սեփականատերերի ջանքերով: Այդպիսին է «Գավառական օրաթերթերի սեփականատերերի ֆրանսիական ընկերության՝ SPQR «Պատշաճ վարքագծի» կանոնագիրը»[42]: Եթե որոշ կանոնագրեր պարզապես կանոնակարգում են լրատվամիջոցների կոնկրետ տեսակների՝ տպագիր մամուլի, հեռահաղորդակցության գործունեություն, ապա մյուսները վերաբերում են միայն մեկ լրատվամիջոցի:

Քանի որ ժուռնալիստական կանոնագրերի նշված տեսակները տարբեր են իրենց բնույթով, հետևաբար ճիշտ կլինի դրանք պայմանականորեն դասակարգել այսպես՝

1. «Ըստ կանոնների բնույթի դրանք լինում են՝
   - Իդեալական, երբ մշակված կանոնները մոտ են կատարյալին,
   - Ընդհանուր, որոնք անհրաժեշտ են բոլորին,
   - Հակասական, երբ լրագրողների մոտեցումը տարբեր է էթիկական որևէ հարցի կապակցությամբ:
2. Ըստ ՁԼՄ-ների գործառույթների»[43]: Այս պարագայում լրագրողները պետք է քաջ գիտակցեն իրենց դերակատարությունը, որն է՝

[42] **A. David Gordon, John Michael Kittross**, Controversies in media ethics, 2-ed edition, Longman, New York, 1998, p. 46.
[43] Նույն տեղում, էջ 57:

հետևել միջավայրին իրադարձությունների հրապարակայնությունն ապահովելու համար, պատկերացում տալ աշխարհի մասին, ապահովել հանրային հաղորդակցությունը, փոխանցել մշակութային ավանդույթներն ու արժեքները, զվարճացնել մարդկանց:

3. «Ըստ կանոնների գործողության շրջանակի»[44]: Սրանց թվին կարելի է դասել այնպիսիք, ինչպիսիք են՝ առանձին լրատվամիջոցին, նորությունների առանձին տեսակներին (դատաքննչական, ֆինանսական, կրոնական և այլն) վերաբերող կանոնները:
4. «Ըստ պրոֆեսիոնալների կատեգորիայի» մեջ են մտնում միայն սեփականատերերին, լրագրողներին վերաբերող կանոնները:
5. «Ըստ պատասխանատվության աղբյուրի (կարևորվում են գործընկերներ, լրատվության աղբյուրներ, հաղորդվող նորություններին առնչվող մարդիկ, լրատվության սպառողներ հարաբերությունները) և ըստ աշխատանքի փուլի»[45] (սա ենթադրում է տեղեկատվության հայթայթման, ընտրության, մշակման կանոնների ու սկզբունքների ամբողջությունը):

Իսկ ահա ժուռնալիստական էթիկայի կանոնագրերի գործառույթները ճիշտ կլինի դասակարգել այսպես՝

1. «ինքնակարգավորման գործառույթ,
2. անվտանգության կամ մասնագիտական համերաշխության գործառույթ, որով կարևորվում է այն հարցը, թե ու՞մ, ինչպե՞ս և ինչի՞ց է պաշտպանում լրագրողական համերաշխությունը,
3. մասնագիտական արժանապատվության պահպանման գործառույթ, երբ կարևորվում են ինքնահարգանքը, բարոյականության և ժուռնալիստիկայի համատեղելիությունը,
4. կրթական գործառույթ,
5. տնտեսական գործառույթ, երբ ուշադրություն է դարձվում ԶԼՄ-ների սպառողական գրավչության մեծացմանը,
6. անձնակազմի ղեկավարման, բարելավման գործառույթ, որտեղ էթիկական կանոնագրերը հանդես են գալիս իբրև ծառայողական հրահանգների տեսակ»[46]:

Կարծիք կա, որ կանոնագրերը պետք է ստեղծեն հենց ոլորտի մասնագետները, քանի որ երբեմն գործատուների հաստատած կանոնագրերը

---

[44] **Прохоров Е. П.**,Введение в теорию журналистики, Рип-холдинг, М., 2000, стр. 21.

[45] www.poynter.org

[46] Ուսումնական ծրագրեր համալսարանների ժուռնալիստիկայի ֆակուլտետների համար, Երևան, 2002, էջ 93:

կարող են պարունակել որոշակի հրահանգներ ու բարոյական նորմեր, որոնք անընդունելի են լրագրողների կողմից: Հետևաբար անհրաժեշտ է գործը վստահել արհեստավարժներին:

Տեսականորեն կան հայացքներ՝ կապված այն պահանջների հետ, որոնք հասարակությունը առաջադրում է լրագրողական միջավայրին: Օրինակ՝ ռուս տեսաբան Գ. Լազուտինան այդպիսի պահանջների ամբողջությունը դիտում է իբրև երեքհարկանի բուրգ, որի «առաջին հարկում այնպիսի հասկացություններն են, ինչպիսիք են՝ մասնագիտական պարտականությունը, պատասխանատվությունը, խիղճը, պատիվն ու արժանապատվությունը: Երկրորդ հարկը կազմում են մասնագիտական բարոյական սկզբունքները, որոնցում արտահայտված են լրագրողի վարքագծի կոնկրետ պահանջները: Իսկ երրորդ հարկում արդեն այն նորմերն են, որոնք վերահսկում են լրագրողի վարքագծի բոլոր տեսանկյունները բացառապես կոնկրետ իրավիճակներում, այլ կերպ ասած՝ մասնագիտական-էթիկական նորմերը»[47]: Լրագրողի մասնագիտական բարոյականությունը կարող է ազդել նրա գործունեության վրա ոչ միայն չափանիշների, այլև արժեքների համակարգի միջոցով, այսինքն՝ եթե *չափանիշ* ասելով՝ հասկանում ենք ընդգծված պարտականություն՝ վարվելու այս կամ այն կերպ, որը ներառում է նաև համապատասխան պատժամիջոցներ, ապա *արժեքի* մեջ գերիշխողը դրան հետևելու անհրաժեշտության ներքին համոզմունքն ու ինքնակամությունն է: Ավելին, եթե չափանիշը կոնկրետացնում է այս կամ այն տիպական իրավիճակում լրագրողի վարքագծի բնույթը, ապա արժեքը միշտ առաջարկում է ավելի ընդգրկուն կողմնորոշում: Այս պարագայում բացառություն չէ նաև լրագրողի մասնագիտական բարոյականությունը:

Չնայած տարբեր երկրների շատ լրատվամիջոցներ ունեն իրենց համապատասխան էթիկական նորմերն ու կանոնագրերը, այնուամենայնիվ, հետազոտությունները ցույց են տալիս, որ բոլորի հիմքում ընկած է խոսքի ազատությունը, անաչառությունը: Ստորև ներկայացվող եվրոպական մի շարք երկրների, ինչպես նաև ամերիկյան տեղեկատվական կազմակերպությունների և նրանց կողմից ընդունված էթիկական դաշտը կարգավորող կանոնագրերի ուսումնասիրությունը փաստում է ասվածը: Օրինակ՝ 1991 թ. հունվարի 21-ին Վիեննայի Մամուլի ավստրիա-կան խորհրդի ընդունած «Պատվի կոդեքս»-ում ամրագրված է. «Ժուռնալիստիկան առհասարակ ենթադրում է ազատության և պատասխանա-

[47] **Лазутина Г. В.,** Профессиональная этика журналиста, М., 1999, стр. 97.

տվության համատեղում: Տեղեկատվության մեկնաբանման և շարադրման ազատությունը հանդիսանում է մամուլի ազատության հիմնական մասը: Անթույլատրելի է խոչընդոտել տեղեկատվության հավաքմանը և տարածմանը: Բայց վերջինի դեպքում լրագրողի կարևորագույն խնդիրն է լինել բարեխիղճ և ճշգրիտ»[48]:

Չգտելով պաշտպանել մասնագիտական ճշգրտությունը և խոսքի ազատությունը՝ Բելգիայի Հրատարակիչների ասոցիացիան, Ժուռնալիստների համընդհանուր ասոցիացիան և Տեղեկատվական հրատարակությունների ազգային ֆեդերացիան 1982 թ. ընդունեցին «Ժուռնալիստական գործունեության սկզբունքների մասին» կանոնագիրը, որտեղ ևս կարևորվում է մամուլի ազատությունը՝ իբրև «խոսքի ազատության երաշխավորներից մեկը, առանց որի անհնար է ապահովել քաղաքացիական մյուս ազատությունները: Մամուլին պետք է հնարավորություն ընձեռվի առանց որևէ խոչընդոտի ձեռք բերել և հրապարակել տեղեկություններ և մեկնաբանություններ՝ այդպիսով նպաստելով հասարակական կարծիքի ձևավորմանը բազմակարծության պայմաններում»[49]:

Այն հավաստումը, թե լրագրողներն ունեն ազատ տեղեկատվություն ստանալու և տարածելու իրավունք, Հունգարիայի Ժուռնալիստների ազգային խորհուրդը ևս չի ժխտում, որը 1994 թ. ընդունեց Ժուռնալիստների գործունեությունը կարգավորող էթիկայի կանոնագիր: Այն մի կողմից սահմանում է լրագրողների՝ տեղեկատվություն ստանալու, հրապարակելու և քննադատելու իրավունքները, մյուս կողմից պարտադրում է «հարգել երկրի գործող Սահմանադրությունը, չխախտել մարդու իրավունքները, չհրահրել թշնամություն առանձին անձանց, ազգերի, ռասաների, կրոնական խմբավորումների միջև, և, որ ամենակարևորն է, չտարածել կեղծիքներ և զրպարտություններ՝ վիրավորելով որևէ մեկի պատիվն ու արժանապատվությունը»[50]:

Կարևորելով ժուռնալիստական էթիկայի հիմնարար սկզբունքներից հատկապես ճշգրտությունը՝ 1994 թ. հունիսի 23-ին Ռուսաստանի ժուռնա-

---

49 Профессиональная этика журналиста, Фонд защиты гласности, М., 2002, стр. 81.

50 Նույն տեղում, էջ 99:

51 **Дзялошинский И. М.,** Журналист и информация, //Правознать, 1999, №11, стр. 3.

լիստների միության կողմից Մոսկվայում ընդունված էթիկայի կանոնագրերում թեև հստակ սահմանվում է, որ «լրագրողը պետք է մեկնաբանի և տարածի միայն այնպիսի տեղեկատվություն, որի իսկության մեջ համոզված է և քաջատեղյակ է աղբյուրին», միևնույն ժամանակ պարտադրում է խուսափել «իր ոչ ճիշտ կամ կասկածելի հրապարակումներով որևէ մեկին վնաս հասցնելուց»[51]: Սա համարվում է էթիկայի կոպիտ խախտումներից մեկը, ինչի դեպքում լրագրողը պարտավորվում է հերքում տպագրել:

Վերոհիշյալ սկզբունքներն ու չափանիշները սահման չեն ճանաչում: Եվ անկախ երկրի տնտեսական վիճակից, զարգացման մակարդակից, նրա տարածքում գործունեություն ծավալող զանգվածային լրատվամիջոցներն ու տարբեր լրատվական կազմակերպությունները թեև ձևավորում են համապատասխան լրատվական դաշտ, այնուամենայնիվ, բոլորն էլ առաջնորդվում են մամուլի ազատության, ճշգրտության, օբյեկտիվության սկզբունքներով:

1998 թ. ԱՄՆ-ի Պրոֆեսիոնալ ժուռնալիստների ընկերակցության ընդունած էթիկայի կանոնագրի մի շարք դրույթներ ևս հավաստում են արդեն ասվածը: Ավելին, որոշ ձևակերպումներ աչքի են ընկնում ինքնատիպությամբ: Այդպիսին է կանոնագրի 4-րդ կետը, որում ասվում է. «Մարդկանց վստահությունը արհեստավարժ, բարձրամակարդակ ժուռնալիստիկայի հիմքն է: Մեր գլխավոր նպատակն է ճշմարտության որոնումը, և լրագրողները պատասխանատվություն են կրում իրենց վերլուծությունների, մեկնաբանությունների համար»[52]:

Հիմք ընդունելով Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի չափանիշները և «Ժուռնալիստական էթիկայի մասին» Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի ընդունած բանաձևը՝ 1998 թ. Ադրբեջանի մամուլի ակումբն ընդունեց մասնագիտական էթիկայի կանոնագիր, որտեղ թեև «կարևորվում է» խոսքի ազատությունը, այնուամենայնիվ, որոշ դրույթների ենթատեքստում նկատելի է այս «ազատության» սահմանափակումը: Այն է. «Մամուլի ազատությունը, լրագրողներին տալով ազատ գործելու լայն հնարավորություններ, միաժամանակ նրանցից պահանջում է

52 www.medialaw.ru

53 Профессиональная этика журналиста, Фонд защиты гласности, М., 2002, стр. 36.

պատասխանատու լինել իրենց ամեն մի բառի համար»[53]: Ի դեպ, նման պահանջի մյուս կանոնագրերում չհանդիպեցինք:

Էթիկայի սեփական կանոնագիր ունենալու պատրաստակամությունը դրսևորվեց մեզանում նույնպես: Նախաձեռնողը Երևանի մամուլի ակումբն էր, որը, հետևելով ժուռնալիստական էթիկայի միջազգային չափանիշներին, 1995 թ. հուլիսի 18-ին ընդունեց էթիկայի կանոնագիր և հանրապետության տարածքում գործող լրատվամիջոցներին կոչ արեց առաջնորդվել վերջինիս դրույթներով՝ անկախ նրանց քաղաքական ու կուսակցական կողմնորոշումներից: Հեղինակներին ոգևորողը խոսքի ազատության գաղափարն էր, որն իր դրսևորումը գտավ կանոնագրում.«Մենք՝ լրագրողներս, առաջնորդվելով այս կանոնագրով, նպատակ ունենք նպաստել ազատ և ժողովրդավար մամուլի կայացմա-նը»[54]: Հետագայում Հայաստանի ժուռնալիստների միությունը ևս ընդունեց էթիկայի կանոնագիր, որին պարտավոր է հետևել միության յուրաքանչյուր անդամ: Այս կանոնագրում էլ, որպես առաջնային դրույթներ, նախորդի նման կարևորվում են խոսքի ազատությունն ու անկողմնակալությունը:

Նմանատիպ էթիկական դրույթներ ամրագրված են աշխարհի տարբեր երկրների լրատվական դաշտը կարգավորող էթիկայի կանոնագրերում ու ոլորտին առնչվող այլ փաստաթղթերում: Եվ ինչպես ցույց է տալիս պրակտիկան, էթիկական ժուռնալիստիկայի կայացումը հիմնականում պայմանավորված է ընդունված էթիկական և իրավական չափանիշներին հետամուտ լինելով:

Անվիճելի է, որ իրավական պետությունում զանգվածային լրատվամիջոցների գործունեության հիմքը զանգվածային տեղեկատվության ազատությունն է: Բայց ցանկացած ազատություն նախ և առաջ ենթադրում է որոշակի սահմանափակում՝ էթիկական և իրավական նորմերի պահպանմամբ: Չէ՞ որ ինչքան մեծ է ազատ գործելու հնարավորությունը, այնքան ժուռնալիստիկային ներկայացվող հիմնական պահանջը՝ հասարակական կարծիքի վրա ազդելը, առաջարկվող ազատությունից օգտվելու ավելի մեծ սահմանափակումներ է ենթադրում: Ռուս տեսաբան Վ. Վորոշիլովը, առհասարակ լրագրողի գործունեության ընթացքում

54 Նույն տեղում, էջ 87:

55 www.ypc.am

կարևորելով էթիկական և իրավական նորմերին հետևելու անհրաժեշ-տությունը, ապա՝ դրանց իմացությունը, գտնում է, որ «լրագրողը ոչ միայն ցուցաբերում է բարձր իրավական մակարդակ, այլև նպաստում է ԶԼՄ-ների արդյունավետության բարձրացմանը՝ նման ձևով տվյալ լրատվամիջոցին զերծ պահելով հնարավոր իրավական սխալներից տեղեկատվության հավաքման ու տարածման ընթացքում»[55]:

Ժուռնալիստական էթիկայի ցանկացած կանոնագիր առաջադրում է ոչ միայն սկզբունքներ, այլև նպաստում է լրագրող-հասարակություն կապի սերտացմանը: Եթե վերը նշված հարաբերություններից առաջին երեքի դեպքում դա արտահայտվում է օբյեկտիվության, տեղեկատվության աղբյուրի հավաստիության ու, անհրաժեշտաբար աղբյուրի չբա-ցահայտման, օրենքով արգելված տեղեկատվության սահմանափակման առումով, ապա լրագրող-գործընկեր փոխհարաբերություն տարբերակը շատ լրատվամիջոցներ կարևորում են նույնքան, որքան ճշգրտությունն ու արդարությունը, հստակությունն ու զսպվածությունը: Հայաստանում միայն «Առավոտ» օրաթերթն է, որ սեփական էթիկայի կանոնագրում հատուկ կետ սահմանելով այս հարաբերության կարգավորման համար, դեմ է ոչ միայն լրատվամիջոցների միջև հարաբերություններ պարզելուն, այլև լրա-տվամիջոցներին ու լրագրողներին քննադատելուն: Այս պահանջը նկատելի չէ Հայաստանում գործող մյուս կանոնագրերում:

56 **Ворошилов В. В.,** Журналистика, Санкт-Петербург, 2002, стр. 123.

1.5. ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժուռնալիստական պրակտիկայի զարգացման հետ մեկտեղ օրինաչափորեն ավելանում է այն բնագավառների թիվը, որոնք կարիք ունեն ոչ թե օրենսդրական, այլ էթիկական կարգավորման անհրաժեշտության: Ապացույցը գործող բազմաթիվ փաստաթղթերն են, որոնք մի կողմից կարգավորում են ներխմբագրական հարաբերությունները, իսկ մյուս կողմից՝ լրագրողների վարքն ու մասնագիտական պարտականությունները:

Չնայած կանոնագրերի անհրաժեշտությանը՝ ցանկացած երկրում արդյունավետ ժողովրդավարական հասարակություն ձևավորելու համար ձեռնարկվող քայլերից մեկն էլ պետք է լինի ազատ լրատվական միջավայրի ապահովումն ու, հետևաբար, լրատվամիջոցների գործունեությունը համակարգող համապատասխան օրենքների ընդունումը: Սակայն դրանք պետք է լինեն լրատվական անկաշկանդ գործունեությանը նպաստող և ոչ թե խոչընդոտող օրենքներ: Քիչ չեն դեպքերը, երբ լրագրողն իր հրապարակման համար հայտնվում է դատական քաշքշուկների մեջ կամ պարզապես ստիպված է լինում հերքում տպագրել՝ ավելորդ գլխացավանքից խուսափելու համար: Իսկ երբեմն էլ, երբ լրագրողի տեսակետը չի համընկնում հոդվածի հերոսի տեսակետին, տարաձայնությունները լուծում են ստանում իրավական հարթությունում: Կարծում ենք՝ հենց այս դեպքում է, որ անհրաժեշտություն է զգացվում վերանայել մի շարք խախտումների համար լրագրողներին պատասխանատվության կանչելու՝ օրենքով նախատեսված դեպքերը: Ավելին, տեղին կլիներ քննել նախ՝ ժուռնալիստական էթիկայի մի շարք խախտումների համար նախատեսված օրենքի դրույթների ու էթիկական չափորոշիչների աղերսները:

Օրենքի և ժուռնալիստական էթիկայի տեսանկյունից որպես առաջնային պահանջ անհրաժեշտ է դիտարկել **ստույգ, ճշգրիտ, օբյեկտիվ** տեղեկատվության տրամադրումը, որը տարբեր կանոնագրերի հիմնական սկզբունքներից մեկն է (տե՛ս Երևանի մամուլի ակումբի, Հայաստանի ժուռնալիստների միության, «Ինտերնյուս» Հ/Կ-ի, Հետաքննող լրագրողների ընկերակցության, Գյումրիի «Ասպարեզ» ակումբի, «Առավոտ» օրաթերթի, ԵՊՀ-ի ժուռնալիստիկայի ֆակուլտետի կողմից ընդունված կանոնագրերը): Պատահական չէ, որ ոլորտի մասնագետների կողմից այդքան շատ է կարևորվում փաստերի նախնական ճշգրտումն ու ստուգումը: Այս պահանջն

անմիջականորեն ենթադրում է **տեղեկատվության ազատության առկայություն**, որն ամրագրված է ինչպես մարդու իրավունքներին առնչվող մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այնպես էլ պաշտպանվում է երկրի գերագույն օրենքով՝ Սահմանադրությամբ, ոլորտին առնչվող համապատասխան օրենքներով:

Մեզանում տեղեկատվության ազատությունը նախատեսված է նաև մի շարք օրենքներով, որոնցից են 2003 թ. սեպտեմբերի 23-ին ընդունված ՀՀ օրենքը «Զանգվածային լրատվության մասին», ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին»: Եվրոպայի խորհրդի անդամ դառնալուց հետո Հայաստանի կողմից 2001 թ. վավերացվեց առաջին ընդգրկուն միջազգային փաստաթուղթը՝ Միավորված ազգերի կազմակերպության 1948 թ. ընդունած «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը»: Եթե օրենքի շրջանակներում քննվում է թե՛ տեղեկատվության տրամադրման ազատության, թե՛ սահմանափակման հարցը («որոնք, սակայն, պետք է սահմանված լինեն օրենքով և անհրաժեշտ լինեն այլ անձանց իրավունքների և հեղինակության հարգման, պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանման համար»[56]), ապա ժուռնալիստական էթիկայի կանոնագրերը չեն թվարկում տեղեկատվության սահմանափակման դեպքերը: Ապացույցը կանոնագրերում այս դրույթի բացակայությունն է, թեև օրենքի և էթիկական կանոնագրերի պահանջները որոշակիորեն նույնանում են հենց տեղեկատվության ազատության չարաշահման հարցում: Այն է՝ «**պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիքի հրապարակումը, մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության խախտումը,** համարվում են նաև քրեորեն պատժելի արարքներ, հետևաբար կարգավորվում են ՀՀ Քր. օրենսգրքի համապատասխանաբար 307-րդ, 144-րդ, 146-րդ հոդվածներով:

Այս չարաշահումները կարգավորվում են ոչ միայն օրենքով, այլև ժուռնալիստական էթիկայի կանոնագրերով: Բայց մասնագիտության պահանջը՝ ձեռք բերել ցանկացած տեղեկատվություն, երբեմն ստիպում է խախտել այդ սկզբունքը և դիմել տեղեկատվության հավաքման թույլատրելի ու անթույլատրելի մեթոդներին:

---

[56]Իրավունք, էթիկա և մասնագիտական հմտություններ հետաքննող լրագրողների համար, Երևան, 2008, էջ 11:

Ժուռնալիստական էթիկայի կանոնագրերն ուսումնասիրելիս տարբերակվում են այնպիսի սկզբունքներ, որոնց խախտումներն իրենց հերթին օրենքով նախատեսված պատժամիջոցներ են: Պատահական չէ, որ այդ խախտումների համար նախատեսված դրույթներ կան և՛ օրենքում, և՛ լրագրողական էթիկայի մասին տարբեր կանոնագրերում: Եթե օրենքի պարագայում հստակ սահմանվում են պատժամիջոցները, ապա էթիկայի կանոնագրերում կոչ է արվում խուսափել, ավելին, բացառել նմանատիպ չարաշահումները: Սա կարելի է բացատրել նրանով, որ և՛ օրենքի, և՛ տարբեր կանոնագրերի հիմքում ընկած է մարդու իրավունքները, համընդհանուր արժեքները հարգելու պահանջը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հասարակական շահերին վերաբերող խնդիրների լուսաբանման գործում օրենքի՝ զրպարտության և վիրավորանքի համար նախատեսված հոդվածները կարող են կիրառվել լրատվամիջոցներին ու լրագրողներին ճնշելու նպատակով, իրականում լրագրողական նպաստավոր պայմաններ ստեղծելու համար պետք է առկա լինի որոշակի պաշտպանվածություն:

Ինչևէ, այն, որ տարբեր կանոնագրերում ամրագրված էթիկական չափորոշիչներից յուրաքանչյուրն իր հերթին լրագրողների աշխատանքն ավելի կատարյալ դարձնելու փորձ է, միանշանակ է: Իսկ հետագայում զրպարտության, վիրավորանքի, պատվի, արժանապատվության ոտնահարման, «մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը խախտելու հայցերի վերաբերյալ վճիռ կայացնելիս իրավական համակարգերը պետք է ձգտեն չափանիշներ սահմանել՝ հասարակական և մասնավոր տեղեկատվությունը միմյանցից տարբերակելու համար»[57]:

<u>Տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը</u> մեկն է այն հիմնական սկզբունքներից, որոնք իրապես ամրագրված են թե՛ օրենքում, թե՛ ժուռնալիստական էթիկայի կանոնագրերում ու վարքականոններում: Առաջին հայացքից թվում է, թե օրենքը ևս համակարծիք է աղբյուրը չբացահայտելու սկզբունքի պահանջին, բայց իրականում նախատեսում է բացառություններ՝ առանձին դեպքերի համար, այն է՝ «դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, և սպառված են հասարակական շահերի

[57]Տեղեկացնելու իրավունք, Զանգվածային լրատվամիջոցների դերը տնտեսական զարգացման գործում, Երևան, 2003, էջ 211:

պաշտպանության մնացած բոլոր միջոցները»[58]: Սակայն շատ լրագրողներ, ելնելով սեփական համոզմունքներից, կարևորում են տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու համար տրված խոստումը և գերադասում են պատասխանատվություն կրել օրենքի առաջ, քան դեմ դուրս գալ սեփական սկզբունքներին:

Մի նկատառում. ժուռնալիստիկայում լայն տարածում գտած անանուն աղբյուրների կիրառումը հենց տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու սկզբունքի արդյունք է, ինչը մի կողմից երաշխիք է կարևոր տեղեկատվության ձեռքբերման համար, մյուս կողմից՝ չարաշահում որոշ լրագրողների ու լրատվամիջոցների կողմից անհիմն ասեկոսեներ ու բամբասանքներ տարածելու նպատակով: Արդյունքում տուժում է հասարակությունը, որը կանգնում է ապատեղեկատվություն ստանալու մեծ վտանգի առաջ: Այդ իսկ պատճառով որոշ լրատվամիջոցներ խիստ պահանջներ են ներկայացնում իրենց լրագրողներին՝ աղբյուրների հետ կապված: Օրինակ՝ Պրոֆեսիոնալ ժուռնալիստների ընկերության կողմից ընդունված էթիկական նորմերի կանոնագրում ասվում է. «Մինչև տեղեկատվության աղբյուրի անունը չհրապարակել խոստանալը, բացահայտեք նրա միտումները: Լիարժեք բացատրեք խոստումը կատարելու ձեր պայմանները՝ տրված տեղեկատվության փոխարեն: Խոստումը պետք է պահել»[59]:

Հայաստանում գործող էթիկայի կանոնագրերում նույնպես հատուկ ուշադրություն է դարձվում տեղեկատվության աղբյուրի պաշտպանությանը: Դիտորդ մարմնի վարքականոնի դրույթներից մեկը սահմանում է. §ÐÝ³ñ³íáñÇÝë խուսափել տեղեկատվության կոնֆիդենցիալ աղբյուրներ օգտագործելուց, Éñ³ïíáõÃÛ³Ý ³ÕµÛáõñÁ ·³ÕïÝÇ å³Ñ»Éáõ ËáëïáõÙÇó ³é³ç ÙÇßï å³ñ½»É ß³ñÅ³éÇÃÝ»ñÁ, ë³Ï³ÛÝ եթե տեղեկությունն այնուամենայնիվ տրվում է աղբյուրի գաղտնիության պայմանով, որևէ պարագայում չբացահայտել այն»[60]:

Ժուռնալիստական պրակտիկայում երբեմն օրենքի և էթիկական կանոնագրերի աղերսները չեն համընկնում: Խոսքը գոյություն ունեցող **փոխհարաբերությունների** մասին է: Օրինակ՝ տարբեր կանոնագրեր հատուկ կետ են սահմանում <u>լրագրող-գործընկեր</u> փոխհարաբերությունների մասին,

---

[58]ՀՀ օրենքը «Զանգվածային լրատվության մասին», Հոդված 5, Երևան, 2003:

[59]www.spj.org

[60]Դիտորդ մարմնի վարքականոն, Երևան, 10 մարտի, 2007:

ինչն, անշուշտ, մասնագիտության և ոչ թե օրենքի պահանջ է: Մեզանում առկա կանոնագրերից միայն «Առավոտ» օրաթերթի կողմից ընդունված էթիկայի կանոնագրում է, որ հստակ սահմանում կա այս փոխհարաբերության կարգավորման ու հնարավոր տարածայնություններից խուսափելու համար:

Հաջորդը **<u>տեղեկատվության ձեռքբերման անազնիվ մեթոդների կիրառումն է</u>**: Եթե օրենքը կտրուկ մերժում է նման մեթոդների օգտագործումը և այն համարվում է քրեորեն պատժելի արարք, ապա ժուռնալիստական էթիկայի տեսանկյունից տեղեկատվության ձեռքբերման անազնիվ մեթոդների կիրառումը կարող է արդարացված լինել այնքանով, որքանով միջոց է՝ ձեռք բերելու հասարակության շահերին առնչվող կարևոր տեղեկատվություն: Այսպես օրինակ՝ օրենքը մերժում է մարդու անձնական կյանք ներխուժելը, գաղտնի ձայնագրելն ու լուսանկարելը, հեռախոսային, նամակագրական, ընտանեկան տեղեկատվություն ձեռք բերելն ու հրապարակելը: Իսկ էթիկան որոշ դեպքերում (հասարակական շահերից ելնելով) թույլատրում է այդ ճանապարհով ստացված տեղեկատվության օգտագործումը:

Չնայած ժուռնալիստական կանոնագրերում ևս կարելի է հանդիպել այսպիսի ձևակերպումների. «*Խսáõë³÷»É ï»Õ»ÏáõÃÛáõÝÝ»ñÇ Ó»éùµ»ñÙ³Ý Í³ÍáõÏ ¨ ·³ÕïÝÇ Ù»Ãá¹Ý»ñÇó, µ³ó³éáõÃÛ³Ùµ ³ÛÝ ¹»åù»ñÇ, »ñµ ³í³Ý¹³Ï³Ý µ³ó Ù»Ãá¹-Ý»ñÁ ã»Ý ³å³ÑáíáõÙ Ñ³ë³ñ³Ï³Ï³Ý ß³Ñ»ñÇó µËáÕ ï»Õ»ÏáõÃÛáõÝÝ»ñÇ ëï³óáõÙÁ£ ²ÛëåÇëÇ Ù»Ãá¹Ý»ñÇ ÏÇñ³éÙ³Ý ³ÝÑñ³Å»ßïáõÃÛáõÝÁ å»ïù ¿ µ³-ó³ïñíÇ µáõÝ Ññ³å³ñ³ÏÙ³Ý Ù»ç¦*[61]: úñÇÝ³Ïª §²é³íáï¦ ûñ³Ã»ñÃÇ Ñ³Ù³ñÝ»ñÇó Ù»ÏáõÙ Éñ³·ñáÕÁ Ý»ñÍ³Û³ó»É ¿ñ Çµñ¨ Ù³ÝÏ³í³ñÅª Ù³ÝÏ³å³ñï»½ §Ù³Õ³ñÇãáí¦ ÁÝ¹áõÝí»Éáõ Éáõñ»ñÝ ëïáõ·»Éáõ Ñ³Ù³ñ: Èñ³·ñáÕÇ Ù³ëÝ³·ÇïáõÃÛáõÝÁ Ã³ù-óÝ»Éáõ Ù³ëÇÝ Ýßí³Í ¿ñ Ñá¹í³ÍÇ ëÏ½µáõÙ:

Մյուս կողմից կան խնդիրներ, որոնց կարգավորման հարցում օրենքը և էթիկան համակարծիք են: Այդպիսիք են, օրինակ, նվեր վերցնելը, անվճար հյուրասիրություն ընդունելը, անգամ մի գավաթ սուրճը. մասնավորապես՝ «Յուէսէյ Թըդեյ»-ի էթիկայի կանոնագիրը «նվերներ» դրույթի տակ սահմանում է.«Մենք չենք ընդունում նվերի գաղափարը: 25 դոլարից ավելի արժողության հյուրասիրությունը պետք է անմիջապես վերադարձվի մի երկտողով՝ բացատրությամբ, թե ինչու այն չեք կարող ընդունել... եթե ներկայացման, ճաշկերույթի, սպորտային և այլ իրադարձությունների համար մամուլն ունի հատուկ տեղեր, անվճար մասնակցությունը

[61] Նույն տեղում, Սկզբունք 2.3:

թույլատրելի է: Սակայն անձնական օգտագործման համար անվճար տոմսերը ընդունելի չեն»[62]:

էթիկայի տեսանկյունից այս արգելքը ենթադրում է որևէ մեկի հանդեպ պարտավորվածության բացառում: Ավելին, եթե էթիկայի կանոնագրերում մանրամասն նշվում է նվերի չափը, արժեքը, ապա օրենքը նմանատիպ արարքները դիտում է որպես կաշառք, որի տարբեր ձևերի համար նույնիսկ պատժամիջոց է նախատեսված ՀՀ Քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով: Նվերներ ընդունելու հարցը ևս իրավագիտության մեջ տեղ գտած վեճերից մեկն է: Որոշ քրեագետներ այն կարծիքին են, որ այս դեպքում ամենևին էլ կաշառքի հանցակազմ չկա, իսկ մյուսները չեն բացառում, որ «այդպիսի ընդհանուր բարեհաճ վերաբերմունքն, այնուամենայնիվ, ենթադրում է կաշառք տվողի օգտին ապագայում կոնկրետ արարքի կատարում»[63]:

Ընդհանրացնելով նկատենք, որ թե՛ էթիկայի տարբեր կանոնագրերը, թե՛ օրենսդրական դրույթները պետք է հստակ սահմանեն տարաբնույթ հարաբերությունների կարգավորման սկզբունքները՝ այդպիսով նպաստելով երկրում իսկական ժողովրդավարական հարաբերությունների և, առհասարակ, քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու կայացմանը:

---

[62] Ժուռնալիստիկա, Տեսության և պատմության հարցեր, Պրակ Ա, Երևան, 1999, էջ 243:

[63] ՀՀ Քրեական իրավունք, Հատուկ մաս, Դասագիրք բուհերի համար, 2-րդ հրատարակություն, Երևան, 2006, էջ 801:

ԳԼՈՒԽ 2
ԷԹԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2.1. ԷԹԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Այն փաստը, որ ժուռնալիստական էթիկան գիտության ինքնուրույն ճյուղ է, վկայում են Արևմուտքում բնագավառի մասին լույս տեսնող մեծաթիվ աշխատությունները: Մեզանում ժուռնալիստական էթիկա հասկացությունը «շրջանառության մեջ մտավ վերջին տասնհինգ տարիների ընթացքում, և դա կապված է մեր երկրում նախկին պետական-միակուսակցական լրատվամիջոցներին փոխարինած ազգային, հանրային, ինչպես նաև նորաստեղծ անկախ կամ մասնավոր տարբեր լրատվամիջոցների ի հայտ գալու հետ»[64]: Հայկական ժուռնալիստիկայում ևս, միջազգային փորձի օրինակով, սկզբնավորվեց և աստիճանաբար սկսեց զարգացում ապրել մամուլի ազատականացման գործընթացը: Խոսել այս գործընթացի բարձր մակարդակի մասին առայժմ անհնար է, քանզի այն մի կողմից ենթադրում է ոլորտի լիակատար անկախացում իշխանություններից, մյուս կողմից նախատեսում է բնագավառի մասնագետների հմտացում և լրագրողի բարոյական կերպարի ձևավորում: Տեղին է մեջբերել էթիկայի համաշխարհային ինստիտուտի հիմնադիր Ռիշվորդ Կիդդերի այն տեսակետը, որ «էթիկան չգրված օրենքներին ենթարկվելն է, այսինքն՝ լրագրողները պետք է ենթարկվեն իրենց իսկ կանոններին, հետևեն իրենց նյութերի ճշգրտությանը և ոչ թե առաջնորդվեն պետության կամ որևէ այլ կազմակերպության կողմից ընդունված օրենքներով, վարվեն այսպես կամ այնպես»[65]: Լրատվության բնագավառի օրենսդրական կարգավորման վերաբերյալ բանավեճերը մեզանում սկսեցին ծավալվել պետականության վերականգնումից անմիջապես հետո ու շարունակվում են մինչ օրս: Կողմերից մեկի կարծիքով՝ «պետք է հետևել ԱՄՆ օրինակին, ասել է, թե մամուլի մասին որևէ հատուկ օրենքի անհրաժեշտություն չկա, խոսքի ազատության մասին սահմանադրական և միջազգային փաստաթղթերի

[64] Իրավունք, էթիկա և մասնագիտական հմտություններ հետաքննող լրագրողների համար, Երևան, 2000, էջ 194:

[65] Philip Patterson and Lee Wilkins, Media ethics: Issues and Cases, 4th ed., p. 25.

դրույթները բավարար հիմք են լրատվամիջոցների գործունեության համար»[66], մյուս կողմը գտնում է, որ լրատվամիջոցների գործունեությունը «հատուկ կարգավորման անհրաժեշտություն ունի»[67]: Բայց սա չի նշանակում, թե միայն ոլորտին առնչվող օրենքներով և օրենսդրական տարբեր դրույթներով պետք է կարգավորվի ոլորտը:

Յուրաքանչյուր երկրի հասարակական, սոցիալ-տնտեսական, քաղաքական կացութաձևով պայմանավորված՝ ժուռնալիստիկան անցնում է զարգացման նոր փուլ: Ասվածի լավագույն ապացույցը 1991 թ. խորհրդային հասարակարգի փլուզմամբ ակնկալվող անկախության հաստատումն էր: Խորհրդային տարիներին կոմկուսը մամուլն օգտագործում էր սեփական գաղափարախոսությունը հասարակության շրջանում տարածելու համար՝ այդպիսով որոշակիացնելով թե՛ ժուռնալիստիկայի դերը որպես մասնագիտություն և թե՛ լրագրողի կարգավիճակը հասարակության մեջ: Ամերիկյան տեսաբան Ուիլբուր Շրամն իր «Կոմունիստական մամուլի տեսությունը» աշխատության մեջ հստակ տալիս է զանգվածային լրատվամիջոցների կոմունիստական կոնցեպցիայի նկարագիրը, այն է՝ «Լրատվամիջոցներն օգտագործվում են իբրև գործիք պետության և կուսակցության համար և նմանատիպ «գործիք» հանդիսացող մյուս կառույցների հետ կազմում են մի ամբողջություն»[68]:

Նման իրավիճակում խոսել և կարևորել ժուռնալիստական էթիկայի հարցը, անիմաստ կլիներ: Ու թեև ԽՍՀՄ ժուռնալիստների միության և նրա մարզային բաժանմունքներում ստեղծվել էին մասնագիտական էթիկայի և իրավունքի հարցերով զբաղվող խորհուրդներ (մի նկատառում. չնայած լրատվամիջոցների նկատմամբ կոմկուսի վերահսկողությանը, այնուամենայնիվ, ինքնակարգավորման հարցը այսպես, թե այնպես շոշափվել է՝ ի դեմս նման խորհուրդների ձևավորման), նրանց գործունեության շրջանակները սահմանափակ էին: Մասնագիտական էթիկայի խնդիրները լուծվում էին նեղ շրջանակում, իսկ լրագրողների և հիմնադիրների (սրանք տարբեր մակարդակների կուսակցական կոմիտեներն էին) միջև փոխհարաբերությունները որակվում էին որպես «հայցող-պատասխանող»:

---

[66] Ժուռնալիստիկա, Տեսության և պատմության հարցեր, Պրակ Դ, Երևան, 2003, էջ 95:

[67] Նույն տեղում, էջ 95:

[68] **Shrum W.,** Soviet Comunistic Press, 1997, p. 25.

Ուսումնասիրելով 1991 թ. ապրիլի 24-ին ԽՍՀՄ ժուռնալիստների միության կողմից առաջին ընթերցմամբ ընդունված ժուռնալիստական էթիկայի մասին կանոնագիրը՝ նկատում ենք, որ այն նախատեսում է՝ մի դեպքում ժուռնալիստների կողմից իրենց իսկ պարտականությունների հետևողական կատարում, մյուս կողմից ուղեցույց է ժուռնալիստական էթիկայի խախտման դեպքերը քննելու համար, թեև կանոնագրի 2-րդ հոդվածում ասվում է, «ժուռնալիստը չպետք է դառնա առանձին կամ խմբային հետաքրքրություններով առաջնորդվող, քանզի լրատվամիջոցները կոչված են հանրությանը ներկայացնել օբյեկտիվ, ճշգրիտ, փաստացի ինֆորմացիա»[69]:

1980-ականների վերջին և 90-ականների սկզբին ստեղծված քաղաքական բարդ խմորումներն ի վերջո հանգեցրին ԽՍՀՄ փլուզմանը, ինչի հետևանքով նախկին միութենական հանրապետությունները, այդ թվում՝ Հայաստանը, բռնեցին անկախության ուղին: «Անկախության հեռանկարը ենթադրում էր խորհրդային տարիների անուրանալի ձեռքբերումների պահպանում, եղած ակնհայտ արատների վերացում, նոր արժեքների հաստատում: Մինչդեռ կատարվեց անկանխատեսելին. անցած ավելի քան մեկ տասնամյակը բնութագրվում է նախկին հաջողությունների փլուզմամբ, կորստաբեր նոր զարգացումների ձևավորմամբ, թեև ակնհայտ են ձեռքբերումները ևս: Մամուլն այն քիչ ոլորտներից է, որտեղ հիշյալ ձեռքբերումները որոշակի են»[70]: Մամուլի ազատությունն ինքնին ենթադրում էր կարծիքների ազատություն. մարդիկ այլևս չէին վախենում իրենց տեսակետներն արտահայտելուց: Սակայն մամուլի քաղաքական ազատությունն ու անկախությունը սկսեցին մեծապես պայմանավորվել ֆինանսատնտեսական գործոնով: Երկրի տնտեսական ճգնաժամը չէր կարող իր ազդեցությունը չունենալ լրատվամիջոցների բնականոն գործունեության վրա:

Շուկայական հարաբերությունները նպաստեցին ինչպես երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու հոգևոր ոլորտներում բազմակարծության ձևավորմանը, այնպես էլ հիմք հանդիսացան անկախ մամուլի և, առհասարակ, ժողովրդավարական գործընթացների զարգացման համար: Առաջին հերթին, այսպես կոչված, մամուլի քաղաքական ազատությունը

---

70 Кодекс профессиональной этики журналиста (принят 1 съездом журналистов СССР на конфедеративной основе 24 апреля), статья 2, 1991.

[70]Ժուռնալիստիկա, Տեսության և պատմության հարցեր, Պրակ Ա, Երևան, 2000, էջ 20:

ենթադրում էր գրաքննության վերացում: Բայց ազատությունը կարող է իրագործվել այն ժամանակ, երբ սերտորեն առնչվում է պատասխանատվության հետ: Անկախության առաջին տարիներին լրատվամիջոցներում տեղ գտած անստույգ, ոչ հավաստի փաստերն ու տեղեկատվությունը նվազեցրին մամուլի հանդեպ լսարանի վստահությունը: Սա իր հերթին խորացրեց լրատվամիջոցների, հատկապես տպագիր պարբերականների ճգնաժամային վիճակը՝ հանգեցնելով բաժանորդների, սպառողների թվի կտրուկ նվազման: Չնայած սրան՝ օրեցօր երևան էին գալիս նոր թերթեր՝ տարբեր ուղղվածություններով: Նրանց «քանակական պոռթկումը փոխեց ժուռնալիստիկայի նկարագիրը և ընդլայնեց ինֆորմացիա ստանալու հնարավորությունը»[71]: Սակայն, ինչպես ասում են, քանակը միշտ չէ, որ որակ է, պրոֆեսիոնալիզմ և բարոյականություն:

ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանում նոր մամուլի կայացման գործընթացը չէր կարող իր անմիջական ազդեցությունը չունենալ մեզանում ժուռնալիստիկայի ձևավորման ու զարգացման ընթացքի վրա: Այդ գործընթացը կարելի է բաժանել մի քանի փուլերի. անկախության առաջին երեք տարիները բնութագրվում են որպես մամուլի հին, ավանդական ձևերից ու կաղապարներից ազատվելու տարիներ, երբ մամուլը խորհրդային կարգերի քայքայումից հետո ազատվեց կուսակցական ճնշումներից: Հատկապես «1992 թ. կարելի է դիտել իբրև Երրորդ հանրապետության մամուլի սկզբնավորման տարի»[72՝] հիմնված բազմակարծության վրա: Նշված փուլում կարելի է առանձնացնել ժուռնալիստիկայի երկու մոդել՝

1. «Վերակառուցողական», որն անմիջականորեն կապված է ԽՍՀՄ առաջին և միակ նախագահ Մ. Ս. Գորբաչովի անվան հետ: Այստեղ մամուլը հանդես եկավ իբրև բյուրոկրատիայի «քննադատ» և ժողովրդավարության գործիք, երբ բոլոր ժուռնալիստներն սկսեցին մտածել և գրել ազատ: Միևնույն ժամանակ պահպանվում էր կուսակցության ղեկավար դերը, և մամուլը նպաստում էր ժողովրդավարության իրականացմանը վերևից: Ժուռնալիստիկայի «գործիքային» մոդելը Գորբաչովի և նրա կողմնակիցների կողմից օգտագործվում էր «ժողովրդավարության» ձևավորման համար:

---

[71] **Անանյան Գ.Գ.,** Արդի հայ մամուլի լույսն ու ստվերը, Երևան, 2001, էջ 28:

[72] Նույն տեղում, էջ 8:

2. Նոր մամուլի կայացման մյուս շրջանը վերաբերում է հիմնականում 1991 թ. «Մամուլի և զանգվածային մյուս լրատվամիջոցների մասին ՀՀ օրենքի» ընդունմանը, երբ որոշակի արտոնություններ տրվեցին ժուռնալիստներին»:

Այս փուլում ժուռնալիստական էթիկայի մասին պատկերացումները հստակ չէին. եթե հիմնադիրների նպատակն էր նոր պարբերականներ հիմնել, ապա լրագրողներն ավելի շահագրգիռ էին լուսաբանել նախկինում «փակ» թեմաները: Վիճակը գրեթե նույնն էր անկախ մամուլի կայացման մյուս փուլում (1993-1996 թթ.), որը բնութագրվում է իբրև «լճացման տարիներ»[73]:

1998 թ. իշխանափոխությամբ սկսվում է նոր մամուլի ձևավորման հաջորդ փուլը, երբ «իշխանությունները հրաժարվում են ԶԼՄ-ների գործունեությանը բացահայտ ու կոպիտ միջամտելուց»[74]: Ընդհանուր առմամբ խորհրդային կարգերի փլուզումը հանգեցրեց ոչ միայն միակենտրոն ղեկավարության վերափոխմանը բազմակենտրոնի, այլև հող նախապատրաստեց նոր կուսակցությունների, հասարակական շարժումների, տարբեր ուղղվածության հասարակական կազմակերպությունների ու միությունների ձևավորման համար: Վերջիններս իրենց գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով ստեղծեցին սեփական լրատվամիջոցներ: Մեծացավ լրատվամիջոցների ու նրանց ներկայացուցիչների համարձակությունը, բուն ինֆորմացիան դարձավ ավելի օպերատիվ ու ամբողջական: Այդուհանդերձ, բազում լրատվամիջոցներ անսքող ձևով հանդես են գալիս իբրև տնտեսական-քաղաքական որոշակի ուժերի շահերի արտահայտիչ: Այս պայմաններում մի կողմից հասարակությունն ստանում է բազմակողմանի տեղեկատվություն, ընդլայնվում են խոսքի ազատության սահմանները, տեղեկատվության աղբյուրներն աչքի են ընկնում բազմազանությամբ, մյուս կողմից նկատելի է դառնում լրատվամիջոցների սեփականատերերի ազդեցությունը ինֆորմացիոն քաղաքականության ձևավորման գործում: Ավելի կոնկրետ՝ անկախության առաջին տարիներին հայկական տեղեկատվական միջավայրում զգալի տեղ են զբաղեցնում պետական և կուսակցական լրատվամիջոցները: Եթե առաջինները շարունակում են միակենտրոն մամուլին բնորոշ գործելաոճը, ապա երկրորդներն իրենց լրատվամիջոցներն ամբիոն են դարձնում բարձրաձայնելու ոչ միայն սեփական տեսակետները երկրի սոցիալ-

[73]Նույն տեղում, էջ 9:
[74] Նույն տեղում, էջ 10:

տնտեսական, քաղաքական հարցերի մասին, այլև միմյանց քաղաքականությունը «քննելով»:

Ժամանակի հետ կուսակցական առանձին օրգաններ («Հայք», որը հետո վերաբացվեց, «Այժմ», «Նոր ուղի», «Հնչակ», «Ազդարար»), չդիմանալով քաղաքական պայքարին, դադարեցին լույս տեսնել: Մյուսներն էլ համալրեցին «անկախ մամուլի» շարքերը («Ազգ», «Հայոց աշխարհ»)[75], այդուամենայնիվ, լիարժեք չձերբազատվելով կուսակցական հատկանիշներից: Հենց այստեղ էլ նշենք այն թյուր պատկերացումը, որ նկատվեց մեզանում այդ տարիներին. ազատ մամուլին բնորոշ հատկանիշները շփոթվեցին ընդդիմադիր խոսքի հետ, ինչը նույն կերպ շարունակվում է մինչ օրս: Սա էլ ժուռնալիստական էթիկայի բազում խախտումների պատճառն է, որոնցով լի են օրաթերթերը և հայաստանյան մամուլն առհասարակ:

Եթե փորձենք համեմատության մեջ ներկայացնել հետխորհրդային երկրների մամուլին բնորոշ դրսևորումները, կնկատենք, որ հայկական մամուլի առջև ծառացած խնդիրները քիչ են տարբերվում մյուսներից: Օրինակ՝ Ադրբեջանում ալիևյան դիկտատուրան է: Վերջինիս քննադատությունը մամուլում բացառված է: Մամուլը փորձում է պահպանել իր ինքնուրույնությունը, սակայն դա հաջողվում է ընդամենը ֆինանսական առումով: Իսկ բալթյան երկրներում գործընթացն ավելի քաղաքակիրթ բնույթ է ընդունել: Այստեղ ՁԼՄ-ների հարաբերությունները տերերի հետ կառուցվում են փոխադարձ վստահության վրա, և շեշտը դրվում է համագործակցության արդյունավետության վրա: Օրենքով պետությանն արգելված է ֆինանսավորել որևէ լրատվամիջոց, ունենալ պետական ու գերատեսչական մամուլ, իսկ հանրային հեռուստատեսությունը ավելի սուր է քննադատում իշխանություններին, քան անկախ պարբերականները: Որևէ պետական ինստիտուտ 24 ժամից ավելի չի կարող լռել, եթե լրագրողը դիմել է հարցով, այլապես հարցը կտեղափոխվի դատարան: Այստեղ լուրջ դերակատարություն ունեն լրագրողական արհեստակցական միությունները, որոնք հետամուտ են տարբեր խնդիրների լուծմանը: Բալթյան երկրների ժողովրդավարական գործելաոճը նկատելի չէ նախկին միութենական և ոչ մի երկրում:

Այս ֆոնի վրա հայկական մամուլի հեղհեղուկ վիճակը, մասնագիտական համերաշխության բացակայությունը ծնում են էթիկական լուրջ խախտումներ: Ինչևէ, անկախությամբ հաստատված հասարակական, քաղաքական հարաբերությունները լուրջ փորձություն էին թե՛ ավանդական, թե՛

[75]Նույն տեղում, էջ 32:

նոր ստեղծված հրատարակությունների համար: Եթե հներից ոմանք շարունակեցին նույն գործելաոճը («Գարուն», «Ոզնի». սըրանք հավատարիմ մնացին իրենց կեցվածքին), մյուսներն էլ անվանափոխվելով՝ փորձեցին նոր երանգ հաղորդել իրենց լուսաբանումներին («Խորհրդային Հայաստան»-ը՝ «Հայաստան», «Коммунист»-ը՝ «Голос Армении»), ապա նոր հրատարակությունները ջանում են ներկայանալ ազատ մամուլի դիրքերից: Ավելին, եթե խորհրդային շրջանում մամուլի վրա ճնշումն ակնհայտ էր, ապա երկրի քաղաքական անկախությունը ծնեց հիվանդագին մի «ազատություն», երբ միանշանակ անտեսվում են ժուռնալիստական էթիկայի հիմնարար սկզբունքները՝ ծնունդ տալով արատավոր մի շարք երևույթների (վիրավորանք, զըրպարտություն, փաստերի հորինում) ի հայտ գալուն: Պատճառը մի կողմից լրատվամիջոցների իրական տերերի կամքի դրսևորումն ու ցանկությունն է, մյուս կողմից՝ ցածր պրոֆեսիոնալիզմն ու որոշ լրագրողների՝ մասնագիտական կարողություններին անտեղյակությունը:

Եթե նոր մամուլի ձևավորման սկզբնական շրջանում խոսք չէր կարող լինել ժուռնալիստական էթիկայի մասին, ապա ինչպես Ռուսաստանում, այնպես էլ անկախացած Հայաստանում լրագրողական կազմակերպություններն ու ընկերությունները հետամուտ եղան ոլորտը կարգավորող կանոնագրերի ընդունմանը: Նկատելի է, որ Հայաստանում ժուռնալիստական էթիկայի հանդեպ հետաքրքրությունը, ապա ոլորտը կարգավորելու համար ձեռնարկված համապատասխան միջոցների մշակումը նկատվեց անկախ ժուռնալիստիկայի ձևավորման շրջանում: Գործընթացն սպասելի էր, քանզի նոր ծնունդ առած լրատվամիջոցներն իրենք էին փորձում կարգավորել էթիկական խնդիրներին առնչվող տարբեր իրավիճակները (նախաձեռնություններն ավելի կոնկրետացան 1995 թ.):

Ինչևէ, եթե անկախության հաստատումը մի կողմից նպաստեց ազատ խոսքի, բազմակարծության ձևավորմանը, մյուս կողմից լուրջ «սպառնալիք» դարձավ պրոֆեսիոնալ լրագրության չափանիշների, ժուռնալիստական էթիկայի սկզբունքների անտեսման համար:

2.2. ԺՈՒՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Թերթը նման է մեծ նավի, որը չի նավարկում առանց անձնակազմի, և որի յուրաքանչյուր անդամն ունի իր պարտականություններն ու ղեկավարվում է նավապետի կողմից[76]:

Մերօրյա հասարակությունը բավական ակտիվ մասնակցություն ունի երկրի քաղաքական-հասարակական կյանքում տեղի ունեցող իրադարձություններին: Սա վկայում է մեր հասարակության քաղաքականացված լինելու մասին: Այս գործընթացում, բնականաբար, իրենց դերակատարությունն ունեն տարբեր քաղաքական ուժերն ու նրանց տպագիր օրգանները: Հասարակության տեղեկատվական քաղաքականացվածությունը երրորդ հանրապետության մամուլը ժառանգություն ստացավ դեռևս «ինքնահրատից», ի դեմս՝ Ազգային ինքնորոշում միավորում կուսակցության օրգանների՝ երկլեզու՝ հայերեն, ռուսերեն «Տեղեկագրի» (1987 թ. մայիս), «Անկախություն» շաբաթաթերթերի (1987 թ. հոկտեմբեր): Անկախության առաջին տարիներին ավանդական կուսակցությունների կողքին օրեցօր ավելանում էին նորերը, որոնք սեփական գաղափարախոսության մասին հասարակությանն իրազեկելու լավագույն միջոցը համարում էին կուսակցական պաշտոնաթերթերը: Ստեղծված բազմակարծության պայմաններում լսարանը ձեռք բերեց տեղեկատվության ազատ ընտրության հնարավորություն: Սա մի կողմից նպաստում էր այս կամ այն կուսակցության գաղափարախոսության տարածմանը, մյուս կողմից՝ թույլ էր տալիս քաղաքական իրադարձությունները դարձնել հասարակական բուռն քննարկումների նյութ:

Ընդհանուր առմամբ, մեզանում տպագիր մամուլը բաժանված է կողմերի՝ *իշխանամետ, կուսակցական պաշտոնաթերթեր, ընդդիմադիր, օլիգարխների ֆինանսավորմամբ լույս տեսնող թերթեր*: Քաղաքակիրթ երկրներում տարանջատվում են մամուլի հետևյալ տեսակները՝ **քաղաքական և ոչ քաղաքական**: Եթե ոչ քաղաքական մամուլը կոչված է քննարկելու և արծարծելու տարաբնույթ հարցեր, ապա քաղաքական մամուլն ունի հստակ արտահայտված խնդիրներ: Դրանք ուղղված են այս կամ այն քաղաքական գաղափարախոսության քարոզչությանն ու քաղաքական

[76] **Լեոնարդ Ռեյ Թիլ, Ռոն Թեյլոր,** Դեպի խմբագրություն, Երևան, 2002, էջ 51:

ծրագրերի հասարակայնացմանը: Ուստի, տեղեկատվությունը քաղաքական մամուլում ձեռք է բերում ուրույն ուղղվածություն ու գաղափարական մեկնաբանություն. այն ներկայացվում է քաղաքական մամուլի գաղափարական դիրքորոշումների հարթության վրա:

Նախկին ԽՍՀՄ-ում իբրև հզոր քաղաքական-գաղափարական զենք հանդես էր գալիս ԽՄԿԿ Կենտկոմի «Պրավդա» օրաթերթը, որը ցանկացած տեղեկատվության տալիս էր քաղաքական երանգ: Ճիշտ նույն կերպ էին վարվում «Կոմսոմոլսկայա պրավդա», «Իզվեստիա» և այլ թերթեր: Դրանց գլխավոր նպատակը տեղեկատվությունը կոմունիստական հայացքներին ու կոմունիստական դաստիարակության հարցերի լուսաբանմանը ծառայեցնելն էր: Բնականաբար, այս շրջանի մամուլում դժվար է գտնել էթիկական լուրջ խախտումներ:

Նկատելի չարաշահումը *կողմնապահությունն էր, սուբյեկտիվությունը:* Նույնն էր նաև նախկին Խորհրդային Հայաստանում, որտեղ քաղաքական մամուլի առաջատարներն էին «Սովետական Հայաստան», «Կոմունիստ», «Ավանգարդ» թերթերը: Անցած դարի 90-ական թվականներից ժողովրդավարական գործընթացների հաստատմանը զուգահեռ, Հայաստանում ձևավորվեցին քաղաքական ուղղվածության նոր թերթեր:

Հայաստանում քաղաքական կամ կուսակցական մամուլի շարքին են դասվում «Հայաստանի Կոմունիստ», «Իրավունք», «Հանրապետական», «Հայք», «Օրինաց Երկիր» ու այլ թերթեր, որոնք ներկայացնում են ՀԿԿ, ՍԻՄ, ՀՀԿ, ՀՀՇ, Օրինաց Երկիր կուսակցությունները:

Նույն տեղեկատվությունը այս թերթերից յուրաքանչյուրում ձեռք է բերում կուսակցական նկարագիր, մատուցման ինքնատիպ արտահայտություն: Իսկ ի՞նչ դրսևորումներ է ստանում ժուռնալիստական էթիկան քաղաքական մամուլում: Վերջինիս հիմնական գործառույթը հասարակության գաղափարական իրազեկումն է: Սա արդեն ժուռնալիստական էթիկայի հիմնարար սկզբունքներից մեկի՝ *օբյեկտիվության* անտեսումն է, քանզի տեղեկատվության մատուցումը բխում է զուտ կուսակցական շահերից, այլ կերպ ասած՝ առկա է սուբյեկտիվությունը: Մյուս կողմից իշխանամետ կուսակցական մամուլում ժուռնալիստական էթիկայի սկզբունքներից վիրավորանքը, զրպարտությունը, պատվի, արժանապատվության ոտնահարումը լուրջ արտահայտություն չեն ստանում: Դրանք ավելի շատ նկատելի են այս կամ այն կուսակցության համակիր թերթերում կամ բացառապես ընդդիմադիր կուսակցական օրգաններում: Նկատենք նաև, որ քաղաքական լուսաբանումների համատեքստում լուրջ դերակատարություն ունեն այսպես կոչված «անկախ» թերթերը՝ «Չորրորդ իշխանություն»

(ապա՝«Չորրորդ ինքնիշխանություն»), «Հրապարակ», «Փակագիծ», «Ժամանակ Երևան», «Հայկական ժամանակ», «Ժողովուրդ» և այլն: Ժուռնալիստական էթիկայի սկզբունքների չարաշահումներն այս պարբերականներում ցայտուն դրսևորում ունեն՝ սկսած գրեթե միշտ հանդիպող վուլգար բառաֆոնդից մինչև զրպարտություն ու վիրավորանք: Այս ուղղվածության թերթերի գործելաոճում կա մի նրբություն ևս՝ խմբագրի, հրատարակչի ու ֆինանսավորողի ակնհայտ ազդեցությունը: Սա իր հերթին լրագրողին պարտադրում է որոշակի կողմնապահություն:

Այսպիսով, մերօրյա ժուռնալիստիկայում էթիկական նորմերի արդյունավետ ներդրումն առայժմ անիրական է: Պատճառներից մեկն, ըստ մամուլի տեսաբանների, այն է, որ «պատասխանատու, սկզբունքային, բարոյական լրագրության համար վճարում են հազվադեպ ու քիչ: Դրա փոխարեն՝ քաղաքական հակառակորդներին խայթելը, տիրոջ կամ պատվիրատուի համար անցանկալի անձանց ցեխոտելը դարձել են բավականին եկամտաբեր զբաղմունք»[77]:

Ընդհանրացնելով ասենք, որ չնայած մեր հասարակության քաղաքականացված լինելու հանգամանքին, ինչպես 90-ականների սկզբներին, այնպես էլ այսօր կուսակցական պաշտոնաթերթերն ու քաղաքական մամուլն առհասարակ չեն իրագործում հասարակական մթնոլորտում կայունություն հաստատելու իրենց պարտականությունը: Փոխարենը՝ քաղաքական ուժերի և նրանց համակիրների միջև հակասությունները տեղափոխվել են մամուլ: Որոշ լրատվամիջոցներ ստացել են դեղին ժուռնալիստիկային հատուկ երանգավորում: Ժուռալիստիկայում ձևավորվել են որոշակի մեթոդներ, որոնց մի մասի նպատակը լսարան նվաճելն է: Եթե տեղեկատվական պարբերականներն այդ հնարանքների միջոցով փորձում են ավելացնել պարբերականի ֆինանսական շրջանառությունը, ապա քաղաքական հրատարակությունները նախընտրում են հասարակության մեջ ամրապնդել սեփական դիրքերը: Այս հնարանքները ավելի շատ տարածված ու զարգացած են Արևմուտքում ու թեև հիմա մուտք են գործել նաև Հայաստան, բայց դրանց գործածության պրոֆեսիոնալ մակարդակները տարբեր են:

2.3. ԷԹԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԱՆՐԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

[77]Քաղաքական պայքարը և լրագրողի մասնագիտական բարոյականությունը, Երևան, 2000, էջ 9:

Լրագրողական նյութի թեման տարբեր բնագավառների (քաղաքակա-նություն, տնտեսություն, մշակույթ և այլն) հիմնախնդիրներն են: Իսկ թե դրանց մեկնաբանումը ի՞նչ «գունապնակով» և ժանրային ի՞նչ ասպեկտով է մատուցվում հայ ընթերցողին, քննության հետաքրքիր նյութ է:

Ժանրը հստակ հատկանիշներ ունեցող ստեղծագործության կայուն ձև է: Ելնելով այդ հատկանիշներից՝ տեսաբանները ժուռնալիստիկայի ժանրերը դասակարգում են ըստ իրենց բնութագրերի: Դրանք են՝ *ժանրի առարկան, նպատակը և ներկայացման մեթոդը՝ նյութի շարադրման առանձ-նահատկությունը*: Այս վերջին բնութագրիչն է, որ թույլ է տալիս բա-ցահայտել տվյալ նյութում առկա ժուռնալիստական էթիկայի սկզբունք-ների չարաշահումները: Հայաստանում պրակտիկ լրագրողների մե-ծամասնությունն իր աշխատանքի ընթացքում ժանրային տարբերակում չի դնում: Այսինքն՝ նրանց համար կարևոր չէ՝ գրում են թղթակցության, հաշվետվության, ֆելիետոնի, թե ռեպորտաժի ժանրով: Դա է պատճառը, որ հաճախ մեր մամուլում հանդիպում ենք խառը ժանրերի: Իհարկե, խոսքը չի վերաբերում լուրին և հարցազրույցին. սրանք ունեն իրենց հստակ պահանջներն ու կառուցվածքը:

Քաղաքական անցուդարձը հատկապես ընդդիմադիր մամուլում լուսա-բանվում է հիմնականում **սյունակագրության, քննադատական հոդվածի, ֆելիետոնի, երբեմն էլ ռեպլիկի** ժանրերով: Թերթի գաղափարական ուղղվածությունն ու քաղաքական կողմնորոշումն անթաքույց է բուն նյութի շարադրանքում:

Օրինակ՝ «Հայք», «Հայկական ժամանակ», «Չորրորդ իշխանություն» (ապա՝ «Չորրորդ ինքնիշխանություն») թերթերն իրենց տեսակետն արտահայտելիս կիրառում են անընդունելի, ականջ չշոյող բառապաշար: Այն երբեմն անցնում է թույլատրելիի սահմանը: «Հայք» և «Հայկական ժամանակ» օրաթերթերում խմբագրության անհանդուրժող վերաբերմունքն ամփոփվում է **սյունագրության ժանրում:** Այստեղ կարելի է գտնել էթիկական մի շարք խախտումներ՝ ժարգոն, անանունություն, մասամբ՝ վիրավորանք: Հակառակ սրանց՝ հիշամետ մամուլի նախկին առաջատարներից մեկի՝ «Առավոտ» օրաթերթի սյունակները չունեն կոնկրետ հերոսներ. ընդհանրացումներով քննվում է հիմնախնդիրը, երևույթը: Իսկ սա արդեն էթիկայի խախտում չէ, այլ բազմակարծության դրսևորում: Նույնը չի կարելի ասել «Իրավունք» պաշտոնաթերթի մասին: Երկօրյա այս հրատարակության **«Շաբաթվա զարմանքը» սյունակաշարը** լի է ժուռնալիստական էթիկայի խախտումներով: Չնայած այստեղ կան կոնկրետ հերոսներ, բայց ժանրը կառուցված է գրագետ ու խորամանկ. սյունակագիրն ամեն համարում

ընթերցողին է ներկայացնում նախագահի, իշխանական, ընդդիմադիր քաղաքական ու հասարակական գործիչների, տարբեր չինովնիկների, արվեստագետների՝ շաբաթվա ընթացքում արտահայտած մտքերը, անում համապատասխան մեկնաբանություններ՝ ժողովրդական ասացվածքների ու սյունակի «հերոսների» որոշ ձևակերպումների մեջբերմամբ:

Թերթային շտամպը մամուլում հաճախ է հանդիպում նորությունների սյունակներում: Բայց դա միայն նորություններում չէ, որ արտահայտվում է. իլյուստրացիոն լուծումների դեպքում ևս կարելի է հանդիպել: Թերթային ոճը հակում ունի չափազանցությունների և իրավիճակի ավելորդ դրամատիզացման: Սա իր հերթին առաջ է բերում բուլվարային մամուլին հատուկ դրսևորումներ, որոնք ոչ միայն ժուռնալիստական էթիկայի խախտումներ են, այլև փչացնում են ընթերցողի ճաշակը: Բայց սա չի խանգարում, որ ավելանա սենսացիոն հրատարակությունները նախընտրողների բանակը:

Քաղաքական մեկնաբանություններն ընդդիմադիր օրգաններում կոնկրետանում են նաև **ֆելիետոնի** ժանրում: Նախկինում Ռուսաստանում ֆելիետոն էր համարվում թերթի վերջին էջի ներքևում զետեղված նյութը: Այս տարբերակը նկատելի է «Չորրորդ ինքնիշխանություն» շաբաթաթերթում: Իսկ մեր պատկերացմամբ՝ ֆելիետոնն ավելի շատ գրական, քան լրագրողական նյութ է՝ ներծծված երգիծանքով, հումորով, քննադատական ոգով, հրատապությամբ, որն իր նպատակին է հասնում յուրահատուկ շարադրանքի շնորհիվ: Սրանք ժանրին հաղորդում են թեթևություն, պատկերավորություն: Ֆելիետոնում գլխավորը երգիծական տիպականացումն է, հեգնանքը, ծաղրական հակադրությունները:

Տպագրված նյութն արթնացնում է այն մարդկանց, ում վերաբերում է խոսքը. սա իր հերթին առաջ է բերում հերքման կամ ռեպլիկի կարիք: Այս վարկածներից ելնելով՝ կարող ենք փաստել, որ ֆելիետոնի, հետևաբար պամֆլետի (այստեղ հեգնանքը վերածվում է սարկազմի) ժանրերը էթիկական ժուռնալիստիկայում տեղ չունեն, քանզի ժանրերի բնութագրիչների շարքում հստակ նախանշված չեն անթույլատրելիի սահմանները:

«Չորրորդ ինքնիշխանություն» շաբաթաթերթում ֆելիետոնի ժանրով զավեշտալի մեկնաբանությունները «հանգրվանում են» «Վայոց աշխարհ» խորագրի «Նոստրադամուսի անկյուն» մշտական վերնագրի տակ:

Ի տարբերություն «ՉԻ» շաբաթաթերթի՝ **ֆելիետոնի ժանրով** նյութերը «Հրապարակ» օրաթերթում ավելի մեղմ են, թույլ: Օրաթերթում քաղաքական մեկնաբանությունների կարելի է հանդիպել նաև **հրապարակախո-**

սական ծավալուն հոդվածի ժանրով, որոնցում ևս էթիկական խախտումները նկատելի են: Խորհրդային կարգերի փլուզման ու նոր հասարակարգի ձևավորման շուրջ սեփական դատողություններն ու մտորումները հոդվածագիրն ընթերցողին է «մատուցում» հայհոյանքի տարբերակով: Բարկության պոռթկումով տարված, խոսելով շեքսպիրյան հերոսի՝ Համլետի անունից՝ հեղինակը գրում է. «...Համլետի ականջը կանչի... Նա քայլող «**չենջ**»[78] էր: Սա թերևս հոդվածի «ամենամեղմ» ձևակերպումն է: Մինչդեռ, նկատենք, որ այսօր Միացյալ Նահանգները քննարկում է օրենքի մի նախագիծ, որով կարգելվի «լրատվամիջոցների ներկայացուցիչների կողմից հայհոյանքի, սեռական ենթատեքստ ունեցող բառերի օգտագործումը»[79]:

Պակաս զավեշտալի չեն «Հրապարակ»-ի **հոդված-քննադատությունները**, որոնցում ռեպլիկի տարրեր ևս կան:

Հայաստանյան ընդդիմադիր մամուլի հատկապես վերջին տարիների հրատարակություններում կարելի է հանդիպել հրապարակախոսական մի ժանրի՝ **անեկդոտի,** որի բնույթն ու մատուցման ձևն ամենևին էլ էթիկական ժուռնալիստիկայի սահմաններում չեն: Այս ժանրին են նախապատվություն տալիս «Իսկական իրավունք», «Չորրորդ ինքնիշխանություն» թերթերը: Ուշագրավ է «Իրավունք»-ի **«Փանջունու անկյունը»** խորագիրը, որտեղ տարբեր քաղաքական գործիչների լուսանկարներն են՝ համապատասխան վերտառությամբ, իսկ մասնագիտական էթիկայի տարբեր խախտումներով քառյակները բանաստեղծություն, հեղինակային ասացվածք են հիշեցնում (տես՝«Փանջունի», «Իսկական իրավունքը», 20-23 ապրիլի, 2007):

Ի տարբերություն «Փանջունու անկյան՝ «Չորրորդ ինքնիշխանություն» շաբաթաթերթի **անեկդոտ-համառոտ լուրերի** սյունակները սեփական վերաբերմունքի արտահայտման հարցում երբեմն շատ կտրուկ են, երբեմն՝ թույլ:

Անեկդոտի ժանրին լրացնում է **ծաղրանկարը:** Սա որևէ երևույթի քննադատական գնահատական տվող նկարազարդում է, այն կարող է վերաբերել երևույթի, անձի, իրադարձության: Ժանրին հատուկ են օպերատիվությունը, այժմեականությունը, արտահայտչականությունը, կատարման վարպետությունը: Ծաղրանկարը նվիրվում է սուր, կարևոր թեմաների: Երգիծական այս ժանրն ընդունելի է հատկապես Արևմուտքում, ԱՄՆ-ում: Ավելին, եթե արևմտյան մամուլում ծաղրանկարը մատուցվում է

[78]«Հրապարակ», 21 փետրվարի, 2009:
[79]«Առավոտ», 30 ապրիլի, 2009:

գրագետ, ոչ վիրավորական երանգներով, ժանրի իսկական պահանջներին համապատասխան, ապա մեզանում հակառակն է:

Ծաղրանկարի ժանրի յուրահատկությունների և ժուռնալիստական էթիկայի միջև հակասությունն ակնհայտ է այնքանով, որքանով պարտադրում է գռեհիկ ճաշակ, վիրավորում մարդու անձը՝ անկախ նրա ունեցած դիրքից: Ուշագրավ են «Իրավունքը de facto» թերթի «Երեսփոխանի ակումբ», «Ծաղրանկարչի կսմիթներ» խորագրերը:

Այս առումով համեմատաբար թույլ է «Հրապարակ» օրաթերթի **ֆոտոլուրը**՝ չնայած ժարգոնի առկայությունն այստեղ ևս առկա է (տես՝ «Հրապարակ», 2009, 6 մայիսի):

Մշակութային կյանքը լուսաբանելիս ևս որոշ պարբերականներ չեն թաքցնում իրենց դիրքորոշումը, գնահատականը: Ի տարբերություն քաղաքական մեկնաբանությունների՝ մշակութային իրադարձությունների արձագանքը մամուլում ներկայացվում է հիմնականում **հարցազրույցի** ժանրով՝ հատկապես «Իրավունք», «Իրավունք de facto», «Հայոց աշխարհ», «Երկիր» և այլ թերթերում: Ավելին, լրագրողների հնարամտությունը՝ մեջբերել զրուցակցի սուր, ինչ-որ տեղ վիրավորական մտքերը, ապահովում է երևույթի հանդեպ սեփական վերաբերմունքի դրսևորումը:

Ընդդիմադիր մեկ այլ պարբերական՝ «Առավոտ»-ը, մշակութային անցուդարձը նախընտրում է ներկայացնել հիմնականում **գրախոսության** ժանրով (տես՝ «Թատրոն», «Առավոտ», 20 ապրիլի, 2009):

Հայ ընդդիմադիր լրագրողների նախընտրած ժանրը **ռեպլիկն է:** Մշակութային որոշ լուսաբանումներ այս ժանրում նույնպես մեկտեղվում են: Ինչ-որ տեղ հենվելով ռեպլիկին ներկայացվող պահանջների վրա՝ այն է՝ թեթև, հումորով մատուցել նյութը, տարբեր լրագրողներ երևույթը լուսաբանում են սեփական լրատվամիջոցի քաղաքականությանը համապատասխան: Այս ժանրի «սիրահար» են «Հրապարակ», «Փակագիծ», «Հայք», «Հայկական ժամանակ», «Ժողովուրդ» օրաթերթերը, «Չորրորդ ինքնիշխանություն», «168 ժամ» շաբաթաթերթերը: Եթե «Հրապարակ»-ի, «Փակագիծ»-ի, «168 ժամ»-ի պարագայում էթիկական խախտումները, հատկապես ժարգոնի, վիրավորական արտահայտությունների դրսևորումները ծավալային ու բովանդակային առումով համեմատաբար չափավոր են, ապա նշված մյուս թերթերում՝ գերակշռող: «Իսկական իրավունք»-ում էլ **քննադատական-ռեպլիկները** հանգրվանում են «Մշա**կույ**ս» խորագրում:

Այսպիսով, թերթում նյութի տեղադրումը, նորության ծավալը, ժանրային մեկնաբանությունը, վերնագիրը և ուղեկցող լուսանկարն արտահայտում են խմբագրության դիրքորոշումը: Ինչպես նշում է մամուլի հետազոտող

Ռոջեր Թարերիան՝ «նորությունը կախված է նրանից, թե ինչպես ենք այն մատուցում»[80]: Արևմուտքում վաղուց ժուռնալիստիկա անվան տակ հասկանում են գործիք, որի օգնությամբ իմաստավորվում է տեղեկատվություն ստանալու մարդու իրավունքը: Այստեղ պարզ արտահայտված է ժուռնալիստիկայի լրատու դերն ու բնույթը, քանի որ վաղուց ի վեր զարգացած է լրահաղորդության ինստիտուտը: Մինչդեռ մեզանում մի խառնաշփոթ է: Թվում է՝ օրեցօր ավելացող պարբերականների պայմաններում իրերը պետք է կոչվեն իրենց անուններով, այնինչ արվում է հակառակը. լուրջ, պրոֆեսիոնալ լրագրությունը տեղը զիջում է բուլվարային մամուլին: Իսկ այստեղ էթիկական սկզբունքներն ամենաշատն են խախտվում: Եվ կարևոր չէ, թե տեղեկատվությունը ի՞նչ ժանրային ասպեկտով է ներկայացվում:

[80]**Тертычный А. А.,** Жанры периодической печати, М., 2002, стр. 73.

2.4. ԺՈՒՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ, ՃՇԳՐՏՈՒԹՅՈՒՆ, ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Լրագրողները հիմնախնդրին մոտենում են տարբեր կերպ: Այստեղ իբրև չափորոշիչ՝ հանդես են գալիս ժուռնալիստիկայի սկզբունքները՝ ժողովրդավարական, զանգվածայնության: Սկզբունքի «միջուկը» օբյեկտիվ օրենքների իմացությունն է, իսկ «կեղևը»՝ դրանց օգտագործմամբ կյանքի երևույթների գնահատումը:

Սկզբունք հասկացությունն ունի լատինական ծագում (principium-սկիզբ, հիմք) և մեկնաբանվում է տարբեր կերպ: Մեզ համար նախընտրելի է այն մեկնաբանությունը, որը բնորոշ է լրագրողի մասնագիտությանը, ասել է, թե՝ «Մարդու ներքին համոզմունք, որով պայմանավորվում են նրա գործունեությունն ու պահվածքի չափանիշները»[81]: Ժուռնալիստական էթիկայի սկզբունքները հիմնվում են մի կողմից մասնագիտության հիմնարար պահանջների, մյուս կողմից՝ լրագրող-լսարան, լրագրող-գործընկեր, լրագրող-տեղեկատվության աղբյուր, լրագրող-իշխանություն, լրագրող-հերոս հարաբերությունների վրա: Նշված հարաբերություններից առաջին երեքը կարգավորվում են տեղեկատվության աղբյուրի հավաստիության և, անհրաժեշտության դեպքում, աղբյուրի չբացահայտման, օրենքով արգելված տեղեկատվության սահմանափակման պայմանով:

Այդ հարաբերություններից յուրաքանչյուրի ճիշտ կառուցման համար կարևորվում են ժուռնալիստական էթիկայի հիմնարար սկզբունքներից հատկապես **արդարությունը, ճշգրտությունը, օբյեկտիվությունը:** Սրանք ընդհանուր առմամբ կազմում են ժուռնալիստական էթիկայի կանոնագրերի հիմքը: Արդարությունը չափազանց ընդգրկուն հասկացություն է: Եթե շատ լրագրողների ենթադրյալ իդեալը օբյեկտիվությունն է, ապա արդարությունը՝ ժողովրդավարական հասարակության յուրաքանչյուր անհատին (առավել ևս՝ լրագրողներին) պարտադրվող կարևոր հատկանիշը: Այլ կերպ ասած՝ լրատվամիջոցները հասարակության աչքն ու ականջն են: Եվ հասարակությունը խնդիրը կտեսնի այնպես, ինչպես այն կներկայացվի:

[81] **A. David Gordon, John Michael Kittross**, Controversies in media ethics, 2-ed edition, Longman, New York, 1998, p. 13.

Նրանք կհավատան, եթե վստահում են տվյալ լրատվամիջոցին ու լրագրողին:

Լրագրողների ավստրալիական ընկերակցությունը[82] գտնում է, որ տեղեկությունները պետք է հաղորդվեն կամ մեկնաբանվեն մանրակրկիտ ճշգրտությամբ՝ձգտելով բացահայտել բոլոր կարևոր փաստերը, լռության չմատնել պատշաճ ու հասանելի տեղեկատվությունը: Ժուռնալիստական էթիկայի գրեթե բոլոր կանոնագրերում ու տարբեր վարքականոններում առաջնությունը տրվում է *ճշգրտությանն ու օբյեկտիվությանը*: Դա պատահական չէ, քանզի ցանկացած տիպի տեղեկատվություն նախ և առաջ ենթադրում է փաստերի բազմակողմանի, մանրամասն ստուգում: Յուրաքանչյուր սխալ, անճշտություն, փաստերի աղավաղում հանգեցնում է լսարանի վստահության անկմանը: Անգամ այն դեպքում, երբ լրագրողը վստահ չէ փաստերի ստույգ լինելու հարցում, և մոտեցել է հոդվածը տպագրելու վերջնաժամկետը, գերադասելի է, որ այն չտպագրվի, քանզի չճշտված տեղեկությունների օգտագործումն առանձնապես չի խոսում լրագրողի մասնագիտական հմտության և ձևավորված կայուն մասնագիտական վարքագծի մասին: Ի տարբերություն օրաթերթերի, այս առումով ավելի շահեկան վիճակում են շաբաթաթերթերն ու ամսագրերը, որոնք տեղեկատվությունն ստուգելու համար բավական ժամանակ ունեն:

Ճշգրտության փաստը կարևորելով՝ շատ երկրներ (ԱՄՆ, Ֆրանսիա, Անգլիա և այլն) ունեն իրենց որդեգրած քաղաքականությունը. եթե խոսքը վերաբերում է երկրի նախագահի, վարչապետի ելույթին, տրված հարցազրույցին, ապա հոդվածի պատրաստի տարբերակն ուղարկում են վերջինիս՝ կարդալու և անճշտությունները շտկելու: Այս առումով Հայաստանը դեռևս զիջում է այդ երկրներին, չնայած միտումն արդեն նկատվում է. կան քաղաքական գործիչներ, ովքեր համաձայնում են հարցազրույց տալ լրագրողներին՝ արդեն պատրաստի հոդվածն իրենց կողմից վերանայելու պայմանով: Այս սկզբունքով են առաջնորդվում «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանն ու իր կուսակիցները»[83] (սա կարելի է բացատրել նրանով, որ տարիներ առաջ Արթուր Բաղդասարյանը «Ավանգարդ» թերթում աշխատել է որպես լրագրող և ծանոթ է մասնագիտության նրբություններին):

---

[82] Լրագրողների ավստրալիական ընկերակցության 1984 էթիկայի կանոնագիրք, հոդված 1-ին, ՀՀ իրավաբանների միության, ԱՄՆ իրավաբանների (ABA/CEELI) «Իրավական գիտելիքներ լրագրողներին» դասընթացի նյութեր, Երևան, 1999:

[83] «Մամուլի ակումբ» հեռուստածրագիր, «Երկիր մեդիա» հեռուստաընկերություն, 12 նոյեմբերի, 2000:

Ինչևէ, հայաստանյան լրատվամիջոցներում այսօր կան բազմաթիվ օրինակներ՝ ոչ ճշգրիտ տեղեկատվությամբ: Մի դեպքում դրանք ասեկոսեներն ու բամբասանքներն են, չճշտված տեղեկությունները, մեկ այլ դեպքում՝ տպագրական սխալները: Երբեմն հրատապ, սենսացիոն լուրը առաջինը հայտնելու լրագրողի ցանկությունը նրան մղում է կատարվածը ներկայացնել՝ առանց ստույգ փաստերի: «Մեր թերթի հունվարի 27-ի «Եվ այլն» խորագրի ներքո զետեղված «Գազը կտրել են» փոքրիկ հրապարակման մեջ սպրդած սխալի համար հայցում ենք ընթերցողի ներողամտությունը և հայտնում՝ «Կայունությունը» ոչ թե խմբակցություն է, այլ՝ խումբ, այն էլ անկուսակցական պատգամավորների խումբ է, իսկ խմբի ղեկավարը Վարդան Այվազյանն է, ոչ թե Հովհաննես Հովհաննիսյանը»[84]:

Նկատենք, որ երբեմն «տպագրական սխալի» ներքո տպագրված մի բառը, անգամ տառն ամբողջությամբ կարող է փոխել զրուցակցի հիմնական ասելիքը:

Լրագրողական նյութի հանդեպ լսարանի դժգոհությունը կարող է տարբեր դրսևորումներ ունենալ՝ երբեմն նախազգուշացնող, երբեմն՝ սպառնալիքային: Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում հաճախ ենք հանդիպում այսպիսի իրավիճակների: Սակայն ամենացավալին այն է, երբ սպառնալիքներին հաջորդում է լրագրողին ծեծի ենթարկելը կամ վատագույն դեպքում՝ սպանությունը: Ժուռնալիստիկան գործ ունի մարդկային ճակատագրերի հետ այնքանով, որքանով այս կամ այն հոդվածը, հրապարակումը կարող է խորտակել կյանքեր, ջրի երես հանել գաղտնի ու տհաճ շատ իրողություններ: Հետևաբար ոչ մի այլ մասնագիտություն այնքան կապված չէ էթիկայի հետ և ոչ էլ այդքան քննադատվում է, որքան ժուռնալիստիկան:

Տարբեր գիտաժողովների ժամանակ ժուռնալիստական էթիկայի սկզբունքներից խոսելիս մեծ ուշադրություն է դարձվում նաև *օբյեկտիվությանը,* որը ճշգրտության անմիջական շարունակությունն է: Սրանով կարելի է բացատրել այն, որ 1995 թ. Երևանի մամուլի ակումբի կողմից ընդունված էթիկայի կանոնագրի հիմնաքարը հենց օբյեկտիվության սկզբունքն է: «Ինտերնյուս» հասարակական կազմակերպությունը, որը բավական լուրջ և հետևողական աշխատանքներ է կատարում լրագրողական դաշտում, «խոսքի ազատության կողքին կարևորում է օբյեկտիվությունը, ճշգրտությունը՝ ցանկացած բնույթի ինֆորմացիայի լուսաբանման ժամանակ»[85]:

---

[84] «Առավոտ», 2 փետրվարի, 2000:

[85] www.internews.am

Օբյեկտիվության հարցը միշտ էլ վիճելի թեմա է, որը հաճախ բուռն բանավեճերի առարկա է դառնում: Այսօր գոյություն ունի ժուռնալիստական այնպիսի դպրոց, որը համարում է, թե «լիակատար օբյեկտիվության հասնելն անհնարին է, որ թղթակիցները թերևս պետք է հրաժարվեն օբյեկտիվ լինելու փորձերից և իրենց գնահատականներն ու վերաբերմունքը դրսևորեն իրենց հոդվածներում»[86]: Երբ խոսում ենք օբյեկտիվության մասին, այն չենք կարող դիտարկել՝ առանց սուբյեկտիվության հետ զուգահեռներ անցկացնելու: Նախ և առաջ տանք վերջիններիս ձևակերպումները. *եթե օբյեկտիվություն նշանակում է «անկողմնակալ, անաչառ, անկանխակալ կարծիք»*[87]*, ապա սուբյեկտիվությունը ենթադրում է «հիմնվել անձնական կարծիքի վրա»*[88]*:* Օբյեկտիվությունը միջազգային ժուռնալիստիկայի վերջին տարիների ձեռքբերումներից կարելի է համարել, քանզի 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին թերթերն ավելի շատ կարծիքներ էին տպագրում, քան օբյեկտիվորեն ներկայացնում փաստերը: Ժուռնալիստական էթիկայի այս սկզբունքն ամենից շատ կարևորվում է հատկապես նորությունների բաժնում աշխատող լրագրողների համար. չէ՞ որ սեփական կարծիքի, տեսակետի համադրումը իրական փաստին լրատվական բաժնի աշխատակցի խնդիրը չէ:

Հոդվածը լրագրողից պահանջում է անաչառություն, անկողմնակալություն. ընթերցողը և, լսարանն առհասարակ, ցանկանում է իմանալ իրականում եղածը և ոչ թե լսել «փաստ-հորինվածքները»: Այդ իսկ պատճառով շատ անգամ ենք հանդիպում այնպիսի դեպքերի, երբ այս կամ այն լրագրողին մեղադրում են ոչ օբյեկտիվ լինելու մեջ: Խոսքը հատկապես այն դեպքերի մասին է, երբ տեղեկատվությունը ներկայացվում է միակողմանի՝ առանց հակադիր կողմերի տեսակետներին ծանոթանալու: «Նոր ժուռնալիստիկայի» որոշ ջատագովներ էլ պնդում են, որ «օբյեկտիվությունն ինչ-որ տեղ խոչընդոտում է իսկական ճշմարտությանը»[89]: Այս պնդման հետ կարող ենք համաձայնել այնքանով, որքանով լիարժեք օբյեկտիվության մասին խոսք լինել չի կարող, քանզի սուբյեկտիվությունը գործում է, երբ հասկանում ես, որ լրագրողն ինքն է որոշում, թե ինչը պետք է ներկայացնի իր հոդվածում և ինչը՝ ոչ: Չէ՞ որ լրագրողն իր հոդվածի հեղինակն է, փաստերի համադրողը, նյութի որակի վերահսկիչը և տեղեկատվության դատավորը:

---

[86] www.pointer.org
[87] Media Ethics, 4th Edition, page 25.
[88] Նույն տեղում, էջ 26:
[89] www.medialaw.ru

Լրագրողները հաճախ կարող են գործ ունենալ իրարամերժ փաստերի հետ: Վստահություն ներշնչելու կարևոր նախապայմանը դրանց ճըշմարտացի ներկայացումն է: Հետևաբար նախքան նյութը շարադրելը, լրագրողը պետք է ճշտի, թե ամե՞ն ինչ է պարզել, արդյոք ոչինչ չի՞ վրիպել իր աչքից: Ավելին, հրապարակմանը պետք է նայի ընթերցողի աչքերով՝ ինքն իրեն հարցնելով՝ կվստահի՞ այդ մեկնաբանմանը, թե՞ ոչ: Նման պահանջներն առավել կարևորվում են հատկապես լուրջ թեմաներ քննարկելիս: Այստեղ է, որ օգնության են գալիս մասնագիտական այն նրբությունները, ինչպիսիք են[90].

1.Փաստացիությունը:- Թեև փաստը դեռ վերին ճշմարտությունը չէ, բայց դրանք հորինելը էթիկայի կոպիտ խախտում է: Անհրաժեշտ է օգտագործել այնպիսի փաստեր, որոնք իրական են և մի քանի աղբյուրներից ճշտված: Երբեմն հրատապ, սենսացիոն լուրն առաջինը հայտնելու լրագրողների ցանկությունը նրանց մղում է ներկայացնել կատարվածը՝ առանց ստույգ փաստերի:

2. **Անձնական կարծիքի բացառումը:**- Սա վերաբերում է բոլոր հոդվածներին: Լրագրողն իր սեփական կարծիքը կարող է ունենալ քննարկվող թեմայի շուրջ, բայց հոդվածում դրա ակնհայտությունը մերժելի է:

3. Էժան քայլերից խուսափելը:- Մարդիկ կարող են իսկապես տհաճ բաներ ասել կամ անել: Լրագրողի նպատակը ոչ թե այդ ամենի վրա կենտրոնանալն է, այլ հիմնախնդիրը ներկայացնելը:

Այսպիսով, ժուռնալիստական էթիկայի հիմնարար սկզբունքները միմյանց փոխկապակցված են, իսկ նպատակը մեկն է՝ ճշգրիտ տեղեկատվություն մատուցել լսարանին:

[90] Media lawyers as Factors in the Ethical Decisions of Journalists, p. 96.

2.5. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հաճախ լրագրողները բարոյական ընտրության խնդրի առաջ են կանգնում. ո՞րն է էթիկայի տեսակետից ավելի ճիշտ՝ հրապարակե՞լ, թե՞ թաքցնել ստացված կարևոր տեղեկատվությունը: Վիճելի այս հարցի շուրջ ևս բանավեճերը չեն դադարում: Նման պարագայում օգնության են հասնում բազմաթիվ երկրների լրագրողական ընկերությունների և լրատվամիջոցների կողմից ընդունված ժուռնալիստական էթիկայի կանոնագրերն ու լրագրողների վարքականոնները, որոնցում լրատվության աղբյուրի իրավունքները պաշտպանող հատուկ կետեր կան: Այսպես օրինակ՝ Բորդոյում 1954 թ. ժուռնալիստների միջազգային ֆեդերացիայի ընդունած ժուռնալիստի պահվածքի սկզբունքների հռչակագիրը հստակ սահմանում է, որ «ժուռնալիստը պարտավոր է հետևել մասնագիտական գաղտնիքին և չբացահայտել տեղեկատվության աղբյուրը»[91]: Իսկ ահա 1996 թ. Պրոֆեսիոնալ ժուռնալիստների ընկերության կողմից ընդունված էթիկական նորմերի կանոնագրում ասվում է. «Մինչև տեղեկատվության աղբյուրին անունը չհրապարակել խոստանալը, բացահայտեք նրա միտումները: Լիարժեք բացատրեք խոստումը կատարելու ձեր պայմանները՝ տրված տեղեկատվության փոխարեն: Խոստումը պետք է պահել»[92]:

Ամերիկյան լրատվամիջոցներից շատերն անանուն աղբյուրների հանդեպ կոշտ դիրքորոշում ունեն. «Աղբյուրը չհրապարակելու խոստումը չպետք է խախտվի, այդ իսկ պատճառով նման խոստումներ չպետք է հեշտությամբ թույլ տալ: Տեղեկատվության աղբյուրները պետք է անվանվեն, բացառությամբ այն դեպքերի, երբ կա դրանք գաղտնի պահելու անհրաժեշտությունը»[93]:

Գրեթե նույն տեսակետն են հայտնում հրատարակիչների և մամուլի մենեջմենթի ասոցիացիայի անդամները, որոնց կարծիքով՝ «տեղեկատվության աղբյուրները պետք է բացահայտվեն, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավոր պատճառներ կան աղբյուրը չհրապարակելու համար: Երբ

---

[91] Профессиональная этика журналиста, Фонд защиты гласности, 2-е издание, исправленное и дополненное, М.,2002, стр. 2.

[92] **Теплюк В.** М., Этика журналистского творчества, М., 1980, стр. 23.

[93] Kent R. Middleton, Bill F. Chamberlin, The law of Public Communication, Longman, 1992, p.309.

անհրաժեշտ է գաղտնի պահել տեղեկատվության աղբյուրը, պետք է բացատրվի պատճառը»[94]:

Շվեդիան, Ավստրիան, Ֆրանսիան, Գերմանիան օրենքի ազդեցիկ դերակատարություն ունեցող երկրներ են, որոնք ապահովում են տեղեկատվության աղբյուրների և լրագրողների տրամադրած տեղեկությունների առավել հուսալի պաշտպանություն:

Շվեդիայում, Իսպանիայում, Գերմանիայում կարևորվում է մասնագիտական գաղտնիքի պահպանումը, եթե, իհարկե, աղբյուրը չի տալիս բացահայտման մասին իր համաձայնությունը: Որոշ երկրներում այս կետը գործում է միայն քաղաքացիական գործեր քննելիս, իսկ քրեական դատավարությունների ժամանակ դատարանը լրագրողից կարող է պահանջել բացահայտել գաղտնի տեղեկությունների բովանդակությունը կամ տեղեկատվության աղբյուրը, երբ շոշափվում են բացառիկ կարևորության շահեր, ինչպես օրինակ՝ կաշառակերության դեպքերը:

Ընդհանրապես տարբեր ուղղվածության զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներից շատերն այն համոզմանն[95] են, որ տեղեկատվության աղբյուրը չհրապարակելը թույլ է տալիս մեծացնել տեղեկատվություն ձեռք բերելու հնարավորությունները:

Չէ՞ որ շատերը խուսափում են տեղեկատվություն տալ այն պարզ պատճառով, որ իրենց անունը կարող է հիշատակվել հոդվածում: Սա մի կողմից: Մյուս կողմից դժվար է ասել. արդյո՞ք հասարակությունը, ընթերցողը վստահություն կունենան այն թերթի հանդեպ, որի էջերում հոդվածներ են կարդում հետևյալ ձևակերպումներով՝ «Մեզ մոտ կանգնած աղբյուրների համաձայն...», «Անունը հրապարակել չցանկացող տեղեկատվության մեր աղբյուրն ասաց, որ...» և այլն:

Օրինակ, «Առավոտ»-ի լրագրողները հարգում են զրուցակիցների խնդրանքը՝ չհրապարակել իրենց անունը, տեղեկատվության աղբյուրը կամ չհրապարակել մասնավոր զրույցում իրենց հայտնած տեղեկությունը»[96],- ասված է խմբագրության ընդունած էթիկայի կանոնագրում: Եթե Երևանի մամուլի ակումբի էթիկայի կանոնագիրը տեղեկատվության աղբյուրը

---

[94]www.medialaw.ru

[95]2007 թ. սեպտեմբերի 7-ին հանրապետական և մարզային տպագիր («Առավոտ», «Հայք», «Հետք») և էլեկտրոնային («Ցայգ», «Շանթ») լրատվամիջոցների ներկայացուցիչների շրջանում մեր կողմից արված հարցման արդյունքում հարցվողներից ոչ մեկը չժխտեց տեղեկատվության անանուն աղբյուրների անհրաժեշտությունը՝ պատճառաբանելով, որ աղբյուրը չբացահայտելու պայմանով ավելի հեշտ է ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվությունը: Հարցվողների տեսակետները տարբեր էին նաև տեղեկատվության ձեռքբերման անազնիվ մեթոդների օգտագործման առումով:

[96]www.aravot.am

չհրապարակելու հարցում որևէ հատուկ կետ չի նախատեսում (հակառակ այն բանի, թե ինչ ճանապարհով կարող է լրագրողը տեղեկատվություն ձեռք բերել), ապա «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության էթիկայի կանոնագրով նախատեսվում է «անհրաժեշտության դեպքում ապահովել տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը»[97]: Եվ եթե ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի մշակած էթիկայի կանոնագիրը սահմանում է «միշտ վկայակոչել լրատվության աղբյուրը», բացառությամբ այն դեպքերի, «երբ անխուսափելի անհրաժեշտությամբ խոստացել ենք չբացահայտել այն. այդ դեպքում հարգում ենք խոստումը՝ այդ մասին տեղյակ պահելով նաև մեր ընթերցողին»[98], ապա Հայաստանի ժուռնալիստների միության անդամի էթիկայի կանոնագրով միության ցանկացած անդամի պարտադրվում է «հնարավորինս խուսափել տեղեկատվության գաղտնի աղբյուրներ օգտագործելուց, սակայն եթե տեղեկատվությունը նրան տրված է աղբյուրը գաղտնի պահելու պայմանով, ապա նա որևէ պարագայում չպետք է բացահայտի այն»[99]:

«Հաշվի առնելով այն, որ հետաքննական ժուռնալիստիկան չի կարող գործել առանց տեղեկատվության գաղտնի աղբյուրների՝ հետևաբար չենք բացահայտում տեղեկատվության աղբյուրը, եթե նախապես խոստում է տրվել»[100],- էթիկայի իրենց կանոնագրի այս սկզբունքով են պայմանավորում Հետաքննող լրագրողների ընկերակցության անդամները տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հանգամանքը: Առանձին հետազոտողներ անանուն աղբյուրների լայնորեն կիրառումը կապում են 1970-ական թվականների հետ, երբ «Վոթըրգեյթի» հայտնի սկանդալից հետո շատ լրագրողներ սկսեցին նմանվել Բոբ Վուդվորդին և Կառլ Բերնսթայնին, ովքեր բացահայտել էին նախագահ Նիքսոնի վարչակազմի զեղծարարությունները: Այն, որ անանուն աղբյուրների տեղի-անտեղի վկայակոչումը միշտ մեծ վտանգ է պարունակում, ակընհայտ է: Տեղին է մեջբերել «Ատլանտա Քոնսթիթյուշնի» խմբագիր Էդուարդ Սիրսի՝ իր աշխատողներին ուղղված խոսքը. «Փորձառու լրագրողի համար աղբյուրից մեջբերումը զենք է: Անփորձ լրագրողի համար՝ հենակ»[101]:

Հայաստանյան մամուլի շրջանում մեր կատարած ուսումնասիրությունը ցույց տվեց, որ անանուն աղբյուրի վկայակոչումները 1998 թ. հետո

---

[97] www.internews.am

[98] ԵՊՀ, էթիկայի կանոնագիր, Երևան, ընդունված 2002–2003 ուս.տարում:

[99] Հայաստանի ժուռնալիստների միության անդամի էթիկայի կանոնագիր:

[100] www.hetq.am

[101] **Լեոնարդ Ռեյ Թիլ, Ռոն Թեյլոր**, Դեպի խմբագրություն, Ժուռնալիստիկայի ներածություն, Երևան, 2002, էջ 90:

համեմատաբար ավելի շատ են ընդդիմադիր ուղղվածության օրաթերթերում, իսկ ահա «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթում և «Ազգ»-ում նման հղում պարունակող տեղեկատվության գրեթե չես հանդիպի:

Շատ օրաթերթեր անանուն աղբյուրների յուրատեսակ ձևակերպումներով են ներկայանում: «Հայկական ժամանակ»-ը նախընտրում է այսպիսի տարբերակներ. «**Լավատեղյակ աղբյուրներից հայտնի դարձավ**, որ ....լ»[102]: Նույն օրաթերթում հանդիպում ենք նաև այսպիսի դրսևորումների, որոնք, ի տարբերություն նախորդի, ավելի շատ են կիրառվում: Դրանք են՝ «**Մեր տեղեկությունների համաձայն**...», «**Կառավարությանը մոտ կանգնած մեր աղբյուրի փոխանցմամբ...**»:

«Հայք» օրաթերթի համար անանուն աղբյուրների ձևակերպման ընդունելի տարբերակները շատ նման են «Հայկական ժամանակ»-ին. «**Լավատեղյակ աղբյուրներից հայտնի դարձավ,** որ ...»[103]:

«Հայք»-ին բնորոշ է այսպիսի ձևակերպումը ևս. «**Որոշ տեղեկությունների համաձայն....**»[104]:

Անանուն աղբյուրների ձևակերպումներից յուրաքանչյուրն օգտագործման իր նպատակահարմարությունն ու հիմնավորվածությունն ունի: Արդեն նշեցինք, որ «**Մեր տեղեկություններով»** տարբերակը շատ դեպքերում կիրառելի է խմբագրական տեսակետ, վերաբերմունք արտահայտելու համար:

«Հայոց աշխարհ» օրաթերթում կարելի է հանդիպել անանուն աղբյուրների այսպիսի օրինակների. «...**Ինչպես հաստատում են առողջապահության նախարարությունից մեր աղբյուրները,** վերջին ժամանակներս երկրում դիտվում է ոջիլների, լվերի, քոսատիզերի և այլ նողկալի էակների շեշտակի ակտիվացում...»[105]:

Կամ՝ նույն օրաթերթի մեկ այլ հրապարակումից ծանոթանում ենք. «Ինչպես հայտնի դարձավ «Հայոց աշխարհ»-ին, երեկ ժամը 14.00-ի սահմաններում մայրաքաղաքի կենտրոնում, ԱՄՆ դեսպանատնից դուրս գալու

---

[102]«Հայկական ժամանակ», 31 հոկտեմբերի, 2007:
[103]«Հայք»,18 հոկտեմբերի, 2006:
[104]«Հայք», 8 մայիսի, 2007:
[105] «Հայոց աշխարհ», 17օգոստոսի,1999:

պահին ձերբակալվել են հայտնի էջմիածնի ոչ պակաս հայտնի նախկին տեղակալ «Շմայսը» և նրան ուղեկցող անձինք»[106]:

Տեղեկատվության աղբյուրը չբացահայտող բազմապիսի օրինակների կարելի է հանդիպել «Առավոտ» օրաթերթի էջերում: Կան հոդվածներ, որոնցում միաժամանակ մի քանի անանուն աղբյուր կարող է լինել՝ «...**Ըստ որոշ լուրերի՝ ...Թեև չենք տեսել, բայց հավաստի աղբյուրները պատմում են, ... ըստ պատմիչների»**[107]:

Ժուռնալիստական էթիկայի կանոնագրերից բացի կան օրենսդրական այլ ակտեր, որոնցով կարգավորվում է աղբյուրը չբացահայտելու հարցը՝ չնայած, որ լրագրողի՝ աղբյուրի ինքնությունը չբացահայտելու իրավունքը բացարձակ չէ և ենթակա է սահմանափակման: Այս իրավունքի սահմանափակման հիմքերը տրված են Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի երկրորդ մասում, որը վերաբերում է լրագրողի պարտավորություններին և պարտականություններին: Վերջիններս կարող են սահմանափակել լրագրողի իրավունքը աղբյուրների գաղտնիությունը պահպանելու առումով: Եվրոպական դատարանը որոշել է, որ լրագրողական աղբյուրը բացահայտելու դատարանի պահանջը «...արդարացված է, եթե դա է պահանջում կենսական նշանակություն ունեցող հասարակական շահը»[108]:

Իսկ ահա «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսվում է, որ լրագրողին կամ լրատվական գործունեություն իրականացնողին աղբյուրը բացահայտելու պահանջ կարող է պարտադրվել «դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանրը կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նըպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, և սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները: Այդ դեպքում, լրագրողի միջնորդությամբ, դատական քննությունն իրականացվում է դռնփակ»[109]:

---

[106] «Հայոց աշխարհ»,18 օգոստոսի, 1999:
[107] «Առավոտ», 1 փետրվարի, 2000:
[108] **Туманов В. А.,** Европейский суд по правам человека, НОРМА, М., 2001, стр. 183.
[109] ՀՀ օրենքը «Զանգվածային լրատվության մասին», Հոդված 5, 2003:

Ժուռնալիստական էթիկայի հարցերը քննելիս կարևոր է անդրադառնալ մամուլում հանդիպող այնպիսի դրսևորումների, ինչպիսիք են **ասեկոսեները:** Սրանք ևս առնչվում են մարդկանց ու նրանց շահերին: Մամուլը և, առհասարակ, զանգվածային լրատվամիջոցները հասարակությանն են ներկայացնում ոչ միայն իրադարձություններ, այլև սեփական երկրի ու աշխարհի ամենահայտնի մարդկանց կյանքի հետաքրքիր, զավեշտալի դրվագները:

Անանուն աղբյուրով տեղեկատվության նման դրսևորումները տարբերվում են իրենց ձևակերպումներով: Սովորաբար, հաճախ հանդիպող տարբերակ է հետևյալը. «**Ասում են՝**…»:

Պաշտոնական թեմայով ասեկոսեների տպագրման հարցում հայաստանյան լրատվամիջոցներից յուրաքանչյուրը նախընտրում է իր համար ընդունելի ձևակերպումներ. «**Վերջին օրերին լուրեր են տարածվել**, ըստ որոնց…» (տես՝«Երբ մարդ կորցնում է ինքնատիրապետումը», «Հայկական ժամանակ», 22 մայիսի, 2007):

«Հայոց աշխարհ»-ն էլ ասեկոսեների տպագրման այս ձևն է կիրառում. «**Համառ լուրեր են շրջում**…..»[110]:

Քաղաքական վերնախավի շրջանում ասեկոսեների տարածման բնորոշ օրինակ է «Երբ մարդ կորցնում է ինքնատիրապետումը» հոդվածը: Այն կարդալով՝ տպավորություն է ստեղծվում, թե այդ «խոսակցությունները տարածողը» հենց օրաթերթն է. «Վերջերս հավաստի աղբյուրներից արտահոսքի, թե ոմանց վերլուծական փորձերի հետևանքով **խոսակցություններ են տարածվել** այն մասին, թե …»[111]:

Նույնաթեմա ոչ պակաս հետաքրքիր ձևակերպման կարելի է հանդիպել «Հայոց աշխարհ»-ի էջերում ու համոզվել, որ մարդկային երևակայության սահմաններն անչափելի են. «Ի դեպ, **չար լեզուները համառ շշուկներ են տարածում**, թե Անատոլի Կաշպիրովսկին այս անգամ Հայաստան է գալիս հայրենի կառավարության հատուկ հրավերով: Նախատեսվում է, որ «մոգական» ազդեցության տեր այդ պսիխոթերապևտը հատուկ սեանս է

[110]«Հայոց աշխարհ», 4 հունիսի, 2003:

[111]«Հայկական ժամանակ», 31 հոկտեմբերի, 2007:

անցկացնելու, որի ժամանակ նրա առջև կդնեն ՀՀ 1999 թ.-ի պետբյուջեն, որպեսզի ճեղքվածքները ներծծվեն»[112]:

Մտավախությունը, թե արդյո՞ք միշտ են իրականությանը համապատասխանում ասեկոսեներն ու անանուն տեղեկատվությունները և արժե՞ անմիջապես հավատալ դրանց, առանց այլ աղբյուրներից ստուգելու, տեղին է:

Այսպիսով, լրագրողների համար եթե մի կողմից ավելի հեշտ է տեղեկատվություն ձեռք բերել աղբյուրը չբացահայտելու խոստման պարագայում, ապա մյուս կողմից նման հրապարակումները հասարակությանը կարող են կանգնեցնել ապատեղեկատվություն ստանալու վտանգի առաջ:

[112]«Հայոց աշխարհ», 2 հոկտեմբերի, 1999:

Ժուռնալիստական էթիկայի վիճելի հարցերից է, անշուշտ, *տեղեկատվության ձեռքբերման թույլատրելի և անթույլատրելի մեթոդների* կիրառումը: Այս պարագայում սահմանափակումներ ևս կան: Ասենք, 2003թ. ընդունված «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Արգելվում է տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության տարածումը, եթե դա ստացվել է տեսաձայնագրման մասին առանց անձին զգուշացնելու, և այդ անձն ակնկալել է, որ գտնվում է տեսաձայնագրումը կատարողի տեսադաշտից դուրս, լսելի չէ նրա համար և դրա համար ձեռնարկել է բավարար միջոցներ. բացառությամբ, երբ տեսաձայնագրումը կատարած անձի տեսադաշտից դուրս լինելու կամ նրա համար լսելի չլինելու համար ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն անբավարար են եղել»[113]: Մյուս կողմից ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանվում է, որ «յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ»[114]: Անկախ այն հանգամանքից, որ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության խախտումը համարվում է քրեորեն պատժելի արարք (ՀՀ Քր. օրենսգիրք, հոդված 146), այնուամենայնիվ, հաճախ լրագրողները հայտնվում են այնպիսի իրավիճակներում, երբ իրադարձությանը մասնակից կողմերից և ոչ մեկը չի ցանկանում տեղեկատվություն տրամադրել կամ պարզապես մանրամասնել տեղի ունեցածը:

Այստեղ է, որ լրագրողը կանգնում է երկընտրանքի առաջ և տեղեկատվություն ձեռք բերելու համար դիմում է այնպիսի միջոցների, ինչպիսիք են՝ **դիմակի, մասնագիտությունը փոխելու, թաքնված տեսախցիկով և ձայնագրիչով աշխատելու մեթոդները**: Սրանք լայնորեն կիրառվում են հատկապես հետաքննական ժուռնալիստիկայի շրջանակներում:

---

[113] ՀՀ օրենքը «Զանգվածային լրատվության մասին», Հոդված 7, Երևան, 2003:

[114] ՀՀ Սահմանադրություն, Փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, Հոդված 23, Երևան, 27 նոյեմբերի, 2005:

Դիմակի մեթոդն առաջինն օգտագործողներից մեկը «Չիկագո Սան թայմս»-ի թղթակից Նելլի Բլայն էր, որը 1980թ. տպագրեց «10 օր հոգեբուժարանում»[115] հոդվածը: Տեղեկատվության ձեռքբերման համար նա ներկայացավ իբրև հոգեկան հիվանդ: Այս մեթոդը երկար ժամանակ կիրառվում էր արևմտյան ժուռնալիստիկայում: Բայց ավելի ուշ խմբագիրներն սկսեցին զգուշություն ցուցաբերել տեղեկատվության ձեռքբերման անազնիվ մեթոդների նկատմամբ: Հարցման ենթարկված լրագրողների շրջանում (հարցման մասին նշել էինք նախորդ ենթաբաժնում) տարբեր էին մոտեցումները: Շատերի կարծիքով՝ լրագրողները ևս սովորական քաղաքացիների նման կարող են լինել ամենուր և ոչ միշտ է հարկ լինում ներկայանալ իբրև լրագրող[116]: Ոմանք էլ կարծում են, որ այս մեթոդները պետք է կիրառել հատկապես լրագրողական հետաքննություն անցկացնելիս՝ խմբագրության հետ սերտ համագործակցելով:

Դիմակի մեթոդին շատ նման է մասնագիտությունը փոխելու մեթոդը: Վերջինս արդարացված է միայն այն դեպքում, երբ լրագրողը ոչ միայն պատրաստ է, այլև իրականում ի վիճակի է կատարել այն գործը, որն ստանձնել է: Այս մեթոդին սովորաբար դիմում են, որպեսզի կարողանան հստակ պատկերացնել այս կամ այն գործի նրբությունները, ինչպես նաև բացահայտել հետազոտվող ոլորտում առկա թերությունները: Մեր մամուլում նման մեթոդով ձեռք բերված տեղեկատվության օրինակների գրեթե չհանդիպեցինք: «Առավոտ»-ում կար մի հրապարակում, որի հեղինակը, ներկայանալով իբրև համալսարանի ռոմանագերմանական ֆակուլտետի շրջանավարտ, առաջարկել էր «մաղարիչով» իրեն դաստիարակչուհի ընդունել: Հոդվածագրի մեկնաբանությունները մանկապարտեզներում աշխատանքի ընդունվելու «մանրամասների» մասին հարուցել էր Մուշավանի (Շորբուլախ) մանկապարտեզի տնօրեն Թամարա Թամրազյանի դժգոհությունը, որն այսպես է պարզաբանում տեղի ունեցածը. «Զանգահարեք փետրվարի 1-ին, եթե հնարավոր եղավ, կընդառաջեմ» բոլորովին էլ չի նշանակում, թե փետրվարի 1-ից հետո

---

[115] **Авраамов Д. С.**, Профессиональная этика журналиста, М. , 1999, стр. 142.

[116] «France 2» հեռուստաընկերության մամուլի օմբուդսմեն Ժան Կլոդ Ալանիկը ժուռնալիստական էթիկայի մասին անմիջական զրույցի ընթացքում մի դեպք ներկայացրեց, երբ հեռուստաընկերության երկու աշխատակիցները, շարքային քաղաքացիներ ձևանալով, խողովակի ծորանը փոխելու պատրվակով մեկ օրում հրավիրել են մի քանի մասնագետների՝ ճշտելու իրենց ունեցած տեղեկությունները վերանորոգման համար պահանջվող գումարների չափերի մասին: Ի վերջո, վարպետներից մեկն է բարեխղճորեն պահանջել իրական գումարը՝ անսարքությունը վերացնելու համար: Փարիզ, 14 օգոստոսի, 2007:

«մաղարիչով» նրան աշխատանքի կընդունեմ: Մեր մանկապարտեզում բացվելու էր եզդիների խումբ և նա հնարավոր է՝ կարողանար դասավանդել այդ խմբում... Ես տեղյակ չեմ մանկապարտեզներում գործող «մաղարիչային» գներին, քանի որ ինքս երբևէ որևէ մեկից գումար չեմ ուզել աշխատանքի տեղավորելու համար»[117]:

Կամ՝ «02» ոստիկանական լրատվական ծրագիրը 2007 թ. հոկտեմբերին եթեր հեռարձակեց մի տեսանյութ, որտեղ թրաֆիքինգի բացահայտման և կազմակերպիչներին բացահայտելու համար ոստիկանության կին աշխատակիցներից մեկը ներկայացել էր որպես մարմնավաճառ՝ Դուբայ մեկնելու համար:

Մի կարևոր հանգամանք. եթե ոստիկանները հանցագործության բացահայտման նպատակով կարող են հանդես գալ որպես տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչներ, ապա լրագրողները դրանց ընտրության հարցում ունեն որոշակի սահմանափակումներ: Ասենք, նըրանք չեն կարող հանդես գալ իբրև ոստիկան, բժիշկ, պետական պաշտոնյա:

Իրենց գործունեության ընթացքում լրագրողները հաճախ դիմում են թաքնված տեսախցիկի և ձայնագրիչի օգտագործմանը: «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը հստակ սահմանում է դրանց օգտագործման և տարածման սահմանները: Նմանատիպ ձայնագրությունների հրապարակումը թույլատրելի է, քանի դեռ՝

- չի խախտվել մարդու սահմանադրական իրավունքը և ազատությունը,
- դրանք անհրաժեշտ են հասարակական շահերի պաշտպանության համար,
- եթե ձայնագրման ներկայացումը կատարվում է դատարանի որոշմամբ:

[117] «Առավոտ», 7 նոյեմբերի, 2007:

ԳՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Ժուռնալիստական էթիկայի մերժելի սկզբունքներից մեկը գրագողությունն է, այլ խոսքով՝ «*ուրիշի մտավոր աշխատանքի օգտագործումը՝ առանց վերջինիս հղում կատարելու*»[118]: Գրագողությունը կամ հեղինակային իրավունքի խախտումը նույնպես համարվում է քրեորեն պատժելի արարք և կարգավորվում է ՀՀ Քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածով. «Հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ հեղինակությունը յուրացնելը, եթե այդ արարքը խոշոր վնաս է պատճառել, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»[119]: Լրագրողների՝ նման իրավիճակներում չհայտնվելու միակ երաշխիքը տեղեկատվության աղբյուրի վկայակոչումն է:

2006 թ.-ի հուլիսի 15-ին ընդունված «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է այդ իրավունքներին առնչվող հարաբերություններն ու դրանց խախտումները:

Մեզանում գործող ժուռնալիստական էթիկայի կանոնագրերում հատուկ ուշադրություն է դարձվում գրագողությանը՝ այն դիտարկելով որպես մասնագիտության հետ անհամատեղելի երևույթ: Կոչ է արվում հարգել այլոց մտավոր սեփականությունն ու հեղինակային իրավունքները: Խոսքն այս դեպքում ինչպես առանձին անձանց, այնպես էլ տարբեր կազմակերպությունների մասին է (լրատվական և PR գործակալություններ): «Վաշինգթոն փոստ» թերթի խմբագրությունն իր էթիկայի կանոնագրում ժուռնալիստական էթիկայի ամենալուրջ խախտումներից մեկը համարում է հենց գրագողությունը.«Այլ թերթերից և լրատվամիջոցներից վերցված նյութերը պետք է ունենան համապատասխան հղումներ: «Վաշինգթոն փոստը» միշտ վկայակոչում է այն հրատարակությունները, որոնց նյութերը տպագրվում են թերթի էջերում»[120]:

Մեր մամուլում հիմնականում թե՛ լրատվական գործակալությունների տրամադրած տեղեկատվությունները, թե՛ տարբեր լրատվամիջոցներից արտատպված հրապարակումներն ունեն համապատասխան հղումներ: Չնայած Դիտորդ մարմնի քննության տակ կան լրագրողի հեղինակային իրավուքնի խախտման դեպքեր[121]:

---

[118] **Савельев Н. Б.,** Защита авторских и смежных прав, М., 2002, стр. 26.
[119] Իրավական ուղեցույց հեռարձակողների համար, Երևան, 2004, էջ 83:
[120] www. labrary.cjes.ru
[121] www.ypc.am

ԳԼՈՒԽ 3
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՈՏՆԱՀԱՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

3.1. ԶՐՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ, ՊԱՏՎԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Մինչ զրպարտության և վիրավորանքի ապաքրեականացումը, վերջին-ներս քրեորեն պատժելի արարքներ էին, հետևաբար կարգավորվում էին ՀՀ նոր Քրեական օրենսգրքի համապատասխանաբար 135-րդ և 136-րդ հոդ-վածներով: 2010 թ. մարտին Հայաստանի խորհրդարանն ընդունեց Հայաստանի Քաղաքացիական, Քրեական և Քրեական դատավարության օրենսգրքերում ՁԼՄ-ների մասով ուղղումներ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ: Ըստ այդ փոփոխությունների՝ Հայաստանի Քաղաքացիական օրենսգրքում ընդունվեցին զրպարտության և վիրավորանքի մասին նոր դրույթներ, որոնց նախորդեցին բուռն բա-նավեճերը լրագրողների ու մեդիա փորձագետների շրջանում՝ կապված հիմնականում օրինախախտության համար սահմանված փոխհատուցման չափերի հետ՝ 500.000 դրամից մինչև 2 միլիոն դրամ: Այս կապակցությամբ իր մտահոգությունն էր հայտնել «Լրագրողներ առանց սահմանների» միջ-ազգային կազմակերպությունը: Ըստ կազմակերպության տարածած հայտարարության (2011 թ. մայիս)՝ «տուգանքների սահմանված չափերը վտանգում են այդ հրատարակությունների գոյությունը և նպաստում դրանցում ինքնագրաքննության մթնոլորտի ձևավորմանը: Պետք է վերջ դնել դատական հայցերի կիրառմամբ թերթերին լռեցնելու պրակտիկան»[122]: Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ Աշոտ Մելիքյանն էլ փաստում է. «Աշխատանքներ են տարվում տուգանքի չափը նվազեցնելու՝ խորհրդարանում համապատասխան առաջարկությամբ հանդես գալու համար»:

Լրացումներ կատարելու պահից մինչ օրս հայաստանյան լրատվամի-ջոցների դեմ զրպարտության և վիրավորանքի մասով հարուցվել է ավելի քան 44 քաղաքացիական դատավարության գործ, որոնք դեռևս ընթացքի մեջ են: «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական

[122] www.jnews.am

կազմակերպության վերջերս ներկայացրած հաշվետվության համաձայն՝ «հայցվորների մեջ եղել են 18 սովորական քաղաքացի, 9 պետական պաշտոնյա և 1 պետական կազմակերպություն, 10 քաղաքական գործիչ, 1 լրատվական գործակալություն, 2 կրոնական կազմակերպություն: 4 դատական գործ՝ 2 փաստաբանների և2 հանրային դեմքերի կողմից, ովքեր միասին հարուցել են 2 դատական գործ»[123]: Այս գործերի մեծ մասի դեպքում հայցվող իրավական պաշտպանության միջոցը հանդիսացել է զրպարտության և վիրավորանքի դիմաց դրամական փոխհատուցման պահանջը, ապա հերքումը, որին հաջորդում է դատական ծախսերի փոխհատուցման պահանջը: Համեմատաբար քիչ է վիրավորանքի դիմաց ներողություն խնդրելու, պատասխանի և վճռի հրապարակման պահանջը: «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպության փորձագետների հավաստմամբ դրամական պահանջները տատանվել են 2-4 մլն. դրամի սահմաններում: Ընդ որում՝ «ամենաբարձր փոխհատուցման պահանջը կազմել է 18 մլն. դրամ, իսկ ամենացածրը՝ 1 լումա»[124]: Այս ամենով հանդերձ, ավելի է մեծացել վեճերը լրագրողական էթիկայի շրջանակներում լուծելու գործերի թիվը: Խոսքը հատկապես շոու-բիզնեսի ներկայացուցիչների մասին է:

«2011 թ. հունիսի 24-ին գրանցվեց առաջին դեպքը, երբ դատարանն անկախ որոշում ընդունեց «Իրավունք» թերթի դեմ Աժ պատգամավոր Տ. Արզաքանցյանի ներկայացրած հայցի վերաբերյալ: Այն է՝ չբավարարել Արզաքանցյանի պահանջը թերթից բռնագանձել 3 միլիոն դրամ, ինչպես նաև լրացուցիչ 1,900 դոլար փաստաբանական ծառայությունների և պետտուրքերի վճարման համար»[125]:

Իմաստային առումով զրպարտության մասին բնութագրումները միանշանակորեն նույնն են տարբեր երկրների իրավական փաստաթղթերում: Միայն Կանադան է, որ տարբերակում է զրպարտության երկու տեսակ՝ գրավոր զրպարտություն (libel) և բանավոր զրպարտություն (slander):[126]

---

[123] www.aravot.am
[124] Նույն տեղում:
[125] www.jnews.am/ archive/2011

[126] **Базылев В. Н., Бельчиков Ю. А., Леонтьев А. А., Ю. А. Сорокин,** Предварительские материалы по исследовательской теме, Оскорбление и ненорматив ность в текстах средств массовой информации,М.,1999, стр.12.

Զանգվածային լրատվության միջոցներից յուրաքանչյուրում զրպարտության որ տեսակն էլ նկատելի լինի, լրագրողը պատասխանատվություն չի կրում հատկապես այն դեպքերի համար, եթե տեղեկատվությունը տրամադրել են ինչպես պետական պաշտոնյաները (լրագրողը պարզապես վերարտադրող է, ուստի պետք է նշի տեղեկատվության աղբյուրը), այնպես էլ լրատվական տարբեր գործակալություններըն ու զանգվածային լրատվության միջոցները:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդված 1087.1-ի երրորդ մասով՝ «Զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը»[127]: Նույն հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ զրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել «կա՛մ հերքում, կա՛մ նյութական վնասի փոխհատուցում՝ նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով»[128]: Իսկ վիրավորանքի դեպքում (որը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ) այդ նույն լրատվամիջոցը պարտավորվում է «լրիվ կամ մասնակի տպագրել դատարանի վճիռը, կամ սահմանված նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել»[129]:

Քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունների համաձայն՝ անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե «իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին)»[130]:

Այլ խոսքով՝ եթե զրպարտությունը այնպիսի նյութի սխալ կամ միտումնավոր հրապարակումն է, որը վնաս է հասցնում անձի հեղինակությանը՝ պատճառելով վիրավորանք, տանջանք, հոգեկան տառապանք և ֆինանսական կորուստներ, ապա վիրավորանք կարելի է համարել ուրիշի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնող նյութը:

---

[127]ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, Հոդված 1087.1:
[128]Նույն տեղում:
[129]Նույն տեղում:

[130]Նույն տեղում:

Ավելին, եթե զրպարտչական հոդվածում ***միտումնավորությունը*** փոքրիշատե բացառվում է, ապա վիրավորանքի հիմքը հենց մարդուն ***միտումնավոր*** անվանարկելն է:

Ժուռնալիստիկայի պատմության մեջ զրպարտության դասական օրինակ է «Նյու–Յորք թայմսն ընդդեմ Սալիվանի» հայտնի դատական հայցը, երբ 1964 թ. ԱՄՆ Գերագույն դատարանը լրագրողներին որոշակի արտոնություններ տվեց՝ կապված իրենց սխալների հետ: Դատարանը որոշեց, որ եթե զրպարտչական հոդվածի զոհը հասարակական պաշտոնյա է, ապա նա պետք է ապացուցի, որ նյութը տպագրվել է «իրական չար դիտավորությամբ»: Վերջինս ապացուցելու համար հայցվորը դատարանում պետք է հաստատի, որ նյութը տպագրվել է՝

1. «դրա սխալ լինելու մասին իմացությամբ,
2. նյութի ճշմարտացիության նկատմամբ անխոհեմ անտարբերությամբ»[131]:

Շատ անգամ զրպարտության հայցով դատական քաշքշուկների պատճառն անփույթ լրատվությունն է և տեղեկատվության կրկնակի ճշգրտման անտեսումը: Ստույգ հոդվածը կարելի է տպագրել կամ հեռարձակել՝ առանց վախենալու: Եթե հոդվածը ստույգ չէ, ապա կարող են լուրջ խնդիրներ առաջանալ: Պատահական չէ, որ խմբագիրներից շատերն իրենց սխալի դեպքում գերադասում են արագ արձագանքել՝ անմիջապես ուղղում տպագրելով, քան հայտնվել դատարանում (թեկուզ հսկայական ծախսերից խուսափելու համար): Կան նաև այնպիսիք, որոնք մինչև վերջ պաշտպանում են իրենց լրագրողներին:

Օրաթերթերն իսկապես տպագրում են հոդվածներ, որոնք մարդուն կարող են վնասել՝ ոչ միայն նրան վիրավորելով, զրպարտելով ու վարկաբեկելով, այլև կարող են զրկել իր աշխատանքից, պաշտոնից՝ պատճառելով ինչպես բարոյական, այնպես էլ նյութական մեծ վնաս: Եթե նյութական վնասը ժամանակի ընթացքում հնարավոր է վերականգնել, ապա հասցված բարոյական վնասի հետևանքները, անկախ չափից ու ծավալից, երկար ժամանակ զգացնել կտան իրենց:

Երևանի մամուլի ակումբի անդամի վարքականոնում հստակ նշվում է, որ «անընդունելի են զրպարտությունը, անհիմն մեղադրանքները և վիրավորանքը»[132]: Իսկ «Ինտերնյուս»-ի լրագրողների վարկաքանոնի 3-րդ կետի դրույթների համաձայն՝ «փաստերը չի կարելի ծառայեցնել ոչ միայն

---

[131] **Լեոնարդ Ռեյ Թիլ, Ռոն Թեյլոր,** Դեպի խմբագրություն, Ժուռնալիստիկայի ներածություն, Երևան, 2005, էջ 95:

[132] www.ypc.am

մարդուն կամ կազմակերպությանն անվանարկելուն, վիրավորելուն կամ նսեմացնելուն, այլև մարդու ազգությունը, ռասան, կրոնը, ֆիզիկական և մտավոր վիճակը պիտակավորելուն»[133]:

Եթե «Առավոտ»-ի լրագրողները «պետք է զերծ մնան վիրավորանքներից, անհարկի ձևակերպումներից»[134], ապա Հայաստանի ժուռնալիստների միության անդամի էթիկայի կանոնագրում չկան զրպարտության և վիրավորանքի հատուկ ձևակերպումներ: Փոխարենը տրվում է ավելի ընդհանրական ձևակերպում.«...Չի կարելի գրավոր և բանավոր խոսքն օգտագործել այլ անձանց հետապնդելու, անձնական հաշիվներ մաքրելու, խմբակային և հեղինակային պատվամոլությունը բավարարելու համար»[135]: «Հետք» օնլայն պարբերականի լրագրողների կողմից ընդունված էթիկայի կանոնագրում ևս կարևորվում է «մասնավոր կյանքի պահպանումը և անհատի պատվի ու արժանապատվության անձեռնըմխելիությունը»:

Զրպարտության դրսևորումների մեր օրաթերթերում հաճախ կարելի է հանդիպել. դրանք երբեմն առնչվում են տվյալ լրատվամիջոցին, երբեմն էլ այլ լրատվամիջոցների և քաղաքական գործիչների միջև տեղի ունեցած տարաձայնությունների լուսաբանումներ են:

«Ժամանակ Երևան» օրաթերթի համարներից մեկում հոդվածագիրը ներկայացնում է կինոռեժիսոր Վիգեն Չալդրանյանի վրդովմունքն ու հերքման պահանջը «2006 թ. «Իրավունք» թերթում «Քրմուհին» ֆիլմի մասին լրագրողի քննադատական հոդվածի առնչությամբ. «Հրապարակման մեջ բոլոր տեղեկությունները (կենսագրականից բացի) և գնահատականները զրպարտչական են և վիրավորական...»[136]:

Փորձը ցույց է տալիս, որ զրպարտության, վիրավորանքի դրսևորումները և այլ էթիկական խախտումներ ավելի հաճախ արձանագրվում են նախընտրական շրջանում, երբ քննարկման առարկա են դառնում ընտրակաշառքն ու ընտրախախտումները: Դրանք երբեմն համապատասխանում են իրականությանը, երբեմն էլ շրջանառվող լուրերի արձագանքներ են կամ պարզապես ենթադրություններ (տե՛ս www.tert.am 13.03.2012):

1998 թ.-ից մինչ այսօր հայաստանյան մամուլում զրպարտության և վիրավորանքի համար պատասխանատվության կանչված լրագրողի ամե-

---

[133] Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ, Լոնդոն, 2005, էջ 30:
[134] www. aravot.am
[135] Հայաստանի ժուռնալիստների միության անդամի էթիկայի կանոնագիր:
[136] «Ժամանակ Երևան», 18 ապրիլի, 2007:

նաաղմկահարույց դեպքը կապված է «Օրագիր», այժմ՝ «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագրի անվան հետ[137] :

Անընդունելի է այն հանգամանքը, որ լրագրողը կանգնում է դատարանի առաջ, քանզի համարձակվել է գրել հասարակությունից թաքցվող երևույթների մասին: Բայց երբ դա արվում է դիտավորյալ, կանխամտածված, առանց լուրջ հիմքերի, արդեն մարդու իրավունքների լուրջ խախտում է:

Ժամանակ առ ժամանակ մամուլի և մյուս լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում հայտնվում են մարդիկ, ովքեր դատական քաշքշուկների առանցքում են՝ միմյանց հասցեին ուղղված վիրավորանքների ու զրպարտության համար: 2007 թ. «ԱԼՄ» հոլդինգի նախագահը դատի էր տվել ռեժիսոր Արմեն Մազմանյանին՝ իրեն եթերում վիրավորելու և զրպարտելու համար: Ռեժիսորը տուգանվեց 300.000 դրամով: «Երեկ պրն.Մազմանյանը տեղեկացրել է, որ առաջին ատյանի դատարանի վճիռը օրերս բողոքարկելու է վերաքննիչ դատարանում ու պայքարելու է մինչև վերջ՝ չնայած իր խոսքերով՝ «…ոչ մի ակնկալիք չունեմ»[138]:

Զրպարտության և վիրավորանքի ապաքրեականացումից հետո լրատվամիջոցների նկատմամբ դատական հայցերն ավելի են շատացել: Հայաստանի դատական դեպարտամենտի ղեկավար Միսակ Մարտիրոսյանի՝ «Հրապարակ» օրաթերթի դեմ հայցի (2011թ. օգոստոսի 11-12 հրապարակված «Դատական դեպարտամենտը Միսակնոց»[139] վերնագրով հոդվածի կապակցությամբ) արդյունքում Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը օրաթերթի գույքի վրա երեք միլիոն դրամ արգելանք դրեց՝ միաժամանակ պարտադրելով մինչև դատական գործընթացի ավարտը դատական վեճի մասին որևէ տեղեկություն չտարածել:

Դատարանի այս որոշումը դժգոհություն առաջացրեց լրագրողական միջավայրում: Վերջիններս հանդես եկան օրաթերթի պաշտպանության կոչով՝ հիմնավորելով, որ նմանատիպ որոշումները խախտում են խոսքի ազատության իրավունքը:

---

[137]«Հայոց աշխարհ», 1 հոկտեմբերի, 1999:
[138] «Առավոտ», 23 փետրվարի, 2007:

[139]www.jnews.am

Մեր օրաթերթերում քիչ չեն վիրավորանքի և զրպարտության դեպքերը՝ ուղղված նաև միջազգային քաղաքական գործիչների հասցեին: Երբեմն էլ դրանք պարզապես երևույթի մասին մեր մամուլի արձագանքներն են: Նման մի հոդված կա «Հայք»-ի համարներից մեկում: Այն վերաբերում է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հայտարարությանը, թե Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը իբր ներողություն է խնդրել Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատի ընդունած հակաթուրքական օրինագծի համար: Այս տեղեկատվությունն անմիջապես հերքվեց Ֆրանսիայի նախագահի ներկայացուցչի կողմից. «...Շիրակն Էրդողանից ներողություն չի խնդրել և նման մտադրություն չունի»[140]:

Նկատելի է, որ հայաստանյան մամուլում տեղ գտած որոշ հրապարակումներ հարուցում են ինչպես ներքին, այնպես էլ միջազգային քաղաքական գործիչների դժգոհությունը: Մասնավորապես ԵԽ գլխավոր քարտուղար Թերի Դևիսը հայտարարություն էր տարածել՝ հայտնելով իր դժգոհությունը տեղական լրատվամիջոցների՝ Հայաստան իր այցելության ոչ կոռեկտ լուսաբանումների առնչությամբ[141]:

Առաջին հայացքից զրպարտությունը և վիրավորանքը շատ դեպքերում նույնանում են, և ինչ–որ տեղ դրանք դժվար է տարբերակել: Սակայն **վիրավորանքի դեպքում անձի նկատմամբ ներկայացվում են ոչ թե փաստեր, այլ տրվում է նրա անձնական հատկությունների, վարքի ու գործունեության ընդհանուր բնույթի այնպիսի գնահատական, որի հետևանքով անպարկեշտ ձևով ստորացվում են նրա պատիվն ու արժանապատվությունը: Իսկ զրպարտության դեպքում կենտրոնանում են առկա փաստերի վրա:** Ցավոք, մեր մամուլում զրպարտվում ու վիրավորվում են ոչ միայն չինովնիկներն ու քաղաքական գործիչները, այլև տարբեր լրատվամիջոցներն ու վերջիններիս ներկայացուցիչները. սա ամենևին էլ չի խոսում լրագրողի պրոֆեսիոնալիզմի ու բարոյական նկարագրի մասին:

Ժուռնալիստական էթիկան պահանջում է լրագրող-գործընկեր հարաբերությունները դարձնել հնարավորինս հավասարակշռված: Այնինչ մերօրյա իշխանամետ և ընդդիմադիր լրագրողական միջավայրում ոչ միայն խախտվում է այս պահանջը, այլև շատ դեպքերում վերածվում է փողոցային խոսակցության: Նմանօրինակ երևույթներից խուսափելու համար Երևանի

[140] «Հայք», 17 հոկտեմբերի, 2006:
[141] «Հայաստանի Հանրապետություն», 8 նոյեմբերի, 2007:

մամուլի ակումբն իր անդամներին կոչ է անում «հարգել ու պաշտպանել գործընկերների մասնագիտական իրավունքը, առաջնորդվել ազատ մրցակցության կանոններով»[142]: Հայաստանի ժուռնալիստների միության անդամի էթիկայի կանոնագրում հատուկ դրույթ կա «մասնագիտական համերաշխության» մասին, ըստ որի՝ «ՀԺՄ անդամը պատասխանատու է իր մասնագիտության հեղինակության համար, հարգում է իր և իր գործընկերների մարդկային և մասնագիտական արժանապատվությունը»[143]: Նկատենք, որ լրագրողական այս կազմակերպություններն այնքան չեն առնչվում խնդրին, որքան հենց լրատվամիջոցների ներկայացուցիչները: Հետևաբար գործող լրագրողների՝ այդ հարաբերությունները կարգավորելու շահագրգռվածությունը առողջ լրագրողական միջավայրի ստեղծման երաշխիքն է: «Առավոտ» օրաթերթի լրագրողները գործընկերների հետ փոխհարաբերությունների կարգավորման սեփական մոտեցումն ունեն. «Առավոտ»-ի լրագրողները դեմ են լրատվամիջոցների միջև «հարաբերություններ պարզելուն», թերթի էջերում չեն քննադատում այլ լրատվամիջոցների կամ լրագրողների, չեն պատասխանում վերջիններիս քննադատությանը»[144]: Չնայած այս դրույթի առկայությանը, երբեմն լինում են բացառություններ:

Օրինակ՝ օրաթերթի լրագրող Վասակ Դարբինյանը «Հայոց աշխարհ»-ի իր գործընկերոջ «Ով վճարում է, նա էլ պատվիրում է» (3.02.2000 թ.) հրապարակումը համարում է «ապատեղեկատվական գրոհ»՝ տալով իր մեկնաբանությունները. «Կեղծ փաստերի» վրա հիմնված «գյուտը», թե ահա ինչու է թափ առել «հասարակական կարծիքը շեղելուն միտված քարոզչությունը»՝ պարզապես ծիծաղելի է: Ցավ է պատճառում «Հայոց աշխարհ»-ին, թե «սկսված արշավի նպատակն է վերջնականապես վարկաբեկել Վահան Հարությունյանին»: Ոչ ոք նրան վարկաբեկելու խնդիր չունի, բայց թե ինչու՞ է «Հայոց աշխարհ»-ը բացահայտ պաշտպանում ու գուրգուրում նրան, «Հայոց աշխարհ»-ի խնդիրն է ... Ահա այս մակարդակով է «լուսավորում» իր ընթերցողներին «Հայոց աշխարհ»-ը և բարձրագահ խոսքեր ասում «հասարակական կարծիքը ապակողմնորոշելու», «գործի նյութերը բացահայտ խեղաթյուրելու», «դատաքննության վրա ստվեր գցելու», «շանտաժի» և այլնի մասին...»[145]:

---

[142] www.ypc.am
[143] Հայաստանի ժուռնալիստների միության անդամի էթիկայի կանոնագիր, Երևան:
[144] www.aravot.am
[145] «Առավոտ», 5 փետրվարի, 2000:

Նկատելի է, որ լրատվամիջոցների միջև «բանակռիվները» ծավալվում են հասարակական հնչեղություն ունեցող երևույթների, քաղաքական պայքարի որոշակի շրջանում: Արդյունքում մամուլում հայտնվում են միմյանց վիրավորող հոդվածներ (տե'ս «Հայկական ժամանակ», 30 հոկտեմբերի, 2007):

Մեր մամուլում հանդիպում են նաև այնպիսի հրապարակումներ, որոնցում վիրավորական արտահայտությունները լրագրողների գրչին չեն պատկանում, այլ այս կամ այն քաղաքական գործչի «մտքերն» են: Այս դեպքում նրանք հանդես են գալիս ընդամենն այդ ամենը փաստողի դերում (տե'ս «Առավոտ»,10 մայիսի, 2007): Այսպիսի հրապարակումների համար դատական հայցերի դեպքում լրագրողը, ըստ օրենսդրության և միջազգային իրավական ակտերի, կարող է ազատվել պատասխանատվությունից, եթե հղում է արվում հեղինակին:

Լրագրողների ու խմբագիրների մեծ մասը հակված է այն կարծիքին, որ «ոչ մի լկտի, անպարկեշտ կամ անվայել բան չպետք է տպագրվի կամ հեռարձակվի, իսկ մյուսներն էլ ընդունելի են համարում, ասենք, օրինակ հայհոյանքների, անպարկեշտ բառերի ու լուսանկարների տպագրումը»[146]: Մյուս կողմից՝ սա ճաշակի ու անձնական նախապատվության հարց է, ինչը ոչ մի ընդհանուր բան չունի լուրջ, պրոֆեսիոնալ ժուռնալիստիկայի հետ: Մի նկատառում ևս. եթե անգամ նման բառապաշարի օգտագործումը խիստ բնութագրական է լուսաբանվող խընդրին ու նրա հերոսին, այնուամենայնիվ, չափի զգացումն ու զսպվածությունն անհրաժեշտ են: Ավելին, <u>խոսքի ազատություն ա</u>մենևին էլ չի նշանակում <u>խոսքի սանձարձակություն</u>:

Հայաստանյան մամուլում քիչ չեն պատիվն ու արժանապատվությունը վիրավորող հրապարակումները: «Ռևանշիստներն ավելի ներողամիտ են» հոդվածը ներկայացնում է «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության փոխնախագահ Պետրոս Մակեյանի՝ «Հայոց աշխարհ» օրաթերթում իր պատիվն ու արժանապատվությունը վիրավորող հրապարակումների առնչությամբ մեղավորներին պատժելու խնդրանքով»[147] դատախազությանը ներկայացված բողոքը: Ի դեպ, թերթը նախապես հրաժարվել էր խեղաթյուրված փաստերի առնչությամբ հերքում տպագրել: Թեև Կենտրոնի դատախազությունն ընթացք էր տվել այս դիմումին, սակայն

[146] **Մելվին Մենչեր,** Լրագրության հիմունքներ, Երևան, 2005, էջ 407:
[147] «Առավոտ», 3 փետրվարի, 2000:

օրաթերթի գլխավոր խմբագիրը և Պետրոս Մակեյանը զրույցի արդյունքում պայմանավորվածություն են ձեռք բերել՝ վերջինիս վերաբերող հրապարակումների պարագայում պարզել դրանց հիմավորվածությունը:

«Լրագրողին պատասխանատվության ենթարկելու, ազատազրկելու խնդիր չեմ հետապնդում»,-ասել է Պետրոս Մակեյանը,- փոխհամաձայնության արդյունքում այդ գործը երևի կարճվի»[148]:

Մեկ այլ դեպքում ԱԺ նախագահի խորհրդական Թաթուլ Մանասերյանը «Ժամանակ» օրաթերթից պահանջում է հերքել իր պատիվն ու արժանապատվությունը, գործարար համբավը արատավորող տեղեկությունը վաշխառության մասին՝ միևնույն ժամանակ դատարանի վճռով թերթից պահանջելով ընդամենը «510 հազար դրամ, որից՝ 300 հազարը՝ զրպարտության, 200 հազարը փաստաբանական ծախսերի, 10 հազարը՝ որպես պետական տուրք»[149]:

Հերքման և պատասխանի իրավունքը մարդու հիմնարար ազատություններից է, որը ևս կարգավորվում է օրենքով: Միջազգային իրավական փաստաթղթերից զատ՝ այն իր պաշտպանությունն է գտել նաև ՀՀ Սահմանադրության մեջ, որի 23–րդ հոդվածի 4–րդ կետով նախատեսվում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման և իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք»[150]: «Տեղեկատվության մասին» ՀՀ օրենքի 8–րդ հոդվածն ամբողջությամբ սահմանում է հերքման և պատասխանի իրավունքի սահմանները՝ առանձնացնելով նաև մերժման պատճառները: Սույն հոդվածի 3–րդ կետով «հերքումն իրականացվում է լրատվության նույն միջոցում, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա՝ հերքում պահանջողի համար ընդունելի այլ եղանակով: Հերքումն իրականացվում է «Հերքում» խորագրի ներքո: Տեղակայման, ձևավորման, տառատեսակի չափի ու տեսակի, հաղորդման ժամի առումով հերքումը չպետք է զիջի այն տեղեկատվությանը, որին վերաբերում է»[151]:

Իսկ ահա «Իրավական թեմաներ լուսաբանող լրագրողների վարքագրծի կանոնագրքի» համաձայն՝ «Հերքման համար չի կարելի պահանջել ավելի

---

[148]Նույն տեղում:
[149]«Ժամանակ», 2010:
[150]ՀՀ Սահմանադրություն, Փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, Հոդված 23, Երևան, 27 նոյեմբերի, 2005 :
[151]ՀՀ օրենքը «Զանգվածային լրատվության մասին», Հոդված 8, Երևան, 2003:

մեծ տեղ կամ ժամանակ, քան օգտագործվել է հերքվող նյութի հրապարակման կամ հեռարձակման համար: Հերքումը պետք է կատարել անհապաղ՝ երևացող տեղում կամ եթերի սկզբում՝ առանց խմբագրական մեկնաբանությունների»[152]: Սովորական հայցի դեպքում սույն հոդվածով նախատեսվում է «հերքումն իրականացնել՝ պահանջն ստանալու օրվանից հետո մեկշաբաթյա ժամկետում», իսկ «պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ թեկնածուի մասին տարածված տեղեկության հերքումը կատարվում է 24 ժամվա ընթացքում: Եթե մինչև քվեարկության սկիզբը մնացել է ոչ ավելի, քան 24 ժամ, ապա հերքումը կատարվում է դրա մասին պահանջն ստանալուն պես»[153]:

Հերքման պահանջի հետ ներկայացվող պատասխանի հրապարակման պահանջը կարող է մերժվել, եթե այդ պատասխանը չի համապատասխանում սույն օրենքի պահանջներին: Օրենքի 8–րդ հոդվածի 9–րդ կետն էլ սահմանում է. «Եթե լրատվական գործունեություն իրականացնողը հրաժարվում է տարածել հերքումը կամ պատասխանը կամ խախտում է դրանք տարածելու՝ սույն օրենքով սահմանված կարգն ու ժամկետը, ապա անձը, որի իրավունքները խախտվում են, իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դիմել դատարան՝ հերքումը տարածելու և իր պատասխանը հրապարակելու հայցով»[154]: Սակայն ոչ միշտ է, որ միայն հերքման տպագրումը բավարար է՝ վերականգնելու հրապարակմամբ հասցված վնասը: Եթե նյութապես հայցվորը կարող է շահել, ապա հասցված բարոյական վնասը դեռ երկար ժամանակ կարող է հիշեցնել կատարվածը:

Ինչևէ, հերքման տպագրումը կարևոր է և հանդիսանում է ժուռնալիստական էթիկայի հիմնարար սկզբունքներից որևէ մեկը խախտելու փաստը ընդունող պահանջներից մեկը:

Այն, որ հերքման տպագրման հարցում օրաթերթերն առաջնորդվում են օրենքով նախատեսված դրույթներով, փաստում են հայաստանյան օրաթերթերում «Հերքում» խորագրի տակ զետեղվող նյութերը: Դրանք հաճախ վերաբերում են նաև միջազգային լրահոսին: «Հայք» օրաթերթի համարներից մեկի հոդվածի համաձայն.«ՌԴ ԱԳՆ-ն հերքել է Բուշերում

[152]Իրավական թեմաներ լուսաբանող լրագրողի վարքագծի կանոնագիրք, Երևան, 2002:
[153]ՀՀ օրենքը «Զանգվածային լրատվության մասին», Հոդված 8.4, Երևան, 2003:
[154]Նույն տեղում, Հոդված 8.9:

իրանական ԱԷԿ-ին վառելիք չտրամադրելու վերաբերյալ «The New York Times» թերթի մարտի 19-ի հոդվածը, որտեղ թերթը, մեջբերելով իր ամերիկյան, ռուսական և իրանական գաղտնի աղբյուրներին, գրել է, որ Ռուսաստանը Իրանին վառելիք չի տրամադրի, մինչև պաշտոնական Թեհրանը չդադարեցնի ուրանի հարստացման գործընթացը, և որ դա Ռուսաստանի ոչ թե տնտեսական, այլ քաղաքական որոշումն է: Ռուսական կողմը հոդվածը որակել է որպես ապատեղեկատվություն և հերքել է այն տողերը, թե Ռուսաստանը վերջնագիր է ներկայացրել Իրանին»[155]:

«Հայաստանի Հանրապետություն»-ն էլ, մեջբերելով «Turkish Daily News»-ի հաղորդագրությունը, գրում է. «Ակոս» շաբաթաթերթի սպանված խմբագրապետ Հրանտ Դինքի որդին՝ Արաստ Դինքը, հերքել է Թուրքիայից հեռանալու մասին օրերս թուրքական մամուլի տարածած լուրերը»[156]:

[155] «Հայք», 22 մարտի, 2007:
[156] «Հայաստանի Հանրապետություն», 7 նոյեմբերի, 2007:

3.2. ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Զրպարտության և վիրավորանքի, մարդու պատվի և արժանապատվության ոտնահարման կողքին նույնքան կարևոր են մամուլում տեղ գտած անձնական կյանքի միջամտության դրսևորումները: Առաջին հայացքից թվում է, թե այս խախտումների ընդհանուր ձևակերպումները նույնն են: Բայց նրբություններ, այնուամենայնիվ, կան: Մեր պատկերացմամբ՝ **պատիվը** անձի հասարակական գնահատականն է, նրա՝ որպես հասարակության անդամի սոցիալական և հոգևոր հատկությունները բնութագրող հիմնական չափանիշը, որը մեծ մասամբ կախված է հենց իրենից, իր դրսևորած վարքագծից, այլ մարդկանց, հասարակության և պետության հանդեպ ցուցաբերած վերաբերմունքից:

Իսկ ահա **արժանապատվությունը** սեփական հատկությունների, կարողությունների, ունակությունների, աշխարհայացքի ներքին ինքնագնահատականն է:

Բարի համբավն էլ անձի հասարակական արժեքավորության, հեղինակության, ընդունակությունների և մյուս հատկանիշների գնահատականն է՝ ազգականների, ընկերների ու այլոց կողմից: Այս երեք հատկանիշները փոխկապակցված են, և երբ նսեմացվում է սրանցից որևէ մեկը, մյուսներն անմիջականորեն առնչվում են դրան: Այն հանգամանքը, որ զրպարտության և վիրավորանքի, պատվի և արժանապատվության ոտնահարման հետ մեկտեղ անձնական կյանքին միջամտությունը ևս քրեաիրավական լուրջ խախտում է, փաստում են ՀՀ Քրեական և Քաղաքացիական օրենսգրքերում առկա համապատասխան հոդվածները: Ի տարբերություն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, որտեղ այս խախտման համար բավարար է հերքման տպագրումը և պատասխանի իրավունքը, ՀՀ Քրեական օրենսգրքի 144–րդ հոդվածով նախատեսված է տուգանք՝ «նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ կալանք մեկից երկու ամիս ժամկետով» այն դեպքում, երբ «**մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելը կամ հրապարակային ստեղծագործություններով կամ լրատվամիջոցներով այդպիսի**

տեղեկություններ տարածելը կամ հավաքելը, կամ պահելը նախատեսված չեն օրենքով»[157]:

«Երաշխավորելով խոսքի ազատությունը՝ մարդու իրավունքները պաշտպանող միջազգային իրավունքի նորմերը միաժամանակ նշում են, որ այս ազատությունը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել մարդու պատվի և արժանապատվության պաշտպանության նպատակով: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում են, որ խոսքի ազատությունը ենթակա է սահմանափակման այլոց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու նպատակով»[158]: Ավելին, եթե «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7–րդ հոդվածի 1–ին մասով արգելվում է «այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը»[159], ապա օրենքի 8–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ «անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը»[160]:

Իսկ ահա ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասով անձի պատվի ու արժանապատվության պաշտպանությունը սահմանվում է այսպես. «Անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից՝ սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով»[161]: Նույն հոդվածի երրորդ մասով՝ «եթե քաղաքացու պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկությունները տարածած անձին պարզելն անհնար է, ապա անձը, ում մասին նման տեղեկություններ են տարածվել, իրավունք ունի դիմելու դատարան՝ տարածված տե-

---

[157] ՀՀ Քրեական օրենսգիրք, Հոդված 144, Երևան, 2007, էջ 73:
[158] Զանգվածային տեղեկատվության բնագավառը Եվրոպայի խորհրդի փաստաթղթերում, Երևան, 2003, էջ 13:
[159] ՀՀ օրենքը «Զանգվածային լրատվության մասին», Հոդված 7, Երևան, 2003:
[160] Նույն տեղում, Հոդված 8:
[161] ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, Հոդված 19:

ղեկություններն իրականությանը չհամապատասխանող ճանաչելու պահանջով»[162]:

Փորձը ցույց է տալիս, որ կան լրագրողներ և խմբագիրներ, որոնք մարդկանց մասին տեղեկություններ տպագրելու հատուկ «նախասիրություն» ունեն: Բնականաբար, անձին տհաճություն կպատճառի իր մասին վատ տեղեկատվության հրապարակումը, առավել ևս, եթե դա համապատասխանում է իրականությանը: Այս տարբերակն ավելի բնորոշ է երկրի ղեկավար անձանց, քաղաքական գործիչներին ու պետական պաշտոնյաներին: Իսկ մարդկանց մի ստվար խումբ էլ, հատկապես շոուբիզնեսի ներկայացուցիչները, չեն կարող ապրել՝ առանց մամուլի «ուշադրությունից» դուրս մնալու: Ավելին, ժամանակ առ ժամանակ վերջիններս են լուրեր տարածում իրենց մասին ասեկոսեների տեսքով՝ հույս ունենալով այդ կերպ որոշ ժամանակ ևս լինել հասարակության և լրագրողների ուշադրության կենտրոնում:

Ելնելով հասարակական շահերից՝ լրագրողն իրավունք ունի պարզել ու քննարկել այն հարցը, թե, օրինակ, ի՞նչ փողերով է այս կամ այն չինովնիկը ձեռք բերում թանկարժեք իրեր, դղյակներ և այլն: Եթե հասարակական պաշտոնյաների մասին տեղեկություններ տպագրելիս «Առավոտ» օրաթերթի լրագրողներն առաջնորդվում են սեփական էթիկայի կանոնագրի այն դրույթով, որ «Առավոտի» լրագրողները չեն հրապարակում մարդկանց մասնավոր կյանքի մասին տեղեկություններ, եթե դրանք չեն առնչվում պաշտոնյաների եկամուտներին և կոռուպցիոն երևույթներին»[163], ապա Հայաստանի ժուռնալիստների միությունն, էթիկայի իր կանոնագրի համաձայն, միության յուրաքանչյուր անդամից հարգանք է պահանջում անձի պատվի և արժանապատվության, համամարդկային արժեքների նկատմամբ, թեև նախատեսում է նաև որոշ բացառություններ.«ՀԺՄ անդամը հարգում է այն մարդկանց պատիվն ու արժանապատվությունը, ովքեր դառնում են իր մասնագիտական ուշադրության առարկա, խուսափում է նրանց անձնական կյանքի փաստերը հրապարակելուց» [164]:

Այս ամենով հանդերձ՝ հաճախ հարց է առաջանում՝ ժուռնալիստական էթիկայի տեսանկյունից ճի՞շտ է արդյոք միջամտությունը որևէ մեկի

[162]ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, Հոդված 19, Երևան, 2005, էջ13:
[163]www.aravot.am
[164]Հայաստանի ժուռնալիստների միության անդամի էթիկայի կանոնագիր :

անձնական կյանքին: Հարցը ենթադրում է երկու մոտեցում, և լրագրողների ու խմբագիրների գրեթե մեծ մասը համակարծիք են ստորև ներկայացվող տարաբաժանման հետ.

1.Եթե հերոսը հասարակական պաշտոնյա է (նախագահ, նախարար, պատգամավոր, քաղաքապետ, համայնքապետ և այլք), ապա ներխուժումը նրա անձնական կյանք արդարացված կլինի այնքանով, որքանով որոշ փաստերի երևան գալը կբխի պարզապես հասարակության շահերից: Այս դեպքում դատարանն էլ է իր հերթին խիստ պահանջներ ներկայացնում:

2.Եթե հերոսը սովորական քաղաքացի է, լրագրողի իրավունքները՝ ներխուժելու որևէ մեկի անձնական կյանք, խիստ սահմանափակ են: Պատճառը պարզ է. չէ՞ որ, եթե առաջին դեպքում գործ ունենք հասարակական շահերի, ապա այս դեպքում՝ մասնավոր անձանց կյանքի հետ[165]:

Տարբեր երկրներ այս խնդրին տարբեր տեսանկյուններից են նայում: Սակայն նրանց միջև առկա ընդհանրությունն այն է, որ վերոնշյալ դասակարգման հետ համակարծիք են: Տարակարծությունները վերաբերում են հետևյալ հարցին՝ միջամտությունը անձնական կյանք պետք է նախատեսվի երկրի բարձրագույն օրենքո՞վ՝ Սահմանադրությա՞մբ, թե՞ Քրեական ու Քաղաքացիական օրենսգրքերով, թե՞ պարզապես պետք է կարգավորվի ժուռնալիստական էթիկայի կանոնագրերով և իրավական այլ կետերով: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում են, որ խոսքի ազատությունը ենթակա է սահմանափակման այլոց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու նպատակով: ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք»: 19–րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ «մարդուն չի կարելի ենթարկել նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի»: Իսկ 20–րդ հոդվածն էլ սահմանում է, որ «յուրաքանչյուր ոք ունի իր պատիվն ու բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունք»:Չէ՞ որ անձի ազատության, պատվի և արժանապատվության ապահովումը

[165]CFPJ-ի լրագրող-դասախոսների համար կազմակերպված դասընթացների ժամանակ (Փարիզ, 2007, 19-30 օգոստոսի) այս առիթով CFPJ-ի ֆրանսիացի մեր դասախոսներից մեկը՝ Ժան Կլոդ Ալանիկը, նշեց, որ «Ֆրանսիայում լրագրողները շատ զգույշ են հատկապես փողոցային նկարահանումների ու լուսանկարահանման ժամանակ, քանզի օրեր անց նման իրավիճակում հայտնված լրագրողը կարող է դատարան կանչվել՝ ինչ-որ մեկի անձնական կյանք ներխուժելու համար»:

տվյալ անհատի ձևավորման և զարգացման կարևորագույն նախապայմաններից է: Այնուամենայնիվ, «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսվում են տեղեկատվության ազատության որոշակի սահմանափակումներ, եթե դա՝

1. «պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,
2. խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը»[166]:

Գերմանիայում, Նիդերլանդներում և Դանիայում անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքն ամրագրված է Սահմանադրությամբ: Իսկ Շվեդիան, որի օրենքները, կարելի է ասել, կատարյալ են, անձնական կյանքի իրավունքը պաշտպանում է զրպարտության մասին օրենքով: Ֆրանսիայում այս երևույթն ի սկզբանե կարգավորվել է քաղաքացիական օրենսգրքով, իսկ ավելի ուշ այն դարձավ սահմանադրական դրույթ: 1991 թ. ստեղծվեց հանձնաժողով, որի նպատակը ոչ թե մամուլի ազատության պաշտպանությունն է, այլ հասարակության պաշտպանությունը: Սակայն «հանձնաժողովի կողմից ընդունված իրավական կոդեքսի անհստակությունների պատճառով անձնական կյանքին միջամտության մասով լիարժեք պաշտպանություն չկա»[167]:

Առհասարակ, միջամտություն անձնական կյանքին չի նշանակում միայն ինտիմ տեղեկատվության հրապարակում: Եթե թերթում հայտնվում է որևէ մեկի լուսանկարը, առանց վերջինիս համաձայնության, նույնպես առնչվում է այս դրույթին: Այս մասով ևս պահանջները տարբեր են, և լուսանկարների հրապարակումն առավել զգուշություն է պահանջում: Եթե հոդվածում շոշափվում են միայն անուն-ազգանուններ, ապա լուսանկարի տպագրումով ընթերցողին է ներկայանում այդ անձն արդեն իր կերպարով: «Հայկական ժամանակ» օրաթերթն իր *«Հայոց ծանակ»* խորագրի տակ պարբերաբար տպագրում է տարբեր պաշտոնյաների լուսանկարներ՝ թերթի կողմից տրվող համապատասխան բնութագրումներով: Ինքնատիպ, զավեշտալի իլյուստրացիոն լուծումներով էլ աչքի է ընկնում «Իրավունք *de facto*» պարբերականը:

---

[166] ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», Հոդված 8, Երևան, 2003:

[167] **Հարությունյան Մ.,** Զանգվածային լրատվության միջոցներ: Օրենքներ և պրակտիկա,Երևան,1999, էջ 84:

Լրատվամիջոցների նման հրապարակումների համար քաղաքական գործիչների վերաբերմունքը երբեմն կարող է դրսևորվել անձնական հաշվեհարդարի, երբեմն էլ՝ հրապարակային մերկացնող ելույթների տեսքով: Օրինակ՝ «Մամուլը Բլերին է քննադատում, Բլերը՝ մամուլին» հոդվածում մեջբերված է Անգլիայի նախկին վարչապետ Թոնի Բլերի գնահատականը բրիտանական մամուլի հասցեին (հրաժարականից 2 շաբաթ առաջ): Նա մամուլը համեմատել է «սենսացիոն նյութերի որսի դուրս ելած վայրի գազանի հետ, որը զոհաբերում է իրականում կարեվոր և հետաքրքիր նյութերը: ՁԼՄ–ները փչացնում են քաղաքական գործիչների և ընտրողների միջև հարաբերությունները և, ի վերջո, մամուլը բացասաբար է անդրադառնում հասարակական կյանքի վրա: Անհրաժեշտ է փաստի և կարծիքի միջև հատուկ սահման դնել»[168]:

Երբ լրագրողը պատասխանատվության է կանչվում ժուռնալիստական էթիկայի վերոնշյալ խախտումների համար, միշտ էլ դժգոհության բուռն ալիք է բարձրանում լրագրողների շրջանում, քանզի այն համարում են խոսքի ազատության ոտնահարում, սահմանափակում: Հարց է առաջանում՝ մի՞թե ինչ-որ մեկին վիրավորելու ու զրպարտելու, պատիվն ու արժանապատվությունը ոտնահարելու, հեղինակազրկելու մեջ է խոսքի ազատությունը: Իհարկե, ոչ: Բայց երբ լրագրողին դատապարտում են, ասենք, զինծառայությունից խուսափելու համար (որը 2003 թ. ընդունված օրենքով անհրաժեշտ գումարը վճարելու դեպքում այլևս քրեորեն պատժելի չէ), մտորելու տեղիք է տալիս, որ, իրոք, ոտնահարվում է խոսքի ազատության իրավունքը, ինչպես պատահեց «Ժամանակ Երևան» օրաթերթի գլխավոր խմբագիր Արման Բաբաջանյանի հետ: Նմանօրինակ հրապարակումների առկայությունը մեր մամուլում փաստում է այն հանգամանքը, որ նման կերպ թերթերը փորձում են լսարան գրավել, դառնալ մրցակցային, լինել տարբեր գերատեսչությունների ուշադրության կենտրոնում: Բայց խնդիրն այն է, որ որոշ թերթեր կարող են նման հրապարակումներով հանդես գալ՝ որոշակի կոռեկտություն դրսևորելով, իսկ մյուսներն էլ անցնում են թույլատրելիի սահմանները, ինչն արդեն իսկ ընդունելի չէ ժուռնալիստական էթիկայի առումով: Լրագրողները՝ որպես պետության և հասարակության կապող օղակ, պետք է հանդես գան տարբեր ոլորտներում առկա թերությունները, բացթողումներն ու սխալները լուսաբանող հրապարակումներով: Ելնելով հասարակական շահերից՝ կարելի է արձանագրել փաստը, բայց ոչ վառ երանգներ «հաղորդել» նյութին: Լրագրողներից պրոֆեսիոնալիզմ և մեծ

[168] «Հայք», 14 հունիսի, 2007:

զգուշավորություն է պահանջվում, նախքան նմանատիպ հոդվածներ տպագրելը: Կարծում ենք՝ սա վերաբերում է թե՛ քաղաքական գործիչների, թե՛ ցանկացած չինովնիկի մասին նման տեղեկությունների հրապարակումներին, որոնք պետք է լինեն էթիկայի սահմաններում: Ի վերջո, գործ ունենք մարդու կյանքի հետ:

3.3. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դատական քննության լուսաբանման և հրապարակայնության հարցերը կարգավորվում են համապատասխանաբար ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ և ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածներով: «Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածի՝ «Կարգը դատական նիստում»՝ դռնբաց դատական նիստին ներկա գտնվողները (ներառյալ լրագրողները) իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն և ձայնագրություն: Դատական նիստի կինո և լուսանկարահանումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով ու հեռուստատեսությամբ կատարվում են կողմերի համաձայնությամբ՝ գործը քննող դատարանի թույլտվությամբ»: Իսկ ահա «Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Լրատվամիջոցների կողմից քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելու մասին» □2003□13 Հանձնարարականում նշվում են քրեական գործերով դատաքննության վերաբերյալ լրատվամիջոցների կողմից տեղեկատվություն հաղորդելու սկզբունքները: Որպես առաջին սկզբունք նշվում է լրատվամիջոցներով հանրության իրազեկումը»[169]: Արդարադատության իրականացման մասին լրատվությունը ևս Եվրոպական Կոնվենցիայի 10–րդ հոդվածի պաշտպանությունն է վայելում: Չէ՞ որ մամուլը գերակայող դեր է կատարում հատկապես օրենքով առաջնորդվող պետության մեջ՝ հասարակությանը մատուցելով բազմաբնույթ տեղեկատվություն:

Թեև ՀՀ Սահմանադրության 27–րդ հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»[170], այնուամենայնիվ, դատական գործընթացների լուսաբանումը լրատվամիջոցների կողմից լիարժեք չէ, քանզի շատ դեպքերում լրագրողներին հնարավորություն չի տրվում ծանոթանալու դատական գործընթացի նյութերին ամբողջությամբ. այլ կերպ ասած՝ ոլորտում առկա է տեղեկատվության անմատչելիություն: Բնականաբար, լրատվամիջոցների

---

[169] **Герман Шварц, Чарльз Браун,** Судьи и журналисты в странах восточной Европы в переходе к демократии, Freedom House, Киев, 1998, стр. 66:

[170] ՀՀ Սահմանադրություն, Փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, Հոդված 27, Երևան, 27 նոյեմբերի, 2005:

ներկայացուցիչները սահմանափակվում են միայն նրանով, ինչի ականատեսն ու ունկնդիրն են եղել (խոսքը հատկապես դռնբաց դատավարությունների մասին է, իսկ դռնփակ դատավարության լուսաբանման մասին դատողություններն ավելորդ են): Սա՝ մի կողմից: Մյուս կողմից քրեական գործի նյութերին լրագրողը կարող է ծանոթանալ միայն իրավապահ մարմիններից, ոստիկանության լրատվական ծառայություններից: Թե ինչքանով է բավարար այսպիսի մոտեցումը, վկայում են մեր օրաթերթերում տեղ գտած հրապարակումների ուսումնասիրությունները: Հետևաբար ժուռնալիստական էթիկայի տեսանկյունից լուրջ խնդիր է ներկայացնում հանցագործությունների լուսաբանումը:

Շատ երկրների ժուռնալիստական էթիկայի կանոնագրերում, ինչպես նաև տարբեր լրատվամիջոցների ու լրագրողական կազմակերպությունների կողմից առանձին կերպով քննվում են, օրինակ, դիակների, վիրավորվածների և, առհասարակ, տուժածների լուսանկարահանման ու ցուցադրման հարցերը, կարևորվում է օրինազանցներին մինչև դատական գործընթացի ավարտը և վճռի կայացումը ճիշտ բնութագրելը (մեղադրյալ, ամբաստանյալ ձևակերպումները կարող են վնասել հատկապես անչափահասների հեղինակությունը, քանի դեռ ապացուցված չէ նրանց մեղքը): Այս առումով իրավական թեմաներ լուսաբանող մեր լրագրողներն աշխատում են զգույշ լինել: Նրանք տեսադաշտում ունեն և՛ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված 21–րդ հոդվածը, որ «հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»[171], և՛ «Ֆեմիդա» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ մշակված, շրջանառության մեջ դրված «Իրավական թեմաներ լուսաբանող լրագրողների մասնագիտական վարքագծի» կանոնագիրքը, որի կարևոր պահանջներից մեկը անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանումն է՝ «...ուշադիր լինել անչափահասների ֆիզիկական և հոգեկան առողջությունը վտանգող հանգամանքների ներգործությունը բացառելու համար»[172]: Բայց եթե օրինազանցներին բնութագրելու հարցում լրագրողների զգուշությունն ակնհայտ է, ապա փաստերի վերաշարադրումը՝ խիստ հակասական:Կարծում ենք՝դատական գործընթացների ոչ լիարժեք

---

[175]Նույն տեղում, Հոդված 21:

[172]Իրավական թեմաներ լուսաբանող լրագրողների մասնագիտական վարքագծի կանոնագիրք, Երևան, 2002:

լուսաբանման օբյեկտիվ պատճառը տեղեկատվության անմատչելիությունն է (որը մասնակի պաշտպանություն է գտնում ՀՀ Սահմանադրության 19–րդ հոդվածի 2–րդ մասով՝ «հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվամիջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել»), իսկ սուբյեկտիվ պատճառը՝ լրագրողների շրջանում նկատվող սերնդափոխությունը: Սկսնակներն իրավական բնագավառը լուսաբանելու փորձառություն և անհրաժեշտ տեղեկացվածություն չունեն, ուստի և թեմայի լուսաբանումը պրոֆեսիոնալ չի կարող լինել:

Բավական նրբանկատորեն և պրոֆեսիոնալ ձևով պետք է լուսաբանվեն դատական գործընթացները, որ ընթերցողը կարողանա ընկալել կատարվածի իսկությունը, հակառակ դեպքում հասարակության կողմից կարող են լինել այնպիսի արձագանքներ, ինչպիսին Մ. Սեբաստացու անվան դպրոցի ուսուցչուհի Անահիտ Հարությունյանի բողոքն է՝ ուղղված լրագրողներին. «Հունվարի 10–ին մեր տնօրենի՝ Աշոտ Բլեյանի դատական առաջին նիստին մասնակցելուց հետո ուշադիր հետևել եմ մամուլի արձագանքներին ու զարմացել: Ինչ անկարևոր բաների վրա են սևեռվում մեր լրագրողները, ինչ դժվար են հասկանում պարզ բաները, ինչքան անտարբեր ու անզգա են իրենց շուրջը կատարվողի նկատմամբ: Նրանց հրապարակումներին ծանոթանալիս կասկածում եմ, որ ներկա են եղել այդ պրոցեսին. թվում է՝ գրել են սրա-նրա պատմածից... Ինչպե՞ս կարող էր դահլիճում ներկա գտնվող լրագրողն այդքան անտարբեր լինել նրա բարձրացրած կարևորագույն հարցի՝ առանց դատարանի վճռի կալանման փաստի նկատմամբ: Կարծեմ միայն «Հայոց աշխարհ»-ն էր դրան անդրադարձել, իսկ «Նորաքերթը» որակել էր՝ «Բլեյանը կառչեց Սահմանադրությունից»[173]:

«Առավոտ»-ի լրագրողները դատական գործընթացներ լուսաբանելիս երբեմն առանձին մեկնաբանություններ են անում (տե՛ս «Առավոտ», 2 փետրվարի, 2000 թ.):

Հասարակական հնչեղություն ունեցող դատավարությունների լուսաբանման ժամանակ մամուլում հայտնվող այս կամ այն հրապարակումը կարող է առաջացնել կողմերի դժգոհությունը՝ կապված որոշ ձևակերպումների հետ.

[173] «Առավոտ», 21 հունվարի, 2000:

«… Պաշտպանը դիմեց դատավոր Ռ. Թովմասյանին՝ «դատարանի դահլիճում եղած թղթակիցների ուշադրությունը հրավիրել դատական նիստում տեղի ունեցող խոսակցություններին, երևույթների ճիշտ մեկնաբանման անհրաժեշտության վրա»[174]:

Առհասարակ, իրավական թեմաներ լուսաբանելիս տեղեկատվության անմատչելիության կողքին, այնուամենայնիվ, կա որոշակի բաց. խոսքը ժամանակի (հեռուստատեսություն և ռադիո) և տարածքի (տըպագիր մամուլ) սահմանափակությունն է: Սրանով պայմանավորված՝ դատական լսումների եթերային լուսաբանումը ոչ միշտ է լիարժեք լինում. շատ փաստեր անտեսվում են: Մամուլում մեղադրանքների և գործին առնչվող այլ փաստերի վերաշարադրումը ևս բավարար չէ: Այստեղ էլ շատ մանրամասներ դուրս են մնում կամ չեն ընկալվում: Ինչ վերաբերում է գործի ավարտից հետո դատական նիստերի և դատավարության ընթացքն արձանագրող այլ փաստաթղթերի մատչելիությանը, նշենք, որ թե՛ ՀՀ Քրեական, թե՛ Քաղաքացիական դատավարության օրենսգրքերով նախատեսված է, որ գործի նյութերին կարող են ծանոթանալ միայն կողմերը: Այլ կերպ ասած՝ այլ անձանց, այդ թվում՝ լրագրողների համար դրանք անհասանելի են: Իսկ ահա «Իրավական թեմաներ լուսաբանող լրագրողների վարքագծի կանոնագրքի» սկզբունքներից մեկը վերաբերում է տեղեկատվություն ձեռք բերելու օրինականությանը: Մասնավորապես նկատի են առնվում «կաշառատվությունը, գողությունը, շանտաժը, խաբեությունը, ինչպես նաև վընստահությունը չարաշահելը»[175]:

Այսօր մեր իրականության դաժան երևույթներից մեկն էլ <u>ահաբեկչությունն</u> է, ինչի լուսաբանումն ինքնին վտանգավոր է և շատ բարդ, քանզի գործ ունենք մարդկային գործոնի ու անհատի հոգեկան վիճակի հետ: Ահաբեկչական և պատերազմական գործողությունների և, առհասարակ, կոնֆլիկտային իրավիճակների լուսաբանումն այնքան հրատապ ու կարևոր խնդիր է, որ ժուռնալիստական տարբեր սեմինար–քննարկումների, գիտաժողովների ժամանակ առանձին քննարկման առարկա են դառնում վերջիններիս լուսաբանման թույլատրելի ու անթույլատրելի սահմանները[176]:

---

[174] «Առավոտ», 18 մարտի, 2000:

[175] Իրավական թեմաներ լուսաբանող լրագրողների վարքագծի կանոնագիրք, «Ֆեմիդա» ՀԿ, Երևան, 2002:

[176] ԵՊՀ-ի ժուռնալիստիկայի Հայկական դպրոցի կազմակերպած դասընթացներից մեկի ժամանակ (Երևան, 23 օգոստոսի, 2007) մեր այն հարցին, թե մասնագիտական էթիկայի տեսանկյունից որքանո՞վ է ճիշտ պատերազմական ու ահաբեկչա-

Էստոնիայի Էստեպոնա քաղաքում հոկտեմբերին տեղի ունեցած լրատվական գործակալությունների համաշխարհային կոնգրեսում տարբեր երկրների ներկայացուցիչների կողմից ընդունվել է ուղերձ՝ ուղղված լրագրողական հանրությանը, որում դատապարտվում են վանդալիզմի, ահաբեկչական, կրոնական ֆանատիզմի, քսենոֆոբիայի և հակամարդկային այլ դրսևորումները: Իսկ լրատվամիջոցների ներկայացուցիչներին կոչ է արվում «ցուցաբերել առավելագույն մասնագիտական էթիկա, նպաստել տոլերանտ գիտակցության ու վարքագծի ձևավորմանը, կրոնական հանդուրժողականությանը և խաղաղասիրությանը, տարբեր տեսակի ծայրահեղականության դրսևորումների կանխարգելմանը»[177]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման իրավիճակների լուսաբանումն իր ոչ դրական ազդեցությունը կարող է ունենալ հասարակության տարբեր անդամների վրա, ճիշտ կլինի ներկայացնել միայն տեղի ունեցածը, իսկ ահաբեկիչների ու հանցագործների մասին պատմելը տեղին չէ: Վտանգը, որ նրանց ընդօրինակել ցանկացողներ կլինեն, մեծ է:

Այսպիսով, ժուռնալիստական էթիկայի տարաբնույթ սկզբունքների խախտումներից խուսափելու կարևոր նախապայմանը լրագրողական բարձր պրոֆեսիոնալիզմն է, լրջությունը սեփական գործի հանդեպ, բարեկիրթ վարվելակերպը, զսպվածությունը, համամարդկային բարոյական արժեքների հանդեպ հարգանքը: Իսկ մամուլի հրապարակումների շուրջ անցանկալի բախումները կրճատելու կամ առհասարակ բացառելու համար Հայաստանի լրագրողական շրջանակներում մի կողմից պետք է հստակ գիտակցեն ժուռնալիստական էթիկայի անհրաժեշտությունն ու կարևորությունը (ցանկալի կլինի, որ մյուս լրատվամիջոցներն էլ, հետևելով «Առավոտ»-ի օրինակին, ընդունեն էթիկայի իրենց կանոնագիրը), մյուս կողմից՝ սահմանազատեն «թույլատրելին» ու «անթույլատրելին»: Հակառակ դեպքում, անգամ կատարյալ օրենքի առկայությունը չի օգնի: Եվ քանի դեռ ոլորտում առկա թերությունները չեն շտկվի ու բացը չի լրացվի, լրատվամիջոցների հետ նման բախումները շարունակական բնույթ

կան գործողությունների լուսաբանումը, իրաքյան պատերազմը լուսաբանած ամերիկացի լրագրող Փոլ Քուին Ջաջը պատասխանեց. «Էթիկայի տեսակետից շատ կարևոր է մշտապես հարցնել, թե ահավոր, արյունոտ լուսանկարների տպագրումն ու կադրերի ցուցադրումն իրո՞ք անհրաժեշտ է, տեղին, թե՞ պարզապես հնարք է՝ ավելի շատ թերթ վաճառելու կամ մեծացնելու լսարանի թիվը»:

[177] «Հայաստանի Հանրապետություն», 6 նոյեմբերի, 2007:

կունենան: Ավելին, համոզված ենք, որ իրեն և իր մասնագիտությունը հարգող ցանկացած լրագրող միշտ կպայքարի սեփական «ես»-ի, սեփական սկզբունքների պահպանման համար՝ զերծ մնալով որևէ մեկին վարկաբեկելու, կեղծ լուրեր տպագրելու միջոցով «հեղինակություն» ձեռք բերելու գայթակղությունից:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ժուռնալիստական էթիկան առանձին կատեգորիաների, սկզբունքների ու նորմերի հանրագումար է, որտեղ կարևորվում են՝

- մասնագիտական պատասխանատվությունը և արժանապատվությունը,
- լրագրողներին ներկայացվող պահանջները,
- առանձին դեպքերի համար լրագրողի պահվածքի կանոնները:

Այս պահանջներին համապատասխան գործելը նպաստում է նաև ժուռնալիստական էթիկայի կանոնագրերի հիմքում ընկած հարաբերությունների՝ *լրագրող-ընթերցող, լրագրող-տեղեկատվության աղբյուր, լրագրող-հերոս, լրագրող-պետություն, լրագրող-գործընկեր,* կարգավորմանը, հաստատմանը և ամրապնդմանը: Չէ՞ որ լրագրողի աշխատանքում պրոֆեսիոնալիզմի կողքին նույնքան կարևոր է լրագրողի պատասխանատվության հարցը: Այն նպաստում է խուսափել մարդկանց վարկաբեկելու, ստահոդ լուրեր, ասեկոսեներ, բամբասանքներ տարածելու «ցանկությունից»:

Մյուս կողմից ժուռնալիստական էթիկան պետք է դիտարկել *«լրագրողի էթիկայի»* և *«մասնագիտական էթիկայի»* համատեքստում՝ հաշվի առնելով հանգամանքը, որ գործ ունենք թե՛ լրագրող անհատի բարոյական հատկանիշների, թե՛ մասնագիտության առանձնահատկությունների, նրա գործունեությունը կանոնակարգող կանոնների ու սկզբունքների հետ:

Տարբեր կանոնագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ սկզբունքների ու չափանիշների ընդունումը ինքնանպատակ չէ, և դրանց համար հիմք են հանդիսացել լրագրողների պրակտիկայում արձանագրված խախտումները, չարաշահումներն ու դրանց հետևանքով առաջացած տարաձայնությունները: Եթե մեր բոլոր լրատվամիջոցներն ընդունեն էթիկայի սեփական կանոնագրեր, կբարձրանա ոչ միայն սեփական գործի ու լսարանի հանդեպ լրագրողի պատասխանատվությունը, այլև հասարակության վստահությունը լրատվամիջոցների հանդեպ:

Ի վերջո, համալիր միջոցառումների արդյունքում միայն կարելի է լուրջ ձեռքբերումների հասնել, ավելի ամրապնդել ժողովրդավարության, խոսքի և մամուլի ազատության հիմքերը:

ՀԱՎԵԼՎԱԾ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՏԱՐԲԵՐԱԿ

Հիմք ընդունելով ատենախոսության մեջ ներկայացված մեր կողմից ուսումնասիրված տարբեր երկրների լրատվամիջոցների ու լրագրողական կազմակերպությունների էթիկայի կանոնագրերը, ինչպես նաև ՀՀ Սահմանդրությունն ու մեզանում գործող էթիկայի կանոնագրերը՝ առաջարկում ենք ժուռնալիստական էթիկայի կանոնագրի մեր տարբերակը: Այն է՝

1. Լրագրողներն իրենց գործունեության ընթացքում պետք է ապահովեն լսարանի՝ օբյեկտիվ, ճշգրիտ, հստակ տեղեկատվություն ստանալու իրավունքը: Սուբյեկտիվությունը չպետք է խանգարի տեղեկատվության ճշգրիտ մատուցմանը:
2. Լրագրողը պարտավոր է հարգել տեղեկատվության իր աղբյուրը: Հնարավորության դեպքում խուսափել տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու խոստում տալուց: Եթե չկա այլընտրանք՝ ձեռք բերելու անհրաժեշտ տեղեկատվությունը, պահել աղբյուրը չբացահայտելու խոստումը:
3. Հարգելով սեփական անձն ու մասնագիտությունը՝ խուսափել վիրավորական, զրպարտիչ, ուրիշի պատիվն ու արժանապատվությունը վիրավորող տեղեկություններ տպագրելուց: Ուրիշի մասնավոր կյանքը, ինտիմ հարաբերությունները չդարձնել հասարակության սեփականությունը: Մասնավոր կյանքի մասին տեղեկությունների հրապարակումն արդարացված կարող է լինել այնքանով, որքանով վերաբերում է հասարակության ընդհանուր շահերին և բխում է օրենքից:
4. Չի կարելի մարդուն լուսանկարել, ձայնագրել առանց նախապես այդ մասին նրան զգուշացնելու: Սակայն եթե դա բխում է զուտ հասարակական շահերից, կա լուրջ հիմնավորում, թույլատրելի է՝ խմբագրության համաձայնության առկայության դեպքում:
5. Խուսափել կրոնական, ռասայական, ազգային անհանդուրժողականություն, թշնամանք հրահրող հրապարակումներ տպագրելուց:
6. Անհրաժեշտ է հարգել ինչպես իր լրատվամիջոցի, այնպես էլ մրցակից լրատվամիջոցների կոլեգաների իրավունքները: Երբեք սեփական լրատվամիջոցը ամբիոն չդարձնել միմյանց վիրավորելու, քննադատելու, տարաձայնությունները պարզելու համար: Լինել զուսպ, կոռեկտ, հավասարակշված:

7. Չընդունել թանկարժեք նվերներ, անվճար հյուրասիրություն կամ այնպիսի ծառայություն, որի համար հետագայում պարտադրված կզգաք:
8. Անընդունելի է գրագողությունը:
9. Մերժելի է լրագրողի կողմից իր մասնագիտական սկզբունքների ու պարտավորությունների անտեսումը, ոտնահարումը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անանյան Գ., Արդի հայ մամուլի լույսն ու ստվերը, Երևան, 2001, 62 էջ:
2. «Արտիկլ 19», Ձանգվածային լրատվության միջոցներ, Օրենքներ և պրակտիկա, Երևան, 1999, 190 էջ:
3. Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ, Լոնդոն, 2005, 48 էջ:
4. Բերտրան ժան-Կլոդ, Մամուլի ազատության պաշտպանության երաշխիքներ, Լրատվական էթիկայի և պատասխանատվության համակարգեր, Երևան, 2000, 209 էջ:
5. Դոյդոյան Շ., Սահմանադրությունը մամուլի ազատության երաշխավոր, Երևան, 2001, 113 էջ:
6. Դոյդոյան Շ., ՁԼՄ և օրենսդրություն, Երևան, 2007, 217 էջ:
7. Ձանգվածային տեղեկատվության բնագավառը Եվրոպայի խորհրդի փաստաթղթերում, Երևան, 2003, 258 էջ:
8. Ժուռնալիստիկա, Տեսության և պատմության հարցեր,Պրակ Ա, Երեվան, 2000, 252 էջ:
9. Ժուռնալիստիկա, Տեսության և պատմության հարցեր, Պրակ Դ, Երեվան, 2003, 245 էջ:
10. Իրավունք, էթիկա և մասնագիտական հմտություններ հետաքննող լրագրողների համար, Երևան, 2008, 226 էջ:
11. Լեոնարդ Ռեյ Թիլ, Ռոն Թեյլոր, Դեպի խմբագրություն, Ժուռնալիստիկայի ներածություն, Երևան, 2005, 286 էջ:
12. Մելվին Մենչեր, Լրագրության հիմունքներ, Երևան, 2005, 435 էջ:
13. Մինասյան Ռ., Դատավճիռ, Երևան, 2003, 366 էջ:
14. Քաղաքական պայքարը և լրագրողի մասնագիտական բարոյականությունը, Երևան, 2000, 155 էջ:
15. Авраамов Д. С., Профессиональная этика журналиста, М.,1999, 206 с.
16. Апресян Р. Г., Гусейнов А. А., Этика: Энциклопедический словарь, М., 2001, 308с.
17. Базылев В. Н., Бельчиков Ю. А., Леонтьев А. А., Сорокин Ю. А., Предварительские материалы по исследовательской теме, оскорбление и ненормативность в текстах средств массовой информации,М.,1999, 352 с.
18. Беспалова А. Г., История мировой журналистики, Ростов-на Дону, 2000, 570 с.

19. Брайант Д., Томпсон С., Основы воздействия СМИ, Москва- Санкт-Петербург-Киев, 2004, 425 с.
20. Ворошилов В. В., Журналистика, Санкт-Петербург, 2002, 655 с.
21. Герман Шварц, Чарльз Браун, Судьи и журналисты в странах восточной Европы в переходе к демократии, Freedom House, Киев, 1998, 306 с.
22. Дзялошинский И. М., Журналист и информация, Правознать, 1999, №11, 227с.
23. Засурский Я. Н., Вартанова Е. Л., Засурский И. И., Рихтер А. Г., Средсва массовой информации постсоветской России, М., 2002, 262 с.
24. Лазутина Г. В., Профессиональная этика журналиста, М., 2002, 206 с.
25. Защита журналистских источников: сравнительное законадательство и юриспруденция, Артикль 19, Апрель, 1995, 153 с.
26. Монро Прайс, Питер Круг, Благоприятная среда для свободных и независимых средств массовой информации, М., 2001, 259 с.
27. Муратов С. А., Нравственные принципы тележурналистики, Фонд защиты гласности, М., 1997, 211 с.
28. Олсон Э., Проблемы журналистской этики в теории и практике СМИ посткоммунистической Росии, М.,1999, 241 с.
29. Прохоров Е. П., Введение в теорию журналистики, Рип-холдинг, М., 2000, 306 с.
30. Профессиональная этика журналиста, Фонд защиты гласности, М., 2002, 470 с.
31. РубиновА.З., Частная жизнь журналиста, М., 1994. 275 с.
32. Савельев Н. Б., Защита авторских и смежных прав, М., 2002, 286 с.
33. Самоуправления журналиста, М., 2001, 152 с.
34. Свитич Л. Г., Профессия журналист, М., 1996, 263 с.
35. Тешлюк В. М., Этика журналистского творчества, М., 1980, 210с.
36. Тертычный А. А., Жанры периодической печати, М., 2002, 319 с.
37. Туманов В. А., Европейский суд по правам человека, НОРМА, М., 2001, 225 с.
38. Хоружий С.С., Этиканауки, М., ИФРАН, 2007, 285с.
39. Этика СМИ, ИТД КноРус, М., 2003, 257 с.
40. A. David Gordon, John Michael Kittross, Controversies in media ethics, 2-ed edition, Longman, New York, 1998, 316 pages.
41. Clifford G. Christians, Kim B. Rotzoll, Mark Fakler. Media Ethics. Longman Ink. NY, 1987, 307 pages.

42. Kent R. Middleton, Bill F. Chamberlin, The law of Public Communication, Longman, 1992, 309 pages.
43. Media Ethics, 4th Edition, London, 2002, 312 pages.
44. Media lawyers as Factors in the Ethical Decisions of Journalists, NY, p. 204.
45. McQuail D., McQuail`s Mass Communication Theory/4th Edition, London, Sage, 2000, 263 pages.
46. Philip Patterson and Lee Wilkins, Media ethics: Issues and Cases, 4th ed., p. 24**2.**
47. W. Shrum, Soviet Comunistic Press, 221 pages.
48. Zelehzny, Communications law, Liberties, Restraints and the modern media, 4-th edition, Australia, Canada, Mexico, Singapore, Spain, UK, US, 2004, 544 pages.

Բ. ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳՐԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ԱԿՏԵՐ

1. ԵՊՀ, էթիկայի կանոնագիր, Երևան, ընդունված 2002–03 թթ. ուս.տարում:
2. Երևանի մամուլի ակումբի էթիկայի կանոնագիր, Երևան, 1995:
3. Իրավական թեմաներ լուսաբանող լրագրողի վարքագծի կանոնագիրք, Երևան, 2002:
4. Իրավական ուղեցույց հեռարձակողների համար, Երևան, 2004, 203 էջ:
5. Լրագրողների ավստրալիական ընկերակցության 1984թ. էթիկայի կանոնագիրք, հոդված 1-ին, ՀՀ իրավաբանների միության «Իրավական գիտելիքներ լրագրողներին» դասընթացի նյութեր, ԱՄՆ իրավաբանների (ABA/CEELI), Երևան, 1999:
6. Հայաստանի ժուռնալիստների միության անդամի էթիկայի կանոնագիր, Երևան:
7. Հետաքննող լրագրողների ընկերակցության էթիկայի կանոնագիր, Երևան, 2002:
8. ՀՀ Սահմանադրություն, Փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, Հոդվածներ 19; 21; 27, Երևան, 2005, 27 նոյեմբերի, 63 էջ:

9. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, Հոդված 19, Հոդված 1087, Երևան, 2005:
10. ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», Հոդված 8, Երևան, 2003:
11. ՀՀ օրենքը «Զանգվածային լրատվության մասին», Հոդված 5;8, Երեվան, 2003:
12. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, Հոդված 10, 1950:
13. Кодекс профессиональной этики журналиста (принят 1 съездом журналистов СССР на конфедеративной основе 24 апреля), 1991г., статья 2.
14. Законадательство Российской Федерации о СМИ, серия “Журналистика и Право”, выпуск 2, М., 1996, 24 с.

Գ. ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

1. «Ազգ», 1998-2010:
2. «Առավոտ»,1998-2012:
3. «Երկիր», 1998-2011:
4. «Ժամանակ Երևան», 2003-2011:
5. «Ժողովուրդ», 2012:
6. «Իրավունք», 1998-2011:
7. «Իրավունք *de facto*», 2008:
8. «Իսկական Իրավունք», 2002-2008:
9. «Հայք», 1998-2009:
10. «Հայոց աշխարհ», 1998-2010:
11. «Հայկական ժամանակ», 1998-2011:
12. «Հայաստանի Հանրապետություն», 1998-2008:
13. «Հրապարակ», 2008-2011:
14. «Չորրորդ իշխանություն», /ապա «Չորրորդ ինքնիշխանություն», /1999-2011/:
15. «Փակագիծ», 2003-2008:
16. «168 ժամ», 2004-2011:
17. www.aravot.am

18. www.evartist.narod.ru
19. **www.hetq.am**
20. **www.internews.am**
21. **www.jnews.am**
22. www.library.cjs.ru
23. www.medialaw.ru
24. www.newsombudsmen.org
25. www.poynter.org
26. www.ypc.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

ԳԼՈՒԽ 1
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ ԻԲՐԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
1.1. ԺՈՒՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԹԻԿԱ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ 6
1.2. ԶԼՄ-ՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 15
1.3. ԶԼՄ-ՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ, ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 20
1.4. ԷԹԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԵՐՆ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 31
1.5. ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 42

ԳԼՈՒԽ 2
ԷԹԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
2.1. ԷԹԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ 48
2.2. ԺՈՒՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ 55
2.3. ԷԹԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԱՆՐԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ 58
2.4. ԺՈՒՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ 63
2.5. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ 69

ԳԼՈՒԽ 3
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՈՏՆԱՀԱՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ
3.1. ԶՐՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ, ՊԱՏՎԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 79
3.2. ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 90
3.3. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 98

ՎԵՐՋԱԲԱՆ 104

ՀԱՎԵԼՎԱԾ 105

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 107

ՎԱՐԴՈՒՀԻ ԳԵՎՈՐԳԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

բանասիրական գիտությունների թեկնածու է, դասախոսում է Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում: Դասախոսել է Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինսիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի լրագրության սեկտորում, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում:

Վերապատրաստվել է Ամերիկայի Ֆլորիդա նահանգի FAMU, ապա Ֆրանսիայի CFPJ համալսարաններում:

2004 թ. մարտին մասնակցել է Մայամիում Պրոֆեսիոնալ լրագրողների ընկերակցության (SPJ) կազմակերպած գիտաժողովին, որտեղ ներկայացրել է արդի հայ մամուլում առկա էթիկական խախտումները, դրանց հաղթահարման հնարավոր ուղիները:

2012 թ. ապրիլի 11-ին «Ինտերնետի իրավական կարգավորումը» զեկույցով հանդես է եկել Հայկական օնլայն լրատվամիջոցների և Լրագրողների ասոցիացիայի հետ համատեղ կազմակերպված միջազգային միջբուհական գիտաժողովին:

Հեղինակ է 7 գիտական հոդվածների, մի շարք լրագրողական նյութերի:

Ամուսնացած է, ունի 2 զավակ: